1.2.4. **Գնման վերաբերյալ փաստաթղթեր** (մրցութային փաստաթղթեր, աճուրդի վերաբերյալ փաստաթղթեր, առաջարկների հարցման վերաբերյալ փաստաթղթեր)՝ փաստաթղթերի փաթեթ, որը պարունակում է ամբողջական տեղեկատվություն մրցակցային գնման անցկացման առարկայի, պայմանների և կանոնների, գնման ընթացակարգերի մասնակցի կողմից մրցակցային գնման մասնակցության հայտերի ձևակերպման և ներկայացման, հայտերի գնահատման, համադրման չափանիշների և կարգի, ինչպես նաև մրցակցային գնման արդյունքներով կնքվող պայմանագրի պայմանների մասին:

1.2.5. **Գազամատակարարման միասնական համակարգ (ԳՄՀ)**՝ գույքային արտադրական համալիր, որը բաղկացած է տեխնոլոգիական, կազմակերպչական և տնտեսական առումով փոխկապակցված և կենտրոնացված ձևով կառավարվող արտադրական և այլ՝ գազի արդյունահանման, փոխադրման, պահպանման և մատակարարումների համար նախորոշված օբյեկտներից և գտնվում է «Գազապրոմ» ՀԲԸ-ի սեփականության ներքո:

1.2.6. **Պատվիրատու՝** «Գազապրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն:

1.2.7. **Գնում մրցակցային հիմունքով (մրցակցային գնում)**՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների (մրցութ, առաջարկների հարցում, աճուրդ) գնման միջոց, որի դեպքում մատակարարը (կապալառուն, կատարողը), որն ի վիճակի է

մատակարարելու ապրանքներ, կատարելու աշխատանքներ, մատուցելու ծառայություններ՝ գնման առարկային և դրա պայմաններին համապատասխան, ընտրվում է մրցողունակության սկզբունքներով (մրցակցային հիմունքով):

1.2.8. **Փակ մրցակցային գնում**՝ մրցութային գնում, որի մասին տեղեկությունները, այդ թվում գնման անցկացման ժամանակ ձևակերպվող փաստաթղթերը, արձանագրությունները, ենթակա չեն հրապարակման զանգվածային լրատվական միջոցներում և բաց մուտքով համացանցում տեղադրման, որի մասնակցելուն հրավիրվում է անձանց սահմանափակ շրջանակ:

1.2.9. **Բաց մրցակցային գնում**՝ մրցակցային գնում, որի անցկացման մասին տեղեկատվությունը հաղորդվում է անձանց անսահմանափակ շրջանակի:

1.2.10. **Գնում միակ մատակարարից (կապալառուից, կատարողից)**՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման միջոց, որի ժամանակ Պատվիրատուն առաջարկում է կնքել պայմանագիր միայն մեկ մատակարարի (կապալառուի, կատարողի) կամ ընդունում է պայմանագրի կնքման առաջարկ մեկ մատակարարից (կապալառուից, կատարողից)՝ սույն Կարգով նախատեսված դեպքերում:

1.2.11. **Առաջարկների հարցում**՝ մրցակցային գնում, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465 հոդվածների համաձայն չի հանդիսանում սակարկություն (մրցույթ, աճուրդ) կամ հրապարակային մրցույթ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1043-1047 հոդվածների համաձայն, որի անցկացման կանոնները կանոնակարգվում են սույն Կարգով և առաջարկների հարցման անցկացման արդյունքներով կարող է որոշվել մասնակցության լավագույն հայտը, որը պարունակում է ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման ծառայությունների մատուցման լավագույն պայմանները, որը ներկայացվել է այն մասնակցի կողմից, որն առավել ամբողջական է համապատասխանում առաջարկների հարցման վերաբերյալ փաստաթղթերի պահանջներին, և կնքվել է պայմանագիր:

1.2.12. **Մրցակցային գնմանը մասնակցելու հայտ** (մրցութային մասնակցելու հայտ/մրցութային հայտ, աճուրդին մասնակցելու հայտ, առաջարկների ներկայացման հարցմանը մասնակցելու հայտ)՝ պայմանագրի կնքման վերաբերյալ գնման ընթացակարգերի մասնակցի առաջարկը պարունակող փաստաթղթերի փաթեթ՝ ուղղված Կազմակերպչին՝ գնման վերաբերյալ փաստաթղթերով սահմանված ձևով և կարգով:

1.2.13. **Գնման նախաձեռնող**՝ գնմանը հետաքրքրված և դրա անցկացումը նախաձեռնող Պատվիրատուի կառուցվածքային ստորաբաժանում:

1.2.14. **Հանձնաժողով (մրցութային, աճուրդային, առաջարկների հարցումների արդյունքների ամփոփման)**՝ Կազմակերպչի («Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ մրցութային գնումների նախապատրաստման և անցկացման աշխատանքներն իրականացնող դեպարտամենտի, ստորաբաժանման) կողմից ձևավորվող և հաստատվող

հանձնաժողով՝ ստեղծված մրցութային գնումների արդյունքների ամփոփման, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում գնման առանձին փուլերի և ընթացակարգերի արդյունքների ամփոփման նպատակով:

1.2.15. **Գազաբյուրոն Խմբի ընկերություններ՝** Սույն Կարգի կիրառման շրջանակներում Գազաբյուրոն Խմբի ընկերությունների շարքին են դասվում ներքոնշյալ ընկերություններն ու կազմակերպությունները.

-«Գազաբյուրոն» ԶԲԸ-ի դուստր ընկերությունները,

-«Գազաբյուրոն» ԶԲԸ-ի դուստր ընկերությունների դուստր ընկերությունները,

-այն ընկերություններն ու կազմակերպությունները, որոնց կանոնադրական կապիտալում «Գազաբյուրոն» ԶԲԸ-ն իր դուստր ընկերությունների և/կամ «Գազաբյուրոն» ԶԲԸ-ի դուստր ընկերությունների դուստր ընկերությունների հետ համատեղ տիրապետում են 50%-ից ավել բաժնեմասերին (արժեթղթերին),

- դուստր չհանդիսացող ընկերություններ և կազմակերպություններ, որոնց ֆինանսական հաշվետվությունը ներառվում է «Գազաբյուրոն» ԶԲԸ-ի կոնսոլիդացված հաշվետվությանը՝ ֆինանսական հաշվետվության միջազգային ստանդարտին (ՖՀՄՍ) համապատասխան:

1.2.16. **Մրցույթ՝** ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնման միջոց, որում հաղթող է ճանաչվում այն անձը, որը Կազմակերպչի կողմից ստեղծված մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ, առաջարկել է պայմանագրի կատարման լավագույն պայմանները:

1.2.17. **Լոտ՝** սահմանված չափանիշներով առանձնացված գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մաս, որին գնման մասին ծանուցմամբ և փաստաթղթերով թույլատրվում է ներկայացնել մրցակցային գնման մասնակցության առանձին հայտ և կնքել առանձին պայմանագիր՝ ըստ մրցակցային գնման արդյունքների:

1.2.18. **Պայմանագրի (գնման առարկայի) սկզբնական (առավելագույն) գին՝** գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների առավելագույն գին:

1.2.19. **Էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատոր՝** անձ (իրավաբանական անձ՝ անկախ նրա կազմակերպական-իրավական ձևից, սեփականության ձևից, գտնվելու և կապիտալի ձևավորման վայրից կամ ֆիզիկական անձ՝ որպես անհատ ձեռներեց), որի պետական գրանցումն իրականացվել է Հայաստանի Հանրապետության տարածքում սահմանված կարգով, որը տիրապետում է էլեկտրոնային առևտրային հարթակին, իր գործելու համար անրաժեշտ ծրագրային, գործիքային միջոցներին և ապահովում է էլեկտրոնային առևտրային հարթակում գնումների անցկացումը էլեկտրոնային ձևով:

1.2.20. **Մրցակցային գնման կազմակերպիչ (Կազմակերպիչ)**՝ «Գազպրոմ» ՀԲԸ (Դեպարտամենտ), «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ (Մրցակցային գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանում), որոնք իրականացնում են մրցակցային գնումների կազմակերպման և անցկացման ընթացակարգերը:

1.2.21. **Նախաորակավորման կազմակերպիչ**՝ «Գազպրոմ» ՀԲԸ (Դեպարտամենտ):

1.2.22. **Գնումների տեղեկատվական համակարգ (ԳՏՀ)**՝ տեղեկատվական համակարգ գնումների ոլորտում՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների, այդ թվում՝ գնումների պլանի¹ վերաբերյալ տեղեկատվության տեղադրման համար:

1.2.23. **Նախաորակավորում**՝ Գազպրոմ խմբի կողմից անցկացվող գնումների պոտենցիալ մասնակիցների որոշման բաց ընթացակարգ, որոնք ունակ են ապրանքների արտադրական գործընթացի, որակի և անվտանգության, աշխատանքների և ծառայությունների արդյունքների նկատմամբ սահմանված պահանջներին համապատասխան կատարելու (մատուցելու) աշխատանքների (ծառայությունների) որոշակի տեսակներ, իրականացնելու որոշակի ապրանքների մատակարարում, որի արդյունքներով ձևավորվում է Գազպրոմ խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանը՝ ըստ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների տեսակների:

1.2.24. **Նախնական ընտրություն**՝ մրցակցային մեկ գնման շրջանակներում պոտենցիալ այն մասնակիցների ընտրության ընթացակարգ, որոնք ունեն որակավորման անհրաժեշտ մակարդակ մրցակցային գնման առարկային համապատասխան պարտականությունները առաջիկայում կատարելու համար, որոնք համապատասխանում են Պատվիրատուի կողմից սահմանված որակավորման պահանջներին և իրավունակության ներկայացվող պահանջներին: Նախնական ընտրությունն անցած գնման ընթացակարգերի մասնակիցները հրավիրվում են մասնակցելու մրցակցային գնմանը:

1.2.25. **Մրցակցային գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանում**՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում, որը ստեղծվել է մրցակցային գնումների կազմակերպման և անցկացման գծով գործառույթների, մրցակցային գնումների կազմակերպման և անցկացման հետ կապված այլ գործառույթներ իրականացնելու նպատակով, ինչպես նաև այն դեպքում, եթե այդպիսի ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում չի ստեղծվել՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում կամ պաշտոնատար անձ, որը պատասխանատու է մրցակցային

¹ ՀՀ ֆինանսների նախարարության կայքը տեղեկատվական-հեռահաղորդակցական համացանցում՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների վերաբերյալ տեղեկատվության տեղադրման համար (www.gnumner.am)

գնումների կազմակերման և անցկացման և այլ գործառնությունների իրականացման համար, որոնք կապված են մրցակցային գնումների կազմակերպման և անցկացման հետ:

1.2.26. **«Հրազդան-5» կայան` Հրազդանի ՋԷԿ-ի 5-րդ էներգաբլոկ:**

1.2.27. **Սակարկություն`** գնման մասնակիցների կողմից գնման մասնակցության հայտերի գների ինքնակամ իջեցում Պատվիրատուի կողմից նմանատիպ հայտերի բացման ընթացակարգից հետո` Պատվիրատուի համար նման հայտերի նախապատվությունը բարձրացնելու նպատակով: Սակարկությունը կարող է անցկացվել միայն այն դեպքում, եթե դրա անցկացման հնարավորության մասին տեղեկատվությունը նախատեսված է գնման վերաբերյալ փաստաթղթերում:

1.2.28. **Աճուրդի մասնակից (գնման մասնակից)`** Գնման ընթացակարգի մասնակից, որը Կազմակերպչին ներկայացրել է աճուրդին մասնակցելու հայտ` աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված կարգով, որի վերաբերյալ աճուրդային հանձնաժողովի կողմից ընդունվել է որոշում աճուրդին մասնակցելու թույլտվության և աճուրդի մասնակից ճանաչելու մասին:

1.2.29. **Մրցույթի մասնակից, առաջարկների հարցման մասնակից (գնման մասնակից)`** գնման ընթացակարգի մասնակից, որը Կազմակերպչին ներկայացրել է մրցույթին, առաջարկների հարցմանը մասնակցելու հայտ` գնման վերաբերյալ ծանուցմամբ, փաստաթղթերով սահմանված կարգով:

1.2.30. **Գնման ընթացակարգերի մասնակից`** ցանկացած իրավաբանական անձ կամ մի քանի իրավաբանական անձիք, որոնք հանդես են գալիս գնման ընթացակարգերի մեկ մասնակցի կողմից` անկախ կազմակերպական-իրավական ձևից, սեփականության ձևից, գտնվելու և կապիտալի ձևավորման վայրից կամ ցանկացած ֆիզիկական անձ կամ մի քանի ֆիզիկական անձիք, որոնք հանդես են գալիս գնման ընթացակարգերի մեկ մասնակցի կողմից, այդ թվում` անհատ ձեռներեց կամ մի քանի անհատ ձեռնարեցներ, որոնք հանդես են գալիս գնման ընթացակարգերի մեկ մասնակցի կողմից, համապատասխանում են սույն Կարգին համապատասխան սահմանված պարտադիր պահանջներին, որոնցից կազմակերպիչը ստացել է գրավոր (կամ էլեկտրոնային փաստաթղթի տեսքով) ծանուցում գնման ընթացակարգերին մասնակցելու մտադրության վերաբերյալ կամ գնման վերաբերյալ փաստաթղթերի հարցում կամ հարցում գնման մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանման վերաբերյալ:

1.2.31. **Աճուրդի քայլ`** պայմանագրի նախնական գնի իջեցման/բարձրացման մեծությունը:

1.2.32. **Էլեկտրոնային ստորագրություն (ԷՍ)`** Էլեկտրոնային ձևով տեղեկատվություն, որը միացված է էլեկտրոնային ձևով այլ տեղեկատվության (ստորագրվող տեղեկատվության) կամ այլ կերպով կապված է այդպիսի տեղեկատվության հետ և որն օգտագործվում է տեղեկատվությունը ստորագրող անձին որոշելու համար:

Էլեկտրոնային փաստաթղթին և ԷՍ–ին վերաբերող այլ սահմանումները և որոշումները կիրառվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

1.2.33. **Էլեկտրոնային առևտրային հարթակ**՝ էլեկտրոնային տեղեկատվական համակարգ, որի ծրագրային-գործիքային համալիրը կարող է տեղեկատվական-հեռահաղորդակցական համացանցում ապահովել գնումների անցկացումը էլեկտրոնային եղանակով:

1.2.34. **Էլեկտրոնային փաստաթուղթ**՝ էլեկտրոնային ձևով տեղեկատվություն՝ ստորագրված որակավորված էլեկտրոնային ստորագրությամբ կամ փաստաթուղթ, որում տեղեկատվությունը ներկայացված է էլեկտրոնային-թվային ձևով՝ ստորագրված որակավորված էլեկտրոնային ստորագրությամբ, որի իրավաբանական ուժի ճանաչման պայմաններն ու կարգը սահմանված են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

1.2.35. **Գնում էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային գնում)**՝ գնման գործընթացի անցկացման ձև, որի պարագայում փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթերի տեսքով՝ էլեկտրոնային փոստի և/կամ էլեկտրոնային առևտրային հարթակի և/կամ էլեկտրոնային թվային կրիչների վրա, ինչպես նաև էլեկտրոնային այլ կապի միջոցների օգնությամբ:

1.2.36. **Պատվիրատուի կայք**՝ կայք տեղեկատվական-հեռահաղորդակցական համացանցում, որտեղ տեղադրվում է Պատվիրատուի կողմից իրականացվող գնումների վերաբերյալ տեղեկատվությունը:

1.2.37. **«Գազպրոմ» ՅԲԸ էլեկտրոնային գնումների ավտոմատացված համակարգ (ԷԳԱՀ)** - Գազպրոմ խմբի գնումների գործունեության գործարար-գործընթացների աջակցությունն ապահովող, ինչպես նաև էլեկտրոնային առևտրային հարթակի (www.zakupki.gazprom.ru) գործառույթն իրականացնող ավտոմատացված համակարգ:

1.3. Գազպրոմ խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմինը

Գազպրոմ խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմինը «Գազպրոմ» ՅԲԸ-ի կառուցվածքային ստորաբաժանումն է, որը ստեղծվել է Գազպրոմ խմբի գնման գործունեության միասնական քաղաքականության իրականացման նպատակով՝ սույն Կարգով սահմանված սկզբունքներին համապատասխան:

Գազպրոմ խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմինը իրականացնում է հետևյալ գործառույթները.

1.3.1. Գազպրոմ խմբի մրցակցային գնումների պլանավորում, որի շրջանակներում.

1.3.1.1. Ձևավորում և հաստատում է Գազպրոմ խմբի մրցակցային գնումների տարեկան պլանը, նրա մեջ արվող եռամսյակային փոփոխություններն ու լրացումները՝ ընկերության և Գազպրոմ խմբի ընկերությունների կառուցվածային ստորաբաժանումների առաջարկությունների հիման վրա:

1.3.1.2. Սահմանում է գնումների եղանակները՝ սույն Կարգին համապատասխան:

1.3.1.3. Որոշում է «Գազպրոմ» ՉԲԸ և Գազպրոմ ԽճԻ ընկերությունների կարիքների համար անցկացվող մրցակցային գնումների Կազմակերպիչներին:

1.3.1.4. Առաջարկներ կամ հրահանգներ է տալիս գնումների Նախաձեռնողին պլանավորվող մրցակցային գնումների լոտերի ձևավորման համար, անհրաժեշտության դեպքում ինքնուրույն ձևավորում է լոտերը:

1.3.1.5. Անց է կացնում Գազպրոմ ԽճԻ կողմից գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների շուկայի մարքեթինգային հետազոտություն:

1.3.2. Պատվիրատուի և Կազմակերպչի փոխազդեցության կարգի որոշում, գործառույթների բաշխում նրանց միջև՝ Գազպրոմ ԽճԻ մրցակցային գնումների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման ժամանակ:

1.3.3. Նախաորակավորման կազմակերպում և անցկացում, Նախաորակավորման արդյունքներով Գազպրոմ ԽճԻ գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանի ձևավորում և վարում:

1.3.4. Մրցակցային գնումների կազմակերպում և անցկացում, որի շրջանակներում.

1.3.4.1. Որոշում է Պատվիրատուի (գնումների Նախաձեռնողի) կողմից ներկայացվող ելակետային տվյալների ցանկը մրցակցային գնում անցկացնելու համար՝ կախված գնման եղանակից և առարկայից:

1.3.4.2. Իրականացնում է մրցակցային գնում անցկացնելու և Հանձնաժողովի կազմի վերաբերյալ կառավարման փաստաթղթի նախապատրաստումն ու հաստատումը:

1.3.4.3. Մասնակցում է մրցակցային գնումների անցկացման համար անհրաժեշտ փաստաթղթերի նախապատրաստմանը: Հաստատում է գնման վերաբերյալ փաստաթղթերը և մրցակցային գնմանը մասնակցության հայտերի գնահատման չափանիշներն ու մեթոդները:

1.3.4.4. Անց է կացնում փաստաթղթերի տեխնիկական մասի վերլուծություն՝ մրցակցությունը սահմանափակող պահանջների բացակայության, ինչպես նաև գնումների առարկայի նախնական (առավելագույն) գնի հիմնավորվածության նպատակով:

1.3.4.5. Իրականացնում է սույն Կարգով նախատեսված մրցակցային գնումների կազմակերպմանն ու անցկացմանն ուղղված այլ գործառույթներ:

1.3.5. Գազպրոմ ԽճԻ գնումների գործունեության վերահսկման իրականացում:

1.3.6. Մրցակցային գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանման գործունեության կորորդինացում, որի շրջանակներում.

1.3.6.1. Տալիս է հրահանգներ Գազպրոմ Խմբի ընկերություններին՝ Մրցակցային գնումների կազմակերպման և անցկացման հարցերով:

1.3.6.2. Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի ղեկավարը իրավունք ունի հրահանգներ տալ Մրցակցային գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանման ղեկավարին պաշտոնում նշանակելու և/կամ զբաղեցրած պաշտոնից ազատելու վերաբերյալ:

Մրցակցային գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանման ղեկավարին պաշտոնում նշանակելը և/կամ զբաղեցրած պաշտոնից ազատելը ենթակա է համաձայնեցման Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի հետ:

1.4. Հանձնաժողով (մրցութային, աճուրդային, առաջարկների հարցումների արդյունքների ամփոփման հանձնաժողով):

1.4.1. Մրցութային արդյունքների ամփոփման նպատակով Կազմակերպչի կողմից ստեղծվում է մրցութային հանձնաժողով:

1.4.2. Առաջարկների հարցման արդյունքների ամփոփման նպատակով Կազմակերպչի կողմից ստեղծվում է առաջարկների հարցման արդյունքների ամփոփման հանձնաժողով:

1.4.3. Բաց աճուրդի անցկացման նպատակով Կազմակերպչի կողմից ստեղծվում է աճուրդային հանձնաժողով:

1.4.4. Հանձնաժողովի կազմը սահմանվում է Կազմակերպչի կողմից գնումների անցկացման մասին կառավարման փաստաթղթում: Հանձնաժողովի անդամների քանակը պետք է բաղկացած լինի 5 հոգուց ոչ պակաս:

1.4.5. Հանձնաժողովի կազմը ձևավորվում է Կազմակերպչի (Մրցութային գնումների նախապատրաստման ղեկարտամենտի, ստորաբաժանման) կողմից յուրաքանչյուր գնման համար առանձին՝ Հանձնաժողովի պոտենցիալ անդամների հաստատված ցանկում ընգրկված անձանց թվից:

1.4.6. «Գազպրոմ» ՀԲԸ պոտենցիալ անդամների կազմը ձևավորվում է Ղեկարտամենտի կողմից՝ «Գազպրոմ» ՀԲԸ կառուցվածքային ստորաբաժանումների առաջարկությունների հիման վրա և համաձայնեցվում է «Գազպրոմ» ՀԲԸ Վարչության նախագահի կողմից:

1.4.7. Գազպրոմ Խմբի Հանձնաժողովի պոտենցիալ անդամների կազմը ձևավորվում է Մրցութային գնումների նախապատրաստման և անցկացման ստորաբաժանման կողմից՝ Գազպրոմ Խմբի ընկերությունների կառուցվածքային ստորաբաժանումների առաջարկությունների հիման վրա, համաձայնեցվում է Ղեկարտամենտի հետ, հաստատվում է Գազպրոմ Խմբի ղեկավարի կողմից:

1.4.8. Հանձնաժողովի կազմում կարող են ներառվել ինչպես Պատվիրատուի (Կազմակերպչի) աշխատողները, այնպես էլ այլ անձիք:

Հանձնաժողովի անդամ չեն կարող լինել գնման որոշակի արդյունքներով անձնական շահագրգռվածություն ունեցող ֆիզիկական անձիք, այդ թվում մրցութային գնումներին մասնակցության հայտ ներկայացրած անձիք, հաստիքով աշխատողները կամ կառավարման մարմնի անդամներ հանդիսացող անձիք, որոնք մրցութային գնումներին մասնակցելու հայտ են ներկայացրել: Հանձնաժողովի այդպիսի անդամները պետք է ինքնաբացարկ հայտարարեն, որի վերաբերյալ նշում է կատարվում արձանագրությունում և չմասնակցեն տվյալ հարցի շուրջ քվեարկությամբ:

1.4.9. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում առաջնորդվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն Կարգով, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ ներքին (տեղական) իրավական ակտերով, ինչպես նաև Գազպրոմ Խմբում գործող` Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չհակասող նորմատիվ ակտերով:

1.4.10. Հանձնաժողովն իրավունք ունի որոշումներ ընդունել, եթե նիստին ներկա է նրա անդամների առնվազն կեսը: Հանձնաժողովը որոշումներ է ընդունում նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում Հանձնաժողովի նախագահի ձայնը որոշիչ է հանդիսանում:

1.4.11. Հանձնաժողովը որոշումներ է ընդունում գնումների ընթացակարգերի մասնակիցների նկատմամբ արդար, հավասար և օբյեկտիվ վերաբերմունքի սկզբունքների հիման վրա` հաշվի առնելով գնման վերաբերյալ փաստաթղթերում նշված հայտերի գնահատման չափանիշները:

1.4.12. Հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որը պետք է ստորագրվի Հանձնաժողովի նիստին ներկա բոլոր անդամների կողմից:

1.4.13. Սրցակցային գնումների արդյունքների վերաբերյալ հանձնաժողովի որոշումները պարտադիր են Պատվիրատուի համար:

1.4.14. Հանձնաժողովի նիստերի նախապատրաստումն իրականացնում է Կազմակերպիչը:

1.5. Գնումների մասնակիցներին ներկայացվող պահանջները

1.5.1. Գնումների անցկացման ժամանակ սահմանվում են հետևյալ պարտադիր պահանջները գնումների մասնակիցներին.

1.5.1.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համապատասխան սահմանվող պահանջներին գնումների մասնակիցների համապատասխանությունը գնումների առարկա հանդիսացող ապրանքների առաքումները, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը իրականացնող անձանց:

1.5.1.2. Գնումների մասնակցի – իրավաբանական անձի լուծարման գործընթացի բացակայությունը և գնումների մասնակցին – իրավաբանական անձին, անհատ ձեռներեցին սնանկ ճանաչելու և մրցակցային արտադրության բացման մասին դատարանի որոշումը:

1.5.1.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով գնումների մասնակցի գործունեության չդադարեցումը պայմանագրի կնքման ամսաթվի դրությամբ:

1.5.2. Գնումներն անցկացնելու ժամանակ կարող են սահմանված լինել գնման մասնակիցներին առաջադրվող հետևյալ պահանջները.

1.5.2.1. Գնման մասնակիցների կողմից մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ բացառիկ իրավունքների տիրապետումը, եթե պայմանագրի կատարման հետ կապված Պատվիրատուն ձեռք է բերում իրավունքներ մտավոր սեփականության օբյեկտների նկատմամբ, բացառությամբ գնումները գրականության կամ արվեստի (բացառությամբ ԷՅՍ-ի համար ծրագրերի, տվյալների բազայի) գործի ստեղծման, ազգային ֆիլմի վարձույթի կամ ցուցադրման ֆինանսավորման դեպքերում:

1.5.2.2. Գնումների մասնակիցների և նրանց համակատարողների (ենթակապալառուների) մասին տեղեկությունների բացակայությունը անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանում, որոնց վարումը իրականացվում է գործադիր իշխանության մարմնի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

1.5.3. Գնումներ անցկացնելու ժամանակ կարող են սահմանված լինել գնման մասնակիցներին առաջադրվող որակավորման պահանջներ, այդ թվում.

1.5.3.1. Գնման մասնակիցների մոտ համապատասխան արտադրական հզորությունների, տեխնոլոգիական սարքավորումների, ֆինանսական և աշխատանքային պաշարների, մասնագիտական իրավասության առկայությունը գնման առարկա հանդիսացող ապրանքների արտադրության (մատակարարման), աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման, ինչպես նաև դրական հեղինակության համար,

1.5.3.2. Մրցակցային գնմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտման ամսաթվին նախորդող վերջին երեք տարիների ընթացքում գնման մասնակիցների կողմից գնումների առարկա հանդիսացող ապրանքների մատակարարումներին, աշխատանքների կատարմանը (ծառայությունների մատուցմանը) համանման ապրանքների մատակարարումների իրականացում, աշխատանքների կատարում (ծառայությունների մատուցում):

1.5.4. Գնման մասնակիցներին առաջադրվող վերոնշյալ պահանջները կարող են նաև սահմանված լինել պայմանագրի կատարման համար գնման մասնակցի կողմից ներգրավված համակատարողների (ենթակապալառուների) նկատմամբ:

1.5.5. Գնումների իրականացման ընթացքում գնման մասնակիցների նկատմամբ կարող են սահմանվել սույն Կարգին չհակասող այլ պահանջներ:

1.5.6. Առաջադրվող սահմանված պահանջները գնման մասնակիցներին, ինչպես նաև պայմանագրի կատարման համար նրանց կողմից ներգրավված համակատարողներին (ենթակապալառուներին), հավասարաչափ ներկայացվում են գնման բոլոր մասնակիցներին և համակատարողներին (ենթակապալառուներին) և պետք է նշված լինեն գնման վերաբերյալ փաստաթղթերում: Չի թույլատրվում գնման մասնակիցներին և համակատարողներին (ենթակապալառուներին) առաջադրվող այլ պահանջների ներկայացում, բացի գնման վերաբերյալ փաստաթղթերով սահմանվածներից:

1.5.7. Կազմակերպիչն իրավունք ունի գնման ցանկացած փուլում ստուգելու գնման մասնակիցների և նրանց կողմից ներգրավված համակատարողների (ենթակապալառուների) համապատասխանությունը գնման վերաբերյալ փաստաթղթերում սահմանված պահանջներին, այդ թվում՝ նրանց կողմից հայտարարված արտադրական հզորությունների, տեխնոլոգիական սարքավորումների և աշխատանքային պաշարների առկայությունը:

1.5.8. Գնման մասնակցի կողմից ներկայացրած մրցակցային գնմանը մասնակցելու հայտում ոչ հավաստի տեղեկություններ, գնումների մասնակիցներին, համակատարողներին (ենթակապալառուներին) առաջադրվող՝ գնման վերաբերյալ փաստաթղթերով սահմանված պահանջներին գնման մասնակցի, ինչպես նաև պայմանագրի կատարման համար նրա կողմից ներգրավված համակատարողների (ենթակապալառուների) անհամապատասխանություն, գնման առարկա հանդիսացող ապրանքներին, աշխատանքներին, ծառայություններին ուղղված՝ գնման վերաբերյալ փաստաթղթերով սահմանված պահանջներին մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում Կազմակերպիչը հաղորդում է համապատասխան տեղեկությունները Հանձնաժողովին: Հանձնաժողովն իրավունք ունի գնումների անցկացման ցանկացած փուլում մերժելու գնման նման մասնակցի այդպիսի հայտը:

1.5.9. Մրցակցային գնումներ անցկացնելու ժամանակ Պատվիրատուն (Կազմակերպիչը).

- մրցակցային գնման վերաբերյալ փաստաթղթերում նախատեսում է Մասնակիցների կողմից իրենց սեփականատերերի, ներառյալ շահառուների (այդ թվում՝ վերջնական) շղթայի վերաբերյալ տեղեկատվություն ներկայացնելու պայման՝ համապատասխան փաստաթղթերի հաստատմամբ,

- պայմանագրի նախագծում ներառում է պայմանագրի մյուս կողմի պարտականությունների վերաբերյալ պայմանը՝ Պատվիրատուին (Կազմակերպիչին) ներկայացնելու տեղեկատվություն իր սեփականատերերի շղթայում, ներառյալ շահառուների (այդ թվում՝ վերջնական) և/կամ գործադիր մարմինների փոփոխությունների մասին, այդ փոփոխությունները կատարվելուց հետո 3 (երեք) օրացուցային օրվա ընթացքում՝ համապատասխան փաստաթղթերի հաստատմամբ, ինչպես նաև պայմաններ, որոնց համաձայն Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի կարգով հրաժարվելու պայմանագրի կատարումից՝ պայմանագրի մյուս կողմի կողմից սույն պարբերության մեջ նշված պարտականությունը չկատարելու դեպքում:

1.6. Գնումների տեղեկատվության ապահովմանն ուղղված պահանջներ

1.6.1. Սույն Կարգը, Կարգում կատարվող փոփոխությունները, ենթակա են պարտադիր տեղադրման գնումների տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան դրանց հաստատման օրվանից տասնհինգ օրվա ընթացքում:

1.6.2. Պատվիրատուն գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) տեղադրում է ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների պլանը (այսուհետ՝ **գնումների պլան**) ոչ պակաս, քան մեկ տարի ժամկետով՝ գնումների

տեղեկատվական համակարգում (ԳՏՀ)՝ այդպիսի պլանի ձևավորման կարգին, տեղադրման կարգին և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանվող ժամկետներին համապատասխան:

1.6.3. Գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) տեղադրվում է տեղեկատվություն բաց մրցակցային գնման վերաբերյալ, այդ թվում՝ գնման վերաբերյալ ծանուցում, գնման վերաբերյալ փաստաթղթեր, գնման վերաբերյալ ծանուցման անբաժանելի մաս հանդիսացող պայմանագրի նախագիծը, այդ ծանուցման և այդ փաստաթղթերի մեջ կատարվող փոփոխությունները, այդ փաստաթղթերի պարզաբանումները, արձանագրությունները, որոնք կազմվում են գնումների գործընթացի ժամանակ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված տեղեկատվություն և փաստաթղթեր:

Փաստաթղթերի և տեղեկատվության տեղադրումը գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) ապահովում է Պատվիրատուն:

1.6.4. Գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) տեղադրման ենթակա չեն.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված գնումների մասին տեղեկությունները, այդ թվում՝ պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող՝ գնման վերաբերյալ տեղեկությունները, պայմանով, որ այդ տեղեկությունները ներառվեն գնման վերաբերյալ ծանուցման մեջ, գնման վերաբերյալ փաստաթղթերում կամ պայմանագրի նախագծում,

- սույն Կարգին համապատասխան անցկացվող փակ գնման վերաբերյալ տեղեկությունները,

- Պատվիրատուն իրավունք ունի գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) չտեղադրել ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման վերաբերյալ տեղեկությունները, որոնց արժեքը չի գերազանցում 4 մլն. դրամը (առանց ԱԱՀ), եթե այլ բան չի նախատեսված Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.6.5. Կազմակերպիչը, Պատվիրատուն լրացուցիչ կերպով իրավունք ունեն տեղադրելու փաստաթղթեր, տեղեկատվություն, որոնք ենթակա են տեղադրման Գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ)՝ Հայաստանի Հանրապետության «Գնումների մասին» օրենքին, ՀՀ ՀԾԿԳ-ի 26.03.2014թ. թիվ 61Ա, 25.06.2014թ. թիվ 207Ա որոշումներին և սույն Կարգին համապատասխան, «Գազպրոմ» ՀԲԸ-ի տեղեկատվական-հեռահաղորդակցական համացանցի կայքում, Պատվիրատուի կայքում:

Փաստաթղթերի և տեղեկատվության տեղադրումը Պատվիրատուի կայքում ապահովում է Պատվիրատուն: Փաստաթղթերի և տեղեկատվության տեղադրումը «Գազպրոմ» ՀԲԸ-ի կայքում ապահովում է Կազմակերպիչը:

1.6.6. Գնման վերաբերյալ ծանուցման մեջ, գնման վերաբերյալ փաստաթղթերում կատարվող փոփոխությունները, այդ փաստաթղթերի դրույթների պարզաբանումները Պատվիրատուի (Կազմակերպիչի) կողմից տեղադրվում են գնումների տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան նշված փոփոխությունների կատարման մասին որոշման ընդունման, նշված պարզաբանումների տրամադրման օրվանից երեք օրվա ընթացքում:

1.6.7. Գնման ընթացքում կազմվող արձանագրությունները Պատվիրատուի (Կազմակերպիչի) կողմից տեղադրվում են գնումների տեղեկատվական համակարգում ոչ

ուշ, քան այդ արձանագրությունների ստորագրման օրվանից երեք աշխատանքային օր հետո: Ընդ որում՝ գնումների տեղեկատվական համակարգում տեղադրվող արձանագրությունում թույլատրվում է չնշել տեղեկություններ արձանագրությունը ստորագրած անձանց, հանձնաժողովի կազմի և հանձնաժողովի անդամների անհատական քվեարկության մասին:

1.6.8. Գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) գործարկման համար լիազորված գործադիր մարմնի կողմից գնումների տեղեկատվական համակարգ գործարկելիս գնումների տեղեկատվական համակարգի (ԳՏՀ) մուտքը արգելափակող տեխնիկական կամ այլ անսարքություններ ծագելու դեպքում, ավելի քան մեկ աշխատանքային օրվա ընթացքում գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) «Գնումների մասին» ՀՀ օրենքի և սույն Կարգի համաձայն տեղադրման ենթակա տեղեկատվությունը Պատվիրատուի կողմից տեղադրվում է Պատվիրատուի կայքում՝ գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) դրա հետագա տեղադրմամբ՝ գնումների տեղեկատվական համակարգի (ԳՏՀ) մուտքը արգելափակող տեխնիկական կամ այլ անսարքությունները վերացնելու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում և համարվում է սահմանված կարգով տեղադրված:

1.6.9. Գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) «Գազպրոմ» ՀԲԸ-ի կամ Պատվիրատուի կայքում «Գնումների մասին» ՀՀ օրենքին և սույն Կարգին համապատասխան գնման վերաբերյալ տեղեկատվությունը, Կարգը, գնման պլանները պետք է առանց վճարի գանձման հասանելի լինեն ծանոթանալու համար:

1.7. Գնումներին մասնակցելու հավասարությունը

1.7.1. Ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

1.7.2. Արգելվում է միևնույն անձի (անձանց) կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս միևնույն անձի (անձանց) պատկանող բաժնեմաս ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցությունը գնման միևնույն գործընթացին, բացառությամբ.

1.7.2.1. պետության կամ քաղաքապետարանների կողմից հիմնադրված կազմակերպությունների,

1.7.2.2. գնման գործընթացին համատեղ գործունեության կարգով մասնակցության դեպքերի,

1.7.3. Պատվիրատուի մասնակցությամբ իրավաբանական անձիք գնումներին մասնակցում են այլ մասնակիցների հետ հավասար իրավունքով, և այդ կազմակերպություններում Պատվիրատուի մասնակցության հանգամանքը չի կարող հանգեցնել այդ անձանց համար որևէ արտոնության կամ այլ բարենպաստ պայմանների սահմանմանը և կիրառմանը:

2. ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ

2.1. Գազպրոմ Խմբի, այդ թվում «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների պլանավորումն իրականացվում է օրացուցային տարվա համար ընկերության մրցակցային գնումների տարեկան պլան կազմելու, ինչպես նաև Պատվիրատուների գնումների պլանների միջոցով: Գազպրոմ Խմբի մրցակցային գնումների պլանը հիմք է հանդիսանում մրցակցային գնումներ իրականացնելու համար: «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ մրցակցային գնումների պլանում ներառված մրցակցային գնումների ցանկը ընդգրկվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում՝ նրա գնումների պլանի կազմում:

2.2. Հերթական օրացուցային տարվա համար Գազպրոմ Խմբի մրցակցային գնումների պլանը ձևավորվում է Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից, *Գազպրոմ Խմբում ընդունված կարգով՝ «Գազպրոմ»* ՀԲԸ և Գազպրոմ Խմբի ընկերությունների կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման կարիքների հիման վրա:

2.3. Գազպրոմ Խմբի մրցակցային գնումների պլանը ձևավորվում է «Գազպրոմ» ՀԲԸ Տնօրենների խորհրդի 19.04.2012թ. թիվ 1969 որոշմամբ և Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից հաստատված «Գազպրոմ» ՀԲԸ և Գազպրոմ Խմբի ընկերությունների ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումների մասին Կարգի պահանջներին համապատասխան:

2.4. Անհրաժեշտության դեպքում, այդ թվում՝ Գազպրոմ Խմբի արտադրական զործունեությունը սահմանող ծրագրերում և «Գազպրոմ» ՀԲԸ և Գազպրոմ Խմբի ընկերությունների բյուջեում փոփոխություններ կատարելու հետ կապված, Գազպրոմ Խմբի մրցակցային գնումների պլանում կատարվում են համապատասխան ճշտումներ, լրացումներ, փոփոխություններ, որոնք հաստատվում են Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից: Գնման հայտարարման ժամանակ պայմանագրի առարկայի ճշգրտման դեպքում պլանի շտկում չի պահանջվում:

2.5. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ գնումների պլանները ձևավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և այդ պլանների ձևին առաջադրվող պահանջներին համապատասխան, ենթակա են տեղադրման Գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ)՝ Հայաստանի Հանրապետության պահանջներին համապատասխան:

2.6. Տարբեր պատվիրատուների կարիքների համար համանուն ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնումները կարող են կենտրոնացված եղանակով անցկացվել Կազմակերպչի կողմից: Կենտրոնացված գնումների անցկացման մասին որոշումը կայացնում է Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմինը:

3. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. Մրցակցային գնումների անցկացումն իրականացվում է Կազմակերպչի կողմից՝ Գազապրոմ Խմբի մրցակցային գնումների հաստատված պլանի հիման վրա: Այն դեպքում, երբ Կազմակերպչի կողմից մրցակցային գնումն անցակցվում է «Գազապրոմ Արմենիա» ՓԲԸ կարիքների համար, ապա Պատվիրատուի և Կազմակերպչի այդպիսի հարաբերությունները ձևակերպվում են գործող օրենսդրության պահանջներին համապատասխան:

3.2. Գազապրոմ Խմբի մրցակցային գնումների հաստատված պլանին համապատասխան Պատվիրատուն իրականացնում է գնման անցկացման համար պայմանների և պահանջների նախապատրաստումը:

3.3. Կազմակերպչի կողմից սահմանվում է նախնական տվյալների ցանկը, որը ենթակա է ներկայացման Կազմակերպչին Պատվիրատուի (Գնման նախաձեռնողի) կողմից մրցակցային գնման կազմակերպման և անցկացման համար՝ կախված գնման եղանակից և առարկայից:

3.4. Գնումների անցկացման ժամանակ Կազմակերպիչն (Մրցակցային գնումների նախապատրաստման և անցկացման դեպարտամենտը, ստորաբաժանումը) իրավունք ունի ներգրավել Կազմակերպչի (համապատասխանաբար «Գազապրոմ» ՅԲԸ, «Գազապրոմ Արմենիա» ՓԲԸ) կառուցվածքային ստորաբաժանումներին, Պատվիրատուին, որոնք ունեն անհրաժեշտ իրավասություն գնման առարկայի հարցում:

3.5. Մրցակցային միջավայրի բարելավման, մատակարարի (կատարողի, կապալառուի) կողմից պայմանագրային պարտավորությունների չկատարման ռիսկերի նվազեցման նպատակով գնման առարկան Պատվիրատուի, Կազմակերպչի կողմից կարող է բաժանվել լոտերի կամ միավորվել մեկ լոտում:

Գնման առարկայի բաժանումը լոտերի կամ միավորումը մեկ լոտում կարող է իրականացվել ինչպես Գազապրոմ Խմբի մրցակցային գնումների պլանի կազմավորման, այնպես էլ գնման մասին փաստաթղթերի նախապատրաստման ժամանակ:

3.6. Անցկացվող գնման առավելագույն արդյունավետության ապահովման համար Կազմակերպիչն իրավունք ունի.

- նվազեցնել պայմանագրի նախնական (առավելագույն) գինը (լոտի գինը)՝ ելնելով հայտարարման օրվա դրությամբ շուկայի կոնյունկտուրայի ակտուալ գնումից,
- անցկացնել սակարկություն,
- կատարել այլ գործողություններ, որոնք ուղղված են գնումների արդյունավետության բարձրացմանը, այդ թվում՝ գնման գնի նվազեցմանը:

3.7. Այն դեպքում, եթե դա նախատեսված է գնման մասին փաստաթղթերով, Գնման մասնակիցը գնման մասին փաստաթղթերով սահմանված կարգով մինչև գնման արդյունքների ամփոփման ամսաթվին նախարողով օրվա վերջը իրավունք ունի նվազեցնելու հայտարարված գինը՝ գնման մասին փաստաթղթերի պահանջներին

համապատասխան պատրաստված նոր առևտրային առաջարկների ներկայացման ճանապարհով:

3.8. Ածխի (այրվող թերթաքերերի) և/կամ նրա մշակման արտադրանքների (այսուհետ՝ ածխային արտադրանք) գնման իրականացման ժամանակ Պատվիրատուն կնքում է ածխային արտադրանքի մատակարարման միայն 1 (մեկ) տարուց ավել գործողության ժամկետով պայմանագրեր և միայն անմիջապես ածխային արտադրանքներ արտադրողների կամ ընկերությունների հետ, որոնք ածխային արտադրողների հետ նույն անձանց խմբի մեջ են մտնում:

3.9. Էլեկտրոնային գնումների ավտոմատացված համակարգի (ԷԳԱՅ) գործող կանոններին համապատասխան Պատվիրատուն (Կազմակերպիչը) ապահովում են Գնումների ընթացակազմի մասնակցի գրանցումը ԷԳԱՅ-ում՝ տեղադրված տեղեկատվական-հեռահաղորդակցական համացանցի «Գազպրոմ» ՅԲԸ կայքում, www.zakupki.gazprom.ru հասցեով: ԷԳԱՅ-ում գրանցման համար ոչ մի վճար չի գանձվում:

4. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԿԻՐԱՌՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ում գնումներն առավելապես իրականացվում են մրցակցային հիմունքով, բացառությամբ սույն Կարգով սահմանված դեպքերի²:

4.2. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից կիրառվող գնումների եղանակներն են՝

4.2.1. Սակարկություն (մրցույթ, աճուրդ) անցկացնելու միջոցով՝

4.2.1.1. Մրցույթ (բաց կամ փակ, մեկ կամ երկու փուլով, նախնական ընտրություն անցկացնելով կամ առանց նախնական ընտրություն անցկացնելու),

4.2.1.2. Աճուրդ (բաց կամ փակ), այդ թվում՝ աճուրդ էլեկտրոնային ձևով (էլեկտրոնային աճուրդ):

4.2.2. Առանց սակարկության անցկացման՝

4.2.2.1. Առաջարկների հարցում (բաց կամ փակ, մեկ կամ երկու փուլով, նախնական ընտրություն անցկացնելով կամ առանց նախնական ընտրություն անցկացնելու),

4.2.2.2. Գնումներ միակ մատակարարից (կապալառուից, կատարողից):

4.2.3. Սույն Կարգով նախատեսված գնումների ցանկացած եղանակ կարող է կիրառվել դրանց անցկացման համար (ամբողջությամբ կամ առանձին փուլերում)՝ օգտագործելով էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը, տեղեկատվության փոխանցումը էլեկտրոնային փաստաթղթի, էլեկտրոնային փոստի, էլեկտրոնային թվային կրիչների, ինչպես նաև համացանցում էլեկտրոնային առևտրային հարթակ-

² Մինչև գնումներ կատարելը Պատվիրատուն պետք է իրականացնի շուկայի վերլուծություն և հիմնավորի գնման եղանակի ընտրությունը: Գնման նախընտրելի եղանակներ են հանդիսանում այն եղանակները, որոնք գնման իրականացման ժամանակ ապահովում են մրցակցություն:

ների և Գազպրոմ խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից հավանության արժանացած էլեկտրոնային կապի այլ միջոցներով:

4.3. Գնման եղանակը որոշվում է Գազպրոմ խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից՝ Գազպրոմ խմբի մրցակցային գնումների պլանի ձևավորման փուլում: Որպես կանոն մրցակցային գնումները անց են կացվում էլեկտրոնային եղանակով:

4.4. Գազպրոմ խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմինը իրավունք ունի ընդունելու գնման եղանակի փոփոխության մասին որոշում:

4.5. Գազպրոմ խմբի մրցակցային գնումների պլանում չներառված հրատապ գնումը, այդ թվում դրա անցկացման եղանակը պետք է Պատվիրատուի կողմից համաձայնեցվի Գազպրոմ խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի հետ:

4.6. Փակ մրցակցային գնումը կարող է անցկացվել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 21-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերում:

4.7. Սույն Կարգով նախատեսված գնումների եղանակների կիրառման պայմանները³.

4.7.1. Մրցույթն անց է կացվում, եթե Պատվիրատուն ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնումը պարտավոր է իրականացնել մրցույթ անցկացնելու միջոցով՝ ըստ Պատվիրատուի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում այդ մասին անմիջական մատնանշման:

4.7.2. Աճուրդը, այդ թվում էլեկտրոնային եղանակով, անց է կացվում, եթե Պատվիրատուն պարտավոր է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնումը իրականացնել աճուրդ անցկացնելու միջոցով՝ ըստ Պատվիրատուի գործունեությունը կարգավորող Հայաստանի Հանրապետության օրենսդրությունում այդ մասին անմիջական մատնանշման կամ եթե գնվող ապրանքը, աշխատանքը, ծառայությունը ներառված են «Գազպրոմ» ՀԲԸ կողմից հաստատվող Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ցանկում, որոնց գնումը իրականացվում է աճուրդ անցկացնելու միջոցով:

Աճուրդ անցկացնելու միջոցով իրականացվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնման ցանկում կարող են ներառվել կանոնավոր հիմունքներով գնվող ապրանքները, աշխատանքները, ծառայությունները, սերիական արտադրու-

³ Գնման եղանակի որոշման ժամանակ պետք է հաշվի առնել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները, մասնավորապես ՀՀ ՀԾԿՀ-ի 26.03.2014թ. թիվ 61Ա որոշումը

թյան ապրանքները և (կամ) տիպային աշխատանքները, ծառայություններն այն դեպքում, եթե առկա է նրանց մանրամասն և ճշգրիտ նկարագրի ձևակերպման հնարավորությունը և եթե նրանց գնման անցկացման ժամանակ մատակարարի, կապալառուի, կատարողի որոշման միակ չափանիշը հանդիսանում է պայմանագրի գինը:

4.7.3. Առաջարկների հարցումը կարող է անցկացվել մրցակցային գնումների իրականացման բոլոր դեպքերում, բացառությամբ 4.7.1 և 4.7.2 կետերով նախատեսված դեպքերի, այդ թվում՝ եթե Պատվիրատուի համար կարևոր են պայմանագրի կատարման մի քանի պայմաններ և (կամ) եթե հաղթողի որոշման չափանիշը գնից բացի հանդիսանում են ապրանքների մատակարարման (աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման) այլ պայմանները, գնման մասնակցի ունակությունը՝ բավարարելու Պատվիրատուի պահանջները, հաշվի առնելով նրա փորձը, որակավորումը և այլ հատկանիշները, ինչպես նաև այն դեպքերում, եթե առկա են սույն Կարգով նախատեսված հիմքեր մրցակցային գնման այլ եղանակների ընտրության համար՝ պահպանելով հետևյալ պայմաններից մեկը.

4.7.3.1. Գնման իրականացման համար սեղմ ժամկետները չեն թույլատրվում աճուրդ անցկացնել:

4.7.3.2. Գնման առարկա հանդիսացող ապրանքների (աշխատանքների, պայմանների) բարդությունը թույլ չի տալիս աճուրդ անցկացնել:

4.7.3.3. Մրցույթը, աճուրդը ճանաչվել են չկայացած և կրկնակի մրցույթի, աճուրդի անցկացումը անհնար է՝ ելնելով գնման հրատապությունից, և Պատվիրատուի կողմից որոշում չի ընդունվել կնքել պայմանագիր միակ մատակարարի (կատարողի, կապալառուի) հետ:

4.7.3.4. Պատվիրատուի համար կարևոր են պայմանագրի կատարման մի քանի պայմաններ, և ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) իրականացվող գնումը հանդիսանում է պայմանագրի առարկան, որի լուծումը իրականացվել է միակողմանի կարգով Պատվիրատուի կողմից, եթե այդպիսի կարգ նախատեսված է եղել պայմանագրով:

4.7.4. Նախնական ընտրությամբ առաջարկների հարցումը անց է կացվում՝ հաշվի առնելով սույն Կարգի 11-րդ բաժնում նախատեսված առանձնահատկությունները:

4.7.5. Երկու փուլով անցկացվող առաջարկների հարցումը իրականացվում է՝ հաշվի առնելով սույն Կարգի 12-րդ բաժնում նախատեսված առանձնահատկությունները:

4.7.6. Միակ մատակարարից (կապալառուից, կատարողից) գնման դեպքում պայմանագիրը կնքվում է անմիջապես մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ՝ սույն Կարգով նախատեսված հիմնավորմամբ և դեպքերում:

5. ԳՆՈՒՄՆԵՐ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

5.1. Բաց մրցույթ անցկացնելու ընդհանուր կարգը

5.1.1. Բաց մրցույթ անցկացնելու մասին տեղեկատվությունը հաղորդվում է անձանց անսահմանափակ շրջանակի՝ գնումների տեղեկատվական համակարգում բաց մրցույթի անցկացման մասին ծանուցում տեղադրելու ճանապարհով:

5.1.2. Չի թույլատրվում գնման ընթացակարգերի մասնակիցներից գանձել մրցույթին մասնակցելու վճար՝ բացառությամբ տպագիր տեսքով մրցութային փաստաթղթերի օրինակի տրամադրման համար վճարը:

5.1.3. Կազմակերպչի կողմից կարող է սահմանված լինել մրցույթին մասնակցելու հայտի ապահովում տրամադրելու պահանջ: Այն դեպքում, եթե սահմանված է մրցույթին մասնակցելու հայտի ապահովման պահանջ, ապա այդ պահանջը հավասար չափով տարածվում է գնման ընթացակարգերի բոլոր մասնակիցների վրա և նշվում է մրցութային փաստաթղթերում:

5.1.4. Բաց մրցույթ անցկացնելու մասին ծանուցումը Պատվիրատուի, (Կազմակերպչի) կողմից տեղադրվում է գնումների տեղեկատվական համակարգում՝ մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ավարտի օրվանից ոչ ուշ, քան քսան օր առաջ:

5.1.5. Պատվիրատուն, Կազմակերպիչը բաց մրցույթ անցկացնելու վերաբերյալ գնումների տեղեկատվական համակարգում ծանուցում տեղադրելուց հետո իրավունք ունեն բաց մրցույթին մասնակցելու հրավերներ ուղարկելու մրցույթի պոտենցիալ մասնակիցներին:

5.1.6. Չի թույլատրվում բաց մրցույթին մասնակցելու հրավերների ուղարկումը և մրցութային փաստաթղթերի տրամադրումը նախքան գնումների տեղեկատվական համակարգում բաց մրցույթի անցկացման վերաբերյալ ծանուցման տեղադրումը:

5.1.7. Պատվիրատուն (Կազմակերպիչը) ապահովում է գնումների տեղեկատվական համակարգում մրցակցային փաստաթղթերի տեղադրումը մրցույթի անցկացման մասին ծանուցման տեղադրման հետ միաժամանակ: Մրցութային փաստաթղթերը պետք է ծանոթանալու համար հասանելի լինեն գնումների տեղեկատվական համակարգում՝ առանց վճարի գանձման:

5.1.8. Գնման ընթացակարգերի մասնակիցները, որոնք գնումների տեղեկատվական համակարգից ստացել են մրցութային փաստաթղթերը, պետք է ինքնուրույն հետևեն ծանուցման փոփոխություններին և մրցութային փաստաթղթերին: Պատվիրատուն, Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում գնման ընթացակարգերի մասնակցի կողմից գնումների տեղեկատվական համակարգից տեղեկատվության ոչ ժամանակին ստանալու համար:

5.1.9. Գնումների տեղեկատվական համակարգում բաց մրցույթի անցկացման վերաբերյալ ծանուցում տեղադրելու օրվանից սկսած Կազմակերպիչը ցանկացած շահագրգիռ անձի գրավոր ձևով ներկայացրած հայտի հիման վրա, համապատասխան դիմումն ստանալու օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում, այդ անձին տրամադրում է մրցութային փաստաթղթերը՝ բաց մրցույթ անցկացնելու վերաբերյալ

ծանուցման մեջ նշված կարգով: Ընդ որում, մրցութային փաստաթղթերի օրինակը տրամադրվում է տպագիր տեսքով, գնման ընթացակարգերի մասնակցի կողմից մրցութային փաստաթղթերի պատճենի տրամադրման համար վճարը վճարելուց հետո, եթե այդպիսի վճար սահմանված է, և այդ մասին նշումը առկա է բաց մրցույթ անցկացնելու վերաբերյալ ծանուցման մեջ: Նշված վճարի չափը չպետք է գերազանցի մրցութային փաստաթղթերի օրինակի պատրաստման և այն փոստային կապի միջոցով նշված դիմումը ներկայացրած անձին առաքելու համար արված ծախսերը, եթե նման առաքման իրականացման հնարավորությունը նախատեսված է մրցույթի անցկացման մասին ծանուցմամբ: Էլեկտրոնային փաստաթղթի տեսքով մրցութային փաստաթղթերի տրամադրումն իրականացվում է առանց վճարի գանձման:

Չի թույլատրվում մրցութային փաստաթղթերի տրամադրումը նախքան գնումների տեղեկատվական համակարգում բաց մրցույթի անցկացման վերաբերյալ ծանուցման տեղադրումը:

Գնումների տեղեկատվական համակարգում տեղադրվող մրցութային փաստաթղթերը պետք է համապատասխանեն սույն կետով սահմանված կարգով տրամադրվող մրցութային փաստաթղթերին:

5.1.10. Պատվիրատուն, Կազմակերպիչը իր սեփական նախաձեռնությամբ կամ գնման ընթացակարգերի մասնակցի հարցմանը համապատասխան իրավունք ունի նախքան մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը որոշում ընդունելու բաց մրցույթ անցկացնելու մասին ծանուցման մեջ և/կամ մրցութային փաստաթղթերում ցանկացած ժամանակ փոփոխություններ կատարելու մասին: Մրցույթի առարկայի փոփոխություն չի թույլատրվում:

Նշված որոշման ընդունման օրվանից երեք օրվա ընթացքում, բայց մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտի ամսաթվից ոչ ուշ, Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից գնումների տեղեկատվական համակարգում տեղադրվում են այդ փոփոխությունները:

Այն դեպքում, եթե բաց մրցույթ անցկացնելու վերաբերյալ ծանուցման և/կամ մրցութային փաստաթղթերի մեջ փոփոխությունները կատարվել են տասնհինգ օրվանից ավելի ուշ նախքան մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ավարտը, մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը պետք է երկարաձգվի այնպես, որպեսզի բաց մրցույթ անցկացնելու վերաբերյալ ծանուցման և/կամ մրցութային փաստաթղթերի մեջ կատարված փոփոխությունները գնումների տեղեկատվական համակարգում տեղադրելու օրվանից մինչև մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը կազմող նման ժամկետը լինի ոչ պակաս, քան տասնհինգ օր:

5.1.11. Պատվիրատուն, Կազմակերպիչը իրավունք ունի հրաժարվելու բաց մրցույթ անցկացնելուց ոչ ուշ, քան մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտից երեք օր առաջ:

Բաց մրցույթ անցկացնելուց հրաժարվելու մասին ծանուցումը գնումների տեղեկատվական համակարգում տեղադրվում է Պատվիրատուի, Կազմակերպչի կողմից բաց մրցույթ անցկացնելուց հրաժարվելու մասին որոշման ընդունման օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նշված որոշման ընդունման օրվանից սկսած երկու աշխատանքային օրվա ընթացքում Կազմակերպչի կողմից բացվում են (այն դեպքում, եթե ծրարի վրա նշված չեն գնման ընթացակարգերի մասնակցի փոստային հասցեն (իրավաբանական անձի համար) կամ տեղեկություններ բնակության վայրի վերաբերյալ (ֆիզիկական անձի համար)) մրցույթին մասնակցելու հայտերով ծրարները, բացվում է մուտքի թույլտվություն դեպի էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացված մրցույթին մասնակցելու հայտերը, և ուղարկվում են համապատասխան ծանուցագրեր մրցույթին մասնակցելու հայտեր ներկայացրած՝ գնման ընթացակարգերի բոլոր մասնակիցներին:

5.1.12. Գնման ընթացակարգերի յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի Կազմակերպչին գրավոր ձևով, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթի ձևով, ուղարկելու մրցութային փաստաթղթերի պարզաբանման վերաբերյալ հարցում՝ ոչ ուշ, քան մրցույթում մասնակցելու համար հայտեր ներկայացնելու ավարտի օրվանից հինգ օր առաջ:

Կազմակերպիչը պարզաբանումներ տրամադրելու վերաբերյալ ստացված հարցումները դիտարկում է ոչ ուշ, քան մրցույթին մասնակցելու համար հայտեր ներկայացնելու ավարտի օրվանից հինգ օր առաջ: Մրցութային փաստաթղթերի դրույթների պարզաբանումներ տրամադրելու օրվանից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուն (Կազմակերպիչը) նշված պարզաբանումները տեղադրում է գնումների տեղեկատվական համակարգում, սակայն հայտեր ներկայացնելու ավարտի ժամկետին նախորդող օրվանից ոչ ուշ:

5.1.13. Բաց մրցույթը կարող է անցկացվել սակարկության կիրառմամբ:

5.2. Ծանուցում բաց մրցույթ անցկացնելու մասին

Բաց մրցույթ անցկացնելու մասին ծանուցման մեջ պետք է նշված լինեն հետևյալ տեղեկությունները՝

5.2.1. գնման եղանակը,

5.2.2. Պատվիրատուի, Կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը, փոստային հասցեն և էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը,

5.2.3. պայմանագրի առարկան՝ նշելով մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալը,

5.2.4. ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը,

5.2.5. տեղեկություններ պայմանագրի նախնական (առավելագույն) գնի (լոտի գնի) վերաբերյալ, այդ թվում (անհրաժեշտության դեպքում) գնի որոշման կարգը,

5.2.6. մրցութային փաստաթղթերի տրամադրման ժամկետը, տեղը և կարգը, գնումների տեղեկատվական համակարգի կայքը, որում տեղադրված են մրցութային փաստաթղթերը, տպագիր տեսքով մրցութային փաստաթղթերի պատճենը տրամադրելու համար Կազմակերպչի կողմից գանձվող վճարի վճարման չափը, կարգը և ժամկետները, եթե այդպիսի վճար սահմանված է,

5.2.7. մրցույթի մասնակիցների առաջարկների դիտարկման և մրցույթի արդյունքների ամփոփման տեղը և ամսաթիվը:

5.3. Մրցութային փաստաթղթերը

Մրցութային փաստաթղթերը պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

5.3.1. Պատվիրատուի կողմից սահմանված պահանջները՝ ուղղված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակին, տեխնիկական բնութագրերին, անվտանգությանը, ապրանքի ֆունկցիոնալ բնութագրերին (սպառողական հատկություններին), ապրանքի չափերին, փաթեթավորմանը, բեռնմանը, աշխատանքների, ծառայությունների արդյունքներին, այլ պահանջներ և ցուցանիշներ՝ կապված Պատվիրատուի պահանջմունքներին մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների համապատասխանության որոշման հետ,

5.3.2. պահանջներ՝ ուղղված մրցույթին մասնակցելու հայտերի բովանդակությանը, ձևին, ձևակերպմանը, կազմին, գործողության ժամկետին, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթի ձևով ներկայացված հայտին և դրա լրացման կարգին,

5.3.3. գնման մասնակիցների կողմից գնման առարկա հանդիսացող՝ մատակարարվող ապրանքի, դրա ֆունկցիոնալ բնութագրերի (սպառողական հատկություններին), դրա քանակական և որակական բնութագրերի նկարագրությանն ուղղված պահանջներ, գնման մասնակիցների կողմից գնման առարկա հանդիսացող՝ կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության, դրանց քանակական և որակական բնութագրերի նկարագրությանն ուղղված պահանջներ.

5.3.4. պահանջներ՝ ուղղված ապրանքի, աշխատանքների, ծառայությունների որակի երաշխիքների տրամադրման ժամկետին և/կամ ծավալին, ապրանքի սպասարկմանը, ապրանքի շահագործման հետ կապված ծախսերին (անհրաժեշտության դեպքում),

5.3.5. ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը, պայմանները և ժամկետները (ժամանահատվածները),

5.3.6. տեղեկություններ գնման առարկայի սկզբնական (առավելագույն) գնի (լոտի գնի) մասին, այդ թվում նաև (անհրաժեշտության դեպքում) դրա որոշման կարգը,

5.3.7. ապրանքի, աշխատանքների, ծառայությունների վճարման ձևը, ժամկետները և կարգը,

5.3.8. պայմանագրի գնի (լոտի գնի) ձևավորման կարգը (հաշվի առնելով կամ առանց հաշվի առնելու փոխադրման, ապահովագրման, մաքսային տուրքերի, հարկերի և այլ պարտադիր վճարների վճարման հետ կապված ծախսերը),

5.3.9. պայմանագրի գնի ձևավորման և մատակարարների (կատարողների, կապալառուների) հետ հաշվարկների համար օգտագործվող արժույթի վերաբերյալ տեղեկություններ,

5.3.10. Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից սահմանված և կնքված պայմանագրի վճարման ժամանակ օգտագործվող՝ Հայաստանի

Հանրապետության դրամի նկատմամբ արտարժույթի պաշտոնական կուրսի կիրառման կարգը,

5.3.11. մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման կարգը, վայրը, ժամկետի սկիզբը և ժամկետի ավարտը: Ընդ որում, մրցույթի հայտերի ներկայացման ժամկետի սկիզբը հանդիսանում է գնումների տեղեկատվական համակարգում մրցույթի անցկացման վերաբերյալ ծանուցման տեղադրման հաջորդ օրը,

5.3.12. գնման մասնակիցների նկատմամբ պահանջները, որոնք սահմանված են սույն Կարգին համապատասխան, և փաստաթղթերի ցանկը, որոնք ներկայացված են գնման մասնակիցներին առաջադրված պահանջներին իրենց համապատասխանությունը հաստատելու համար.

5.3.13. մրցույթին մասնակցելու հայտերի հետ կանչման կարգը և ժամկետը, հայտերում փոփոխություններ կատարելու կարգը,

5.3.14. գնման մասնակիցների կողմից մրցութային փաստաթղթերի դրույթների պարզաբանման ներկայացման ձևերը, կարգը, ժամկետի սկզբի և ավարտման ամսաթվերը,

5.3.15. մրցույթին մասնակցելու հայտերով ծրարների բացման կամ մրցույթին մասնակցելու համար էլեկտրոնային փաստաթղթերի ձևով տրված հայտերի մուտքի բացման տեղը, կարգը, ամսաթիվը և ժամանակը,

5.3.16. մրցույթի մասնակիցների առաջարկների դիտարկման և մրցույթի արդյունքների ամփոփման տեղը և ամսաթիվը,

5.3.17. մրցույթին մասնակցելու հայտերի գնահատման և համադրման չափանիշները,

5.3.18. մրցույթին մասնակցելու հայտերի գնահատման և համադրման կարգը,

5.3.19. մրցույթին մասնակցելու հայտի ապահովում ներկայացնելու կարգը և ժամկետը, չափը, ձևը և գործողության ժամկետը, այն դեպքում, եթե Կազմակերպչի կողմից սահմանված է այդպիսի պահանջ,

5.3.20. պայմանագրի կատարման ապահովում ներկայացնելու կարգը և ժամկետը, չափը, ձևը և գործողության ժամկետը այն դեպքում, եթե Պատվիրատուի կողմից սահմանված է պայմանագրի կատարման ապահովման պահանջ,

5.3.21. տեղեկություններ՝ Պատվիրատուի կողմից (անհրաժեշտության դեպքում) մրցույթի մի քանի մասնակիցների հետ պայմանագիր կնքելու հնարավորության մասին,

5.3.22. տեղեկություններ՝ Հանձնաժողովի կողմից մրցույթին մասնակցելու հայտերի մերժման իրավունքի մասին այն դեպքում, եթե դրանք չեն համապատասխանում մրցութային փաստաթղթերով սահմանված պահանջներին՝ նշելով այդպիսի մերժման համար թույլատրելի հիմնավորումների ցանկը,

5.3.23. տեղեկություններ սակարկություն անցկացնելու մասին (սակարկություն կիրառելու դեպքում), ինչպես նաև սակարկության դեպքում գնման մասնակիցների կողմից ներկայացրած նոր առևտրային առաջարկներին ուղղված պահանջներ,

5.3.24. մրցութային փաստաթղթերին պետք է կցված լինի պայմանագրի նախագիծը (այն դեպքում, երբ մրցույթն անց է կացվում մի քանի լոտերով՝ պայմանագրի նախագիծը յուրաքանչյուր լոտի վերաբերյալ), որը հանդիսանում է մրցութային փաստաթղթերի անբաժանելի մասը,

5.3.25. մրցութային փաստաթղթերի մեջ պարունակվող տեղեկությունները պետք է համապատասխանեն բաց մրցույթ անցկացնելու մասին ժամուցման մեջ նշված տեղեկություններին:

5.4. Մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման կարգը

5.4.1. Մրցույթին մասնակցելու հայտերը ներկայացվում են մրցութային փաստաթղթերում նշված ձևով, կարգով, վայրում և նախքան ժամկետի ավարտը:

5.4.2. Մրցույթին մասնակցելու հայտը պետք է պարունակի հետևյալ տեղեկություններն ու փաստաթղթերը.

5.4.2.1. Հայտ ներկայացրած մրցույթի մասնակցի մասին տեղեկություններ և փաստաթղթեր.

ա) մրցույթի մասնակցի անվանունը, տեղեկություններ կազմակերպչական-իրավական ձևի, գտնվելու վայրի մասին, փոստային հասցեն (իրավաբանական անձի համար), անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, տեղեկություններ բնակության վայրի մասին (ֆիզիկական անձի համար), կոնտակտային հեռախոսահամարը,

բ) ոչ շուտ, քան բաց մրցույթ անցկացնելու վերաբերյալ ժամուցումը գնումների տեղեկատվական համակարգում տեղադրելուց վեց ամիս առաջ իրավաբանական անձանց միասնական պետական գրանցամատյանից ստացված քաղվածք կամ այդպիսի քաղվածքի նոտարական կարգով վավերացված պատճենը (իրավաբանական անձանց համար), ոչ շուտ, քան բաց մրցույթ անցկացնելու վերաբերյալ ժամուցումը գնումների տեղեկատվական համակարգում տեղադրելուց վեց ամիս առաջ անհատ ձեռներեցների միասնական պետական գրանցամատյանից ստացված քաղվածք կամ այդպիսի քաղվածքի նոտարական կարգով վավերացված պատճենը (անհատ ձեռներեցների համար), անձը հաստատող փաստաթղթերի պատճենը (այլ ֆիզիկական անձանց համար), իրավաբանական անձի կամ ֆիզիկական անձի՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման մասին փաստաթղթերի պատշաճ կերպով վավերացված՝ հայերեն լեզվով թարգմանությունը, համապատասխան պետության օրենսդրությանը համապատասխան (օտարերկրյա անձանց համար)՝ ստացված ոչ շուտ, քան գնումների տեղեկատվական համակարգում բաց մրցույթ անցկացնելու մասին ժամուցումը տեղադրելուց վեց ամիս առաջ,

գ) մրցույթի մասնակցի անունից գործողությունների իրականացման՝ անձի լիազորությունները հաստատող փաստաթուղթ,

դ) փաստաթղթեր, որոնք հաստատում են մրցույթի մասնակցի համապատասխանությունը մրցութային փաստաթղթերում սահմանված՝ մասնակիցներին առաջադրվող պահանջներին,

ե) մրցույթի մասնակցի հիմնադիր փաստաթղթերի՝ նոտարական կարգով վավերացված պատճենները (իրավաբանական անձանց համար),

5.4.2.2. Գնման առարկայի նկատմամբ մասնակցի առաջարկը՝ մրցութային փաստաթղթերում սահմանված պահանջների համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի կցմամբ, ներառյալ պայմանագրի գնի հաշվարկը և հիմնավորումը սահմանված դեպքերում, ինչպես նաև ապրանքների գնման դեպքում՝ միավոր

ապրանքի առաջարկվող գինը, ծագման երկրի և ապրանքի արտադրողի մասին տեղեկատվությունը:

5.4.2.3. Մրցույթին մասնակցելու հայտի ապահովման բանկային երաշխիք, այն դեպքում, եթե մրցութային փաստաթղթերում պարունակվում է նշում՝ բանկային երաշխիքի տեսքով այդպիսի հայտի ապահովման պահանջի մասին:

5.4.2.4. Այլ փաստաթղթեր, որոնց ներկայացման պահանջը նշված է մրցութային փաստաթղթերում:

5.4.3. Հայտը կարող է պարունակել ապրանքի էսքիզը, նկարը, գծագիրը, լուսանկարը, այլ պատկերը, ապրանքի օրինակը (նմուշը), որի գնումն իրականացվում է:

5.4.4. Մրցութային փաստաթղթերում նշված ժամկետում ստացված հայտով յուրաքանչյուր ծրար գրանցվում է Կազմակերպչի կողմից:

5.4.5. Մասնակիցն իրավունք ունի ներկայացնելու մրցույթին մասնակցելու ընդամենը մեկ հայտ՝ մրցույթի (լոտի) յուրաքանչյուր առարկայի վերաբերյալ:

5.4.6. Մրցույթին մասնակցելու հայտերի ընդունումը դադարում է մրցութային փաստաթղթերում սահմանված՝ մինչև հայտերի ներկայացման ժամկետի ավարտը:

5.4.7. Կազմակերպիչը պահպանում է հայտերով ծրարների պաշտպանվածությունը, անձեռնմխելիությունը և գաղտնիությունը՝ նախքան հայտերի բացման ընթացակարգի անցկացման սկիզբը և ապահովում է, որպեսզի մրցույթին մասնակցելու հայտի բովանդակությունը մրցութային դիտարկվի միայն հայտերով ծրարները բացելուց հետո՝ մրցութային փաստաթղթերով սահմանված կարգով:

5.4.8. Մրցույթին մասնակցելու հայտը, որը ստացվել է հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո, չի դիտարկվում և Կազմակերպչի կողմից վերադարձվում է գնման ընթացակարգերի մասնակցի հարցմամբ՝ մրցութային փաստաթղթերով նախատեսված կարգով:

5.4.9. Այն դեպքում, եթե մինչև մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը ներկայացվել է ընդամենը մեկ հայտ կամ չի ներկայացվել և ոչ մի հայտ, մրցույթը ճանաչվում է չկայացած: Այն դեպքում, եթե մրցութային փաստաթղթերով նախատեսված է երկու և ավելի լոտեր, մրցույթը ճանաչվում է չկայացած միայն այն լոտերի նկատմամբ, որոնցով ներկայացվել է ընդամենը մեկ հայտ կամ չի ներկայացվել և ոչ մի հայտ: Մրցույթը չկայացած ճանաչելու մասին որոշումը, սույն կետին համապատասխան, կարող է ընդունվել ինչպես Մրցութային հանձնաժողովի, այնպես էլ անմիջապես Կազմակերպչի կողմից՝ առանց մրցույթը չկայացած ճանաչելու մասին հարցը Մրցութային հանձնաժողովի վերանայմանը առաջադրելու:

5.4.10. Այն դեպքում, եթե դա նախատեսված է մրցութային փաստաթղթերով՝ Մրցույթի մասնակիցը, նախքան մրցութային արդյունքների ամփոփման օրվա վերջը, Մրցութային փաստաթղթերով սահմանված կարգով իրավունք ունի նվազեցնելու իր կողմից հայտարարված գինը՝ ներկայացնելով նոր առևտրային առաջարկ՝ ձևակերպված մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

5.5. Մրցույթին մասնակցելու հայտերի գործողության ժամկետը, մրցույթին մասնակցելու հայտերի փոփոխումը և հետ կանչելը

5.5.1. Մրցույթին մասնակցելու հայտերը պետք է ուժի մեջ մնան մրցութային փաստաթղթերի մեջ նշված ժամկետի ընթացքում:

5.5.2. Այն դեպքում, եթե Կազմակերպչի կողմից մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը երկարաձգվել է, Կազմակերպիչը, անհրաժեշտության դեպքում, նախքան մրցույթին մասնակցելու հայտերի գործողության ժամկետի ավարտը, մրցույթի մասնակիցներին ուղարկում է հարցում՝ մրցույթին մասնակցելու հայտերի գործողության ժամկետի երկարաձգման վերաբերյալ: Մրցույթի մասնակիցն իրավունք ունի չերկարաձգելու իր հայտի գործողության ժամկետը՝ չկորցնելով իր կողմից ներկայացրած հայտի ապահովման իրավունքը:

5.5.3. Մրցույթի մասնակիցը, որը համաձայնվել է երկարաձգել մրցույթին մասնակցելու իր հայտի գործողության ժամկետը, պետք է երկարաձգի իր կողմից տրամադրված հայտի ապահովման գործողության ժամկետը կամ տրամադրի հայտի նոր ապահովում՝ հայտի գործողության երկարաձգված ժամկետը ծածկելու համար: Մրցույթի մասնակիցը, որը երկարաձգել է հայտի գործողության ժամկետը, բայց չի երկարաձգել հայտի ապահովման գործողության ժամկետը կամ չի տրամադրել հայտի գործողության երկարաձգված ժամկետը ծածկող հայտի նոր ապահովում, դիտարկվում է որպես մրցույթին մասնակցելու հայտերի գործողության ժամկետի երկարաձգման վերաբերյալ հարցումը մերժող և մրցույթին մասնակցելուց հրաժարվող:

5.5.4. Մրցույթին մասնակցելու հայտ ներկայացրած մասնակիցն իրավունք ունի փոխելու կամ հետ կանչելու մրցույթին մասնակցելու հայտը ցանկացած ժամանակ՝ մինչև մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը: Մասնակցի կողմից նախքան մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը մրցույթին մասնակցելու հայտը հետ կանչելու դեպքում այդպիսի հայտը, ներառյալ հայտի ապահովումը, եթե այն տրամադրված է եղել հայտի կազմում, մրցութային փաստաթղթերում նախատեսված կարգով վերադարձվում է մասնակցին:

5.5.5. Մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո մասնակցի կողմից մրցույթին մասնակցելու հայտը հետ կանչելու դեպքում Կազմակերպիչն իրավունք ունի պահանջելու հայտի ապահովում:

5.6. Մրցույթին մասնակցելու հայտերով ծրարների բացման կարգը

5.6.1. Մրցութային փաստաթղթերում նշված օրը, ժամանակին և վայրում Կազմակերպչի կողմից բացվում են մրցույթին մասնակցելու հայտերով ծրարները կամ իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացված մրցույթին մասնակցելու հայտերի մուտքի հասանելիության բացում: Մրցույթին մասնակցելու հայտերով ծրարների բացումը և էլեկտրոնային փաստաթղթի ձևով ներկայացված մրցույթին մասնակցելու հայտերի մուտքի հասանելիության բացումը իրականացվում են միևնույն օրը:

5.6.2. Գնման ընթացակարգերի մասնակիցները, որոնք ներկայացրել են մրցույթին մասնակցելու հայտեր կամ նրանց ներկայացուցիչները իրավունք ունեն ներկա գտնվելու մրցույթին մասնակցելու հայտերով ծրարների բացմանը կամ

էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացված մրցույթին մասնակցելու հայտերի մուտքի հասանելիության բացմանը:

5.6.3. Մրցույթին մասնակցելու հայտերով ծրարների բացման կամ էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացված մրցույթին մասնակցելու հայտերի մուտքի հասանելիության բացման ժամանակ հայտարարվում է տվյալ հայտում նշված պայմանագրի գնի մասին առաջարկը և մրցույթին մասնակցելու հայտերով ծրարների բացման կամ էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացված մրցույթին մասնակցելու հայտերի մուտքի բացման արձանագրությունում գրանցվում են հայտը ներկայացրած անձի անվանումը (իրավաբանական անձի համար), անունը, ազգանունը, հայրանունը (ֆիզիկական անձի համար) և գնման յուրաքանչյուր մասնակցի գտնվելու վայրի հասցեն, որի մրցույթին մասնակցելու հայտով ծրարը բացվում է կամ որի էլեկտրոնային փաստաթղթի ձևով տրված հայտի մուտքը բացվում է:

Այն դեպքում, եթե մրցույթին մասնակցելու համար ժամկետի ավարտին տրված է ընդամենը մրցույթին մասնակցելու մեկ հայտ կամ չի տրվել մրցույթին մասնակցելու և ոչ մի հայտ, նշված արձանագրությունում նշվում է մրցույթը չկայացած ճանաչելու մասին տեղեկատվությունը:

5.6.4. Մրցույթին մասնակցելու հայտերով ծրարների բացման արձանագրությունը վարվում և ստորագրվում է Կազմակերպչի կողմից:

5.7. Մրցույթին մասնակցելու հայտերի դիտարկումը, գնահատումը և համադրումը:

5.7.1. Կազմակերպիչն ապահովում է մրցութային փաստաթղթերով սահմանված պահանջներին մրցույթին մասնակցելու հայտերի համապատասխանության դիտարկումը:

5.7.2. Կազմակերպիչն իրավունք ունի մրցույթին մասնակցելու հայտերի դիտարկման, գնահատման և համադրման համար ներգրավելու փորձագետների:

5.7.3. Մրցույթին մասնակցելու հայտերի գնահատումն ու համադրումը իրականացվում են պայմանագրի կատարման լավագույն պայմաններ բացահայտելու նպատակով՝ մրցութային փաստաթղթերով սահմանված չափանիշներին և կարգին համապատասխան: Նման չափանիշների ամբողջական նշանակությունը պետք է կազմի հարյուր տոկոս:

5.7.4. Մրցույթին մասնակցելու հայտերի դիտարկման, գնահատման և համադրման արդյունքներով Հանձնաժողովը որոշում է ընդունում մրցույթի արդյունքների մասին:

5.7.5. Մրցույթի հաղթող է ճանաչվում մրցույթի այն մասնակիցը, որը մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ առաջարկել է պայմանագրի կատարման լավագույն պայմանները:

5.8. Մրցույթի արդյունքներով պայմանագրի կնքումն ու կատարումը

5.8.1. Մրցույթի արդյունքներով պայմանագիրը կնքվում է մրցույթի հաղթողի հետ, իսկ մրցույթի հաղթողի՝ պայմանագրի կնքումից հրաժարվելու կամ սահմանված դեպքերում պայմանագրի կնքումից նրան խուսափող ճանաչելու կամ նրա կողմից պայմանագրի կատարման ապահովում չներկայացնելու դեպքում, եթե մրցութային փաստաթղթերում սահմանվել է նման պահանջ, Պատվիրատուն իրավունք ունի կնքելու պայմանագիր մրցույթի մեկ այլ մասնակցի հետ, որի հայտը պարունակում է պայմանագրի կատարման լավագույն պայմանները մրցույթի այլ մասնակիցների համեմատ:

5.8.2. Մրցույթի արդյունքներով պայմանագիրը կնքվում է մրցութային փաստաթղթերում և մրցույթի այն մասնակցի կողմից ներկայացված՝ մրցութային մասնակցելու հայտում նշված պայմաններով, որի հետ կնքվում է պայմանագիրը: Մրցույթի արդյունքներով պայմանագրի կնքման դեպքում նման պայմանագրի գինը չի կարող գերազանցել Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից սահմանված պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (լոտի գինը), այն մասնակցի մրցութային հայտում նշված պայմանագրի գինը, որի հետ կնքվում է պայմանագիրը և կարող է նվազեցվել կողմերի համաձայնությամբ:

5.8.3. Այն դեպքում, եթե մրցութային փաստաթղթերում սահմանված է պայմանագրի կատարման ապահովման պահանջ, մասնակիցը, պայմանագրով սահմանված ժամկետի ընթացքում, պետք է Պատվիրատուին ներկայացնի պայմանագրի կատարման ապահովումը: Պայմանագրի կատարման ապահովումը տրամադրվում է մրցութային փաստաթղթերում նախատեսված չափով և ձևով:

5.8.4. Պայմանագրի կատարումն իրականացվում է դրա պայմաններին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

6. ՓԱԿ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՈՒՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

6.1. Պատվիրատուն իրավունք ունի անցկացնելու փակ մրցույթ Կարգի 4.6. կետով սահմանված դեպքերում:

6.2. Փակ մրցույթ անցկացնելու դեպքում կիրառվում են սույն Կարգով բաց մրցույթների համար սահմանված նորմերն ու կանոնները՝ հաշվի առնելով սույն բաժնի պահանջները:

6.3. Փակ մրցույթի անցկացման և արդյունքների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև փակ մրցույթների անցկացման ժամանակ ձևակերպվող փաստաթղթերը, փակ մրցույթի անցկացման ընթացքում ստացված տեղեկատվությունը ենթակա չեն զանգվածային լրատվության միջոցներում հրապարակման և համացանցում բաց (ազատ) մուտքի հնարավորությամբ տեղադրման:

6.4. Պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք պարունակող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման դեպքում փակ մրցույթ

անցկացնելու ժամանակ՝ փակ մրցույթին մասնակցելուն հրավիրվում են միայն պետական, ծառայողական կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկությունների նկատմամբ համապատասխան թույլտվություն ունեցող մասնակիցները:

6.5. Փակ մրցույթի անցկացման ժամանակ մրցութային փաստաթղթերը տրամադրվում են միայն փակ մրցույթին մասնակցելու հրավիրված անձանց:

6.6. Փակ մրցույթին մասնակցելու հայտերն ընդունվում են միայն այն անձանցից, որոնք Կազմակերպչի կողմից հրավիրվել են մասնակցելու փակ մրցույթին, որոնց Կազմակերպչի կողմից տրամադրվել են մրցութային փաստաթղթերը:

6.7. Փակ մրցույթ կարող է անցկացվել սակարկության կիրառմամբ, որի մասին մրցութային փաստաթղթերի մեջ պետք է լինի համապատասխան նշում: Սակարկություն անցկացնելու մասին որոշումն ընդունում է Կազմակերպիչը կամ Հանձնաժողովը:

6.8. Պատվիրատուն, Կազմակերպիչը իրավունք ունի հրաժարվելու փակ մրցույթի անցկացումից ցանկացած փուլում՝ մինչև մրցույթի արդյունքների ամփոփումը: Փակ մրցույթի անցկացումից հրաժարվելու մասին ծանուցումները Կազմակերպչի կողմից ուղարկվում են Կազմակերպչի կողմից փակ մրցույթին մասնակցելու հրավիրված գնման ընթացակարգերի բոլոր մասնակիցներին:

6.9. Փակ մրցույթ անցկացնելուց հրաժարվելու մասին մասնակիցներին ծանուցելուց հետո Կազմակերպիչը մրցույթի մասնակցի գրավոր հարցմամբ վերադարձնում է նրա կողմից ներկայացված՝ մրցույթին մասնակցելու հայտը, այդ թվում՝ մրցույթին մասնակցելու հայտի ապահովումը, եթե այն տրամադրված է եղել մասնակցի կողմից մրցութային փաստաթղթերով սահմանված կարգով:

6.10. Փակ մրցույթի անցկացման ժամանակ չի թույլատրվում իրականացնել ձայնագրություններ և տեսագրություններ:

7. ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅԱՄԲ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԴՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Նախնական ընտրությամբ մրցույթը գնման իրականացման այն եղանակն է, որի դեպքում գնման մասին տեղեկատվությունը հայտնվում է անձանց անսահմանափակ շրջանակի՝ գնումների տեղեկատվական համակարգում նախնական ընտրությամբ մրցույթ անցկացնելու մասին ծանուցմամբ, նախնական ընտրությամբ փաստաթղթերի, մրցութային փաստաթղթերի տեղադրմամբ: Նախնական ընտրությամբ մրցույթի հաղթող է ճանաչվում այն անձը, որը նախնական ընտրությամբ մրցույթի արդյունքներով անցել է նախնական ընտրությունը և ներկայացրել է պայմանագրի կատարման լավագույն պայմանները:

7.2. Նախնական ընտրությամբ մրցույթ անցկացնելու ժամանակ կիրառվում են սույն Կարգով բաց մրցույթի համար սահմանված կանոններն ու նորմերը՝ հաշվի

առնելով սույն բաժնի պահանջները, ընդ որում՝ նախնական ընտրությամբ մրցույթի մասնակցությանը թույլատրվում են նախնական ընտրությունն անցած գնման ընթացակարգերի մասնակիցները:

7.3. Պատվիրատուն (Կազմակերպիչը) գնումների տեղեկատվական համակարգում տեղադրում է նախնական ընտրությամբ մրցույթ անցկացնելու մասին ծանուցում, նախնական ընտրության մասին փաստաթղթերը, մրցութային փաստաթղթերը:

7.4. Նախնական ընտրությամբ մրցույթ անցկացնելու մասին ծանուցումը տեղադրվում է գնումների տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան մրցույթին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետից քսան օր առաջ և ոչ ուշ, քան նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետից տաս օր առաջ, և պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

7.4.1. Սույն Կարգի 5.2. կետում թվարկված տեղեկությունները,

7.4.2. Նախնական ընտրության մասին փաստաթղթերի տրամադրման ժամկետը, վայրը և կարգը, գնումների տեղեկատվական համակարգի կայքը, որտեղ պետք է տեղադրված լինեն նախնական ընտրության մասին փաստաթղթերը, տպագիր տեսքով նախնական ընտրության մասին փաստաթղթերի պատճենի տրամադրման համար Պատվիրատուի կողմից գանձվող վճարի վճարման կարգն ու ժամկետները, եթե այդպիսի վճար սահմանված է, բացառությամբ էլեկտրոնային փաստաթղթի ձևով փաստաթղթերի տրամադրման դեպքերի,

7.4.3. Նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի ներկայացման կարգը, վայրը և ժամկետը, նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի դիտարկման և նախնական ընտրության արդյունքների ամփոփման ժամկետը,

7.5. Նախնական ընտրության մասին փաստաթղթերը Պատվիրատուի (Կազմակերպիչի) կողմից տեղադրվում են գնումների տեղեկատվական համակարգում՝ նախնական ընտրությամբ մրցույթի մասին ծանուցման հետ միաժամանակ, և պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը.

7.5.1. Մրցույթի պոտենցիալ մասնակիցների նկատմամբ Պատվիրատուի կողմից սույն Կարգի 1.5. կետին համապատասխան սահմանված պահանջները,

7.5.2. Փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է ներկայացված լինեն նախնական ընտրության մասնակիցներին՝ ի հաստատումն սահմանված պահանջներին իրենց համապատասխանության և իրենց որակավորման,

7.5.3. Նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի պատրաստման և ներկայացման կարգը,

7.5.4. Գնման ընթացակարգերի մասնակիցներին նախնական ընտրության մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումների տրամադրման ձևերը, կարգը, ժամկետի սկզբի ամսաթիվը և ավարտման ամսաթիվը:

7.6. Նախնական ընտրությամբ մրցույթի մրցութային փաստաթղթերը տեղադրվում են գնումների տեղեկատվական համակարգում՝ նախնական ընտրությամբ մրցույթ

անցկացնելու մասին ծանուցման և նախնական ընտրության մասին փաստաթղթերի հետ միաժամանակ, և պետք է պարունակեն սույն Կարգի 5.3. կետում շարադրված տեղեկատվությունը:

7.7. Նախնական ընտրության մասին փաստաթղթերում սահմանված ժամկետներում Կազմակերպիչն անց է կացնում նախնական ընտրություն գնման ընթացակարգերի մասնակիցներ բացահայտելու համար, որոնք համապատասխանում են մրցույթի պոտենցիալ մասնակիցներին առաջադրված՝ նախնական ընտրության մասին փաստաթղթերում սահմանված պահանջներին:

7.8. Կազմակերպիչը գրավոր ձևով նախնական ընտրությամբ մրցույթին մասնակցելու հրավերներ է ուղարկում նախնական ընտրությունն անցած մասնակիցներին:

7.9. Այն դեպքում, եթե նախնական ընտրության արդյունքներով նախնական ընտրության մասին փաստաթղթերում մրցույթի պոտենցիալ մասնակիցների համար սահմանված պահանջներին համապատասխանող գնումների ընթացակարգերի մասնակիցների քանակը երկուսից պակաս է, ապա նախնական ընտրությունը և նախնական ընտրությամբ մրցույթը ճանաչվում են չկայացած:

8. ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Երկու փուլով բաց մրցույթը գնման իրականացման այն եղանակն է, որի դեպքում գնման մասին տեղեկատվությունը հաղորդվում է անձանց անսահմանափակ շրջանակի՝ գնումների տեղեկատվական համակարգում երկու փուլով մրցույթ անցկացնելու մասին ծանուցման, մրցութային փաստաթղթերի տեղադրման ճանապարհով, որում հաղթող է ճանաչվում այն անձը, որը մասնակցել է դրա անցկացման երկու փուլերին էլ, և որը, երկրորդ փուլի արդյունքներով, մրցութային հանձնաժողովի եզրակացությամբ, առաջարկել է պայմանագրի կատարման լավագույն պայմանները:

8.2. Երկու փուլով մրցույթ անցկացնելու ժամանակ կիրառվում են սույն Կարգով բաց մրցույթների համար սահմանված նորմերն ու կանոնները՝ հաշվի առնելով սույն բաժնի պահանջները: Երկու փուլով մրցույթ անցկացնելու մասին ծանուցման և մրցութային փաստաթղթերի տեղադրումն իրականացվում է սույն Կարգի 5-րդ բաժնում սահմանված կարգով և ժամկետներով:

8.3. Երկու փուլով մրցույթի անցկացման ժամանակ առաջին փուլում գնման ընթացակարգերի մասնակիցները պարտավոր են ներկայացնել մրցույթին մասնակցելու նախնական հայտեր, որոնք կպարունակեն գնման առարկայի վերաբերյալ առաջարկներ, առանց պայմանագրի գնի մասին առաջարկի նշման: Մրցութային փաստաթղթերը կարող են նախատեսել երկու փուլով մրցույթի մասնակիցների պարտականությունը՝ ներկայացնելու առաջարկներ մրցույթին մասնակցելու նախնական հայտերի կազմում գնման առարկայի տեխնիկական, որակական և այլ

բնութագրերի, մատակարարման պայմանների, ինչպես նաև երկու փուլով մրցույթի մասնակիցների մասնագիտական և տեխնիկական որակավորման մասին:

8.4. Առաջին փուլում Պատվիրատուն, Կազմակերպիչը իրավունք ունի անցկացնելու քննարկումներ մրցույթին մասնակցելու նախնական հայտեր ներկայացրած մասնակիցների հետ՝ կապված գնման առարկայի վերաբերյալ մասնակիցների նախնական մրցութային հայտերում պարունակվող ցանկացած առաջարկի հետ:

8.5. Առաջին փուլի արդյունքներով Պատվիրատուն, Կազմակերպիչն իրավունք ունի ճշտելու գնման պայմանները և կատարելու փոփոխություններ մրցութային փաստաթղթերում, այդ թվում.

- ճշտելու մրցութային փաստաթղթերում սկզբնապես նշված ցանկացած պահանջ՝ ուղղված գնումների առարկայի որակին, անվտանգությանը, տեխնիկական, ֆունկցիոնալ բնութագրերին, աշխատանքների (ծառայությունների) արդյունքներին, այլ պահանջներ՝ կապված Պատվիրատուի պահանջումներին մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության համապատասխանության որոշման հետ, ինչպես նաև լրացնել գնման առարկայի բնութագրերին և մրցույթի մասնակիցների կողմից դրա նկարագրությանն ուղղված ցանկացած նոր պահանջով,

- ճշտելու մրցութային փաստաթղթերում սկզբնապես նշված մրցույթին մասնակցելու հայտերի գնահատման ցանկացած չափանիշ և լրացնելու սույն Կարգի պահանջները բավարարող ցանկացած նոր չափանիշով:

8.6. Սույն Կարգի 8.5 կետին համապատասխան կատարված ցանկացած բացառության, փոփոխության կամ լրացման մասին մրցույթի առաջին փուլի մասնակիցներին հաղորդվում է մրցույթին մասնակցելու վերջնական հայտեր ներկայացնելու հրավերներում: Ընդ որում, նման փոփոխությունները արտացոլվում են գնումների տեղեկատվական համակարգում տեղադրված մրցութային փաստաթղթերում նշված հրավերների ուղարկման օրը:

8.7. Երկու փուլով մրցույթի երկրորդ փուլում Կազմակերպիչն առաջին փուլում մրցույթին մասնակցելու նախնական հայտեր ներկայացրած երկու փուլով մրցույթի բոլոր մասնակիցներին առաջարկում է ներկայացնել մրցույթին մասնակցելու վերջնական հայտեր՝ նշելով երկու փուլով մրցույթի մասնակցի կողմից առաջարկվող պայմանագրի գինը, հաշվի առնելով առաջին փուլից հետո վերանայված գնման պայմանները:

8.8. Երկու փուլով մրցույթի մասնակիցը, որը չի ցանկանում ներկայացնել մրցույթին մասնակցելու վերջնական հայտ, իրավունք ունի հրաժարվելու երկու փուլով մրցույթի հետագա մասնակցությունից, ընդ որում, այն դեպքում, եթե մրցութային փաստաթղթերում սահմանված է հայտերի ապահովման մասին պահանջ, այդ դեպքում

մրցութային փաստաթղթերով նախատեսված կարգով երկու փուլով մրցութի մասնակցին վերադարձվում է հայտի ապահովումը:

8.9. Հաղթողին որոշելու համար՝ մրցութին մասնակցելու վերջնական հայտերը բաց մրցութ անցկացնելու դեպքում դիտարկվում և գնահատվում են մրցութին մասնակցելու հայտերի դիտարկման և գնահատման մասին սույն Կարգի 5-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

9. ԳՆՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ԲԱՑ ՀԱՐՑՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

9.1. Առաջարկների բաց հարցում անցկացնելու ընդհանուր կարգը

9.1.1. Կազմակերպչի կողմից առաջարկների հարցում անցկացնելու համար հինք է հանդիսանում Գազպրոմ Խմբի մրցակցային գնումների հաստատված տարեկան պլանը:

9.1.2. Առաջարկների բաց հարցումն անցկացվում է հետևյալ հաջորդականությամբ.

- Պատվիրատուի կողմից առաջարկների հարցման պայմանների, պահանջների որոշում,
- Պատվիրատուի, Կազմակերպչի կողմից փաստաթղթերի նախապատրաստում՝ առաջարկների հարցում անցկացնելու համար,
- առաջարկների հարցման հայտարարում,
- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ընդունում, առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացում,
- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի գների սակարկություն (անհրաժեշտության դեպքում),
- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի դիտարկում և գնահատում,
- առաջարկների հարցման արդյունքների մասին որոշման ընդունում,
- առաջարկների հարցման արդյունքների մասին տեղեկատվության հրապարակում,
- առաջարկների հարցմանը մասնակցելու լավագույն հայտ ներկայացրած մասնակցի հետ պայմանագրի կնքում:

9.1.3. Չի թույլատրվում գնման ընթացակարգերի մասնակիցներից գանձել վճար առաջարկների հարցմանը մասնակցելու համար, բացառությամբ տպագիր տեսքով առաջարկների հարցման մասին փաստաթղթերի պատճենի տրամադրման վճարի:

9.2. Ծանուցում առաջարկների բաց հարցում անցկացնելու մասին

Առաջարկների բաց հարցում անցկացնելու մասին ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

9.2.1. գնման ձևը,

9.2.2. Պատվիրատուի, Կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը, փոստային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը,

9.2.3. առաջարկների հարցման առարկան՝ նշելով մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալը,

9.2.4. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը,

9.2.5. տեղեկություններ գնման առարկայի նախնական (առավելագույն) գնի (լոտի գնի) վերաբերյալ, այդ թվում՝ դրա որոշման կարգը (անհրաժեշտության դեպքում),

9.2.6. առաջարկների հարցման մասին փաստաթղթերի տրամադրման ժամկետը, վայրը և կարգը, գնումների տեղեկատվական համակարգը, որտեղ տեղադրված են առաջարկների հարցման վերաբերյալ փաստաթղթերը, գանձվող վճարի վճարման կարգը և ժամկետները տպագիր տեսքով առաջարկների հարցման մասին փաստաթղթերի պատճենի տրամադրման համար, եթե նման վճար սահմանված է, բացառությամբ էլեկտրոնային փաստաթղթի ձևով փաստաթղթերի տրամադրման դեպքերի,

9.2.7. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ապահովում տրամադրելու վերաբերյալ պահանջ, եթե նման պահանջ նախատեսված է առաջարկների հարցման պայմաններով,

9.2.8. պայմանագրի պայմանների կատարման ապահովում տրամադրելու մասին պահանջ, եթե նման պահանջ նախատեսված է առաջարկների հարցման պայմաններով,

9.2.9. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման վայրը, ժամկետի սկզբի և ավարտի ամսաթվերը և ժամը,

9.2.10. տեղեկություններ առաջարկների հարցում անցկացնելու վերաբերյալ ծանուցման և առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ ցանկացած ժամանակ՝ մինչև առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը Պատվիրատուի (Կազմակերպչի) փոփոխություններ կատարելու իրավունքի մասին, բացառությամբ հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգման և հայտերի բացման ընթացակարգի անցկացման ամսաթվի և ժամի, գնման մասնակիցների առաջարկների դիտարկման ու առաջարկների հարցումների արդյունքների ամփոփման ամսաթվի հետաձգման:

Տեղեկություններ Պատվիրատուի (Կազմակերպչի) իրավունքի մասին՝ երկարաձգելու առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը և համապատասխանաբար հետաձգելու հայտերի բացման ընթացակարգի անցկացման ամսաթիվն ու ժամը ցանկացած ժամանակ՝ մինչև առաջարկների ներկայացման հարցմանը մասնակցելու հայտերի բացման ընթացակարգի անցկացումը, ինչպես նաև մինչև գնման արդյունքների ամփոփումը՝ փոխելու գնման մասնակիցների առաջարկների դիտարկման և առաջարկների հարցման արդյունքների ամփոփման ամսաթիվը.

9.2.11. տեղեկություններ Պատվիրատուի (Կազմակերպչի) իրավունքի մասին՝ հրաժարվելու առաջարկների հարցում անցկացնելուց ցանկացած ժամանակ՝ մինչև դրա արդյունքների ամփոփումը, ինչպես նաև առաջարկների հարցման արդյունքներով պայմանագիր կնքելու Պատվիրատուի պարտականության բացակայության մասին,

9.2.12. գնման մասնակիցների առաջարկների դիտարկման և առաջարկների հարցման արդյունքների ամփոփման վայրը և ամսաթիվը,

9.2.13. ցուցում, որ առաջարկների հարցումը չի հանդիսանում սակարկություն (մրցույթ, աճուրդ) ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465 հոդվածների համաձայն կամ հրապարակային մրցույթ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1043-1047 հոդվածների համաձայն և Պատվիրատուի (Կազմակերպչի) վրա չի դնում պարտավորություններ, որոնք սահմանված են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածներով:

9.3. Առաջարկների հարցման վերաբերյալ փաստաթղթերը

Առաջարկների հարցման վերաբերյալ փաստաթղթերը պետք է պարունակեն հետևյալ տեղեկությունները.

9.3.1. Պատվիրատուի կողմից սահմանված՝ ապրանքների, աշխատանքների, ծառայությունների որակին, տեխնիկական բնութագրերին, անվտանգությանը, ապրանքի ֆունկցիոնալ բնութագրերին (սպառողական հատկություններին), ապրանքի չափերին, փաթեթավորմանը, բեռնմանը, աշխատանքների, ծառայությունների արդյունքներին ուղղված պահանջներ, այլ պահանջներ և ցուցանիշներ՝ կապված Պատվիրատուի պահանջմունքներին մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների համապատասխանության որոշման հետ,

9.3.2. պահանջներ՝ ուղղված առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բովանդակությանը, ձևին, ձևակերպմանը, կազմին, գործողության ժամկետին, դրա նախապատրաստման կարգին,

9.3.3. գնման առարկան՝ նշելով մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալը, բացառությամբ այն դեպքի, երբ անհնար է որոշել ապրանքի քանակը, աշխատանքների, ծառայությունների կոնկրետ ծավալը,

9.3.4. գնման մասնակիցների կողմից գնման առարկա հանդիսացող՝ մատակարարվող ապրանքի, դրա ֆունկցիոնալ բնութագրերի (սպառողական հատկություններին), դրա քանակական և որակական բնութագրերի նկարագրությանն ուղղված պահանջներ, գնման մասնակիցների կողմից գնման առարկա հանդիսացող՝ կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության, դրանց քանակական և որակական բնութագրերի նկարագրությանն ուղղված պահանջներ,

9.3.5. ապրանքի մատակարարման, աշխատանքի կատարման, ծառայության մատուցման վայրը, պայմանները և ժամկետները (ժամանահատվածները),

9.3.6. տեղեկություններ գնման առարկայի սկզբնական (առավելագույն) գնի (լոտի գնի), այդ թվում՝ նրա որոշման կարգի մասին (անհրաժեշտության դեպքում)

9.3.7. ապրանքի, աշխատանքի, ծառայության վճարման ձևը, ժամկետները և կարգը,

9.3.8. պայմանագրերի գնի (լոտի գնի) ձևավորման կարգը (հաշվի առնելով կամ առանց հաշվի առնելու փոխադրման, ապահովագրման, մաքսային տուրքերի, հարկերի և այլ պարտադիր վճարների վճարման հետ կապված վճարումները),

9.3.9. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման կարգը, վայրը, ամսաթվերն ու ժամկետի սկսելու և ավարտվելու ամսաթվերն ու ժամանակը,

9.3.10. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացման կամ էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացված՝ առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերին մուտքի իրավունքի բացման վայրը, կարգը, ամսաթիվն ու ժամանակը,

9.3.11 Պատվիրատուի կողմից սահմանված՝ գնման մասնակիցներին առաջադրվող պահանջները և գնման մասնակիցների կողմից ներկայացվող փաստաթղթերի ցանկը՝ սահմանված պահանջներին դրանց համապատասխանության հաստատման համար,

9.3.12. գնման ընթացակարգերի մասնակիցներին առաջարկների հարցման մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումների տրամադրման ձևերը, կարգը և սկսման ու ավարտման ամսաթվերը,

9.3.13. տեղեկություններ առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերը մերժելու Հանձնաժողովի իրավունքի մասին՝ նշելով նման մերժման համար թույլատրելի հիմքերի ցանկը,

9.3.14. տեղեկություններ մասնակիցներին հայտերի գների նվազեցում առաջարկելու (սակարկություն անցկացնելու) Կազմակերպչի իրավունքի մասին, մինչև գնման արդյունքների ամփոփումը հայտերի գների իջեցում պարունակող նոր առևտրային առաջարկներ ներկայացնելու՝ մասնակիցների իրավունքի մասին, ինչպես նաև պահանջներ՝ ուղղված սակարկության ժամանակ գնման մասնակիցների կողմից ներկայացվող նոր առևտրային առաջարկներին,

9.3.15. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո ստացված՝ առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի վերադարձման կարգը,

9.3.16. տեղեկություններ ցանկացած ժամանակ, առանց պատճառների բացատրության, առաջարկների հարցում անցկացնելուց հրաժարվելու՝ Պատվիրատուի, Կազմակերպչի իրավունքի մասին, այդ դեպքում չկրելով որևէ պատասխանատվություն գնման մասնակիցների առջև, ինչպես նաև՝ տեղեկություններ առանց պայմանագրի կնքման, դրա արդյունքներով առաջարկների հարցման ընթացակարգն ավարտելու՝ Պատվիրատուի, Կազմակերպչի իրավունքի մասին,

9.3.17. գնման մասնակիցների առաջարկների դիտարկման և առաջարկների հարցման արդյունքների ամփոփման վայրը և ամսաթիվը,

9.3.18. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ապահովում տրամադրելու կարգը և ժամկետը, չափը, ձևը, գործողության ժամկետն այն դեպքում, եթե նման պահանջները սահմանված են Կազմակերպչի կողմից,

9.3.19. պայմանագրի պայմանների կատարման ապահովում տրամադրելու կարգը և ժամկետը, չափը, ձևը, գործողության ժամկետն այն դեպքում, եթե նման պահանջները սահմանված են Պատվիրատուի կողմից,

9.3.20. պայմանագրի նախագիծը (մի քանի լոտով առաջարկների ներկայացման հարցման անցկացման դեպքում՝ պայմանագրի նախագիծը յուրաքանչյուր լոտի վերաբերյալ), որը հանդիսանում է առաջարկների հարցման մասին փաստաթղթերի անբաժանելի մասը,

9.3.21. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի գնահատման և համադրման չափանիշները,

9.3.22. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի գնահատման և համադրման կարգը,

9.3.23. տեղեկություններ Կազմակերպչի՝ մի քանի լավագույն հայտ որոշելու իրավունքի մասին, տեղեկություններ Պատվիրատուի՝ առաջարկների հարցման արդյունքներով մի քանի պայմանագիր կնքելու իրավունքի մասին (անհրաժեշտության դեպքում),

9.3.24. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի վերադարձման կարգը՝ բաց առաջակների հարցում անցկացնելուց Պատվիրատուի, Կազմակերպչի հրաժարման դեպքում.

9.3.25. այլ տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են գնման ընթացակարգի մասնակիցներին առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի նախապատրաստման համար:

9.4. Առաջարկների հարցման հայտարարությունը, առաջարկների հարցման մասին փաստաթղթերի տրամադրումը

9.4.1. Առաջարկների բաց հարցում անցկացնելու մասին ծանուցումը Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղադրվում է գնումների տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտման անսաթվից հինգ աշխատանքային օր առաջ:

9.4.2. Առաջարկների բաց հարցում անցկացնելու մասին ծանուցումը տեղադրելուց հետո Պատվիրատուն (Կազմակերպիչը) կարող է առաջարկների հարցման պոտենցիալ մասնակիցներին ուղարկել առաջարկների հարցմանը մասնակցելու հրավեր:

9.4.3. Պատվիրատուն (Կազմակերպիչը) ապահովում է գնումների տեղեկատվական համակարգում առաջարկների հարցման մասին փաստաթղթերի տեղադրումը առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցումը տեղադրելու հետ միաժամանակ: Առաջարկների հարցման մասին փաստաթղթերը պետք է հասանելի լինեն համացանցում ծանոթանալու համար՝ առանց վճարի գանձման:

9.4.4. Գնումների տեղեկատվական համակարգում առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցումը տեղադրելու օրվանից սկսած, Կազմակերպիչը ցանկացած շահագրգիռ անձի գրավոր ներկայացված դիմումի հիման վրա, համապատասխան դիմումի ստացման օրվանից երկու աշխատանքային օրվա

ընթացքում այդ անձին տպագիր տեսքով տրամադրում է առաջարկների հարցման փաստաթղթերի պատճենը՝ բաց առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցման մեջ նշված կարգին համապատասխան:

Առաջարկների հարցման մասին փաստաթղթերի պատճենը տպագիր տեսքով տրամադրվում է՝ շահագրգիռ անձի կողմից առաջարկների հարցման մասին փաստաթղթերի պատճեն տրամադրելու համար վճարը վճարելուց հետո, եթե այդպիսի վճար սահմանված է բաց առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցման մեջ: Նշված վճարի չափը չպետք է գերազանցի Կազմակերպչի ծախսերը՝ կապված առաջարկների հարցման մասին փաստաթղթերի պատճենի պատրաստման և այն նշված դիմումը ներկայացրած տվյալ անձին փոստային կապի միջոցով առաքելու հետ, եթե նման առաքման իրականացման հնարավորությունը նախատեսված է առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցմամբ:

9.4.5 Կազմակերպիչը պարտավոր է պատասխանել գնման ընթացակարգերի մասնակցի ցանկացած գրավոր հարցմանը, որը վերաբերում է առաջարկների հարցման մասին փաստաթղթերի պարզաբանմանը, եթե այն ստացվել է պարզաբանման համար սահմանված ժամկետից ոչ ուշ:

9.4.6. Մինչև առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը Պատվիրատուն (Կազմակերպիչը) կարող է փոփոխություններ կատարել առաջարկների հարցման մասին ծանուցման և փաստաթղթերի մեջ: Մինչև առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացման ընթացակարգի անցկացման սկիզբը Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի երկարաձգելու առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը և համապատասխանաբար տեղափոխելու հայտերի բացման ընթացակարգի անցկացման ամսաթիվն ու ժամանակը: Մինչև գնման արդյունքների ամփոփումը Պատվիրատուն (Կազմակերպիչը) իրավունք ունի փոխելու գնման մասնակիցների առաջարկների դիտարկման և առաջարկների հարցման արդյունքների ամփոփման ամսաթիվը:

9.4.7. Գնման մասին ծանուցման, գնման մասին փաստաթղթերում կատարվող փոփոխությունները, նման փաստաթղթերի դրույթների պարզաբանումները տեղադրվում են գնումների տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան նշված փոփոխությունների կատարման, նշված պարզաբանումների տրամադրման մասին որոշում ընդունելու օրվանից երեք օրվա ընթացքում:

9.5. Առաջարկների հարցման անցկացումից հրաժարվելը

9.5.1. Պատվիրատուն, Կազմակերպիչը իրավունք ունի հրաժարվելու առաջարկների հարցում անցկացնելուց, ինչպես նաև ցանկացած ժամանակ ավարտելու առաջարկների հարցման ընթացակարգը՝ առանց դրա արդյունքներով պայմանագիր կնքելու, ընդ որում՝ Պատվիրատուն, Կազմակերպիչը առաջարկների հարցման մասնակցին չի փոխհատուցում ծախսերը, որոնք նա կրել է կապված առաջարկների հարցման ընթացակարգերին մասնակցելու հետ:

9.5.2. բաց առաջարկների հարցում անցկացնելուց հրաժարվելու վերաբերյալ ծանուցումը Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղադրվում է գնումների տեղեկատվական համակարգում:

9.5.3. առաջարկների բաց հարցում անցկացնելուց հրաժարվելու մասին ծանուցումը տեղադրելուց հետո Կազմակերպիչը, գնման մասնակցի գրավոր հարցմամբ, վերադարձնում է առաջարկների հարցմանը մասնակցելու՝ նրա կողմից ներկայացրած հայտը, ներառյալ առաջարկների հարցման հայտի ապահովումը այն դեպքում, եթե այն տրամադրված է եղել մասնակցի կողմից առաջարկների հարցման մասին փաստաթղթերով նախատեսված կարգով:

9.6. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացումը

9.6.1. Առաջարկների հարցմանը մասնակցելու համար գնման ընթացակարգերի մասնակիցը առաջարկների հարցմանը մասնակցելու հայտ է ներկայացնում առաջարկների հարցման մասին փաստաթղթերում սահմանված պահանջներին համապատասխան:

9.6.2. Մասնակիցը կարող է փոփոխել, լրացնել կամ հետ կանչել առաջարկների հարցմանը մասնակցելու իր հայտը այն ներկայացնելուց հետո այն պայմանով, որ Կազմակերպիչը ստանա գրավոր ծանուցում առաջարկի փոփոխման, լրացման կամ հետ կանչման վերաբերյալ մինչև առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը՝ սահմանված առաջարկների հարցման փաստաթղթերում:

9.6.3. Հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո ստացված առաջարկների հարցմանը մասնակցելու հայտը չի դիտարկվում և վերադարձվում է Կազմակերպչի կողմից գնման ընթացակարգերի մասնակցի հարցմամբ՝ առաջարկների հարցման մասին փաստաթղթերում նախատեսված կարգով:

9.6.4. Այն դեպքում, եթե դա նախատեսված է գնման մասին փաստաթղթերով՝ առաջարկների հարցման մասնակիցը, գնման մասին փաստաթղթերով սահմանված կարգով, մինչև առաջարկների հարցման արդյունքների ամփոփման օրվա ավարտն իրավունք ունի նվազեցնելու իր կողմից հայտարարված գինը՝ ներկայացնելով առաջարկների հարցման մասին փաստաթղթերի պահանջներին համապատասխան ձևակերպված նոր առևտրային առաջարկ:

9.7. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացումը

9.7.1. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերը Կազմակերպչի կողմից բացվում են առաջարկների հարցման մասին փաստաթղթերում նշված օրը, ժամին և վայրում:

9.7.2. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտեր ներկայացրած գնման ընթացակարգերի մասնակիցները կամ նրանց ներկայացուցիչներն իրավունք ունեն ներկա գտնվելու առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացման կամ

էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ներկայացված առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի մուտքի բացման ժամանակ:

9.7.3. Առաջարկների հարցմանը մասնակցելու համար գնման ընթացակարգերի մեկ մասնակցի կողմից երկու և ավելի հայտ ներկայացնելու փաստ հայտնաբերելու դեպքում, պայմանով, եթե նման մասնակցի կողմից առաջարկների հարցմանը մասնակցելու համար ավելի վաղ ներկայացված հայտերը հետ չեն կանչվել, գնման ընթացակարգերի նման մասնակցի՝ առաջարկների տվյալ հարցման վերաբերյալ ներկայացրած առաջարկների հարցմանը մասնակցելու բոլոր հայտերը դիտարկման չեն ընդունվում:

9.7.4. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացումն անցկացվում է Կազմակերպչի (Մրցակցային գնումների նախապատրաստման և անցկացման դեպարտամենտի, ստորաբաժանման) կողմից: Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացման ժամանակ հայտարարվում և առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացման արձանագրության մեջ ներառվում են հետևյալ տեղեկությունները.

- գնման ընթացակարգերի յուրաքանչյուր մասնակցի անվանումը (իրավաբանական անձի համար), անունը, ազգանունը, հայրանունը (ֆիզիկական անձի համար) և գտնվելու վայրի հասցեն, որի առաջարկների հարցմանը մասնակցելու հայտը բացվում է,

- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտում պարունակվող առաջարկ պայմանագրի (գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) գնի վերաբերյալ, այլ տեղեկություններ, որոնք Կազմակերպիչն անհրաժեշտ է համարում արձանագրության մեջ ներառելու համար:

9.7.5. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացման արձանագրությունը կազմվում և ստորագրվում է Կազմակերպչի կողմից:

9.7.6. Հայտերի բացման ժամանակ Կազմակերպիչն իրավունք ունի հայտերի բացման գործընթացին ներկա՝ առաջարկների հարցման մասնակիցների ներկայացուցիչներից պահանջելու առաջարկների հարցմանը մասնակցելու համար ներկայացված հայտերի դրույթների պարզաբանում:

9.7.7. Այն դեպքում, եթե մինչև առաջարկների հարցմանը մասնակցելու համար հայտերի ներկայացման ժամկետի ավարտը չի ներկայացվել առաջարկների հարցմանը մասնակցելու ոչ մի հայտ, Կազմակերպիչն իրավունք ունի առաջարկների հարցումը ճանաչելու չկայացած: Առաջարկների հարցումը չկայացած ճանաչելու դեպքում Կազմակերպիչն իրավունք ունի անցկացնելու առաջարկների կրկնակի հարցում, իսկ առաջարկների կրկնակի հարցում անցկացնելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուն իրավունք ունի կնքելու պայմանագիր միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ՝ Կարգի 16.1.11. կետին համապատասխան:

9.7.8. Այն դեպքում, եթե մինչև առաջարկների հարցմանը մասնակցելու համար հայտերի ներկայացման ժամկետի ավարտը ներկայացվել է միայն առաջարկների հարցման մասնակցության մեկ հայտ, ապա առաջարկների հարցմանը մասնակցելու նման հայտը առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված կարգով բացվում է, անցկացվում է դրա վերլուծությունը, դիտարկումը և գնահատումը:

9.8. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի վերլուծությունը, դիտարկումը և գնահատումը

9.8.1. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի վերլուծությունը, դիտարկումը և գնահատումը կարող են անցկացվել միաժամանակ կամ հաջորդաբար:

9.8.2. Կազմակերպիչն անց է կացնում առաջարկների հարցման վերաբերյալ փաստաթղթերի ձևական /ֆորմա/ պահանջներին առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի համապատասխանությունը ստուգելու վերլուծություն, այդ թվում.

- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի առարկայի համապատասխանությունը առաջարկների հարցման վերաբերյալ փաստաթղթերում նշված գնման առարկային, այդ թվում՝ քանակական ցուցանիշներով (մատակարարվող ապրանքի քանակ, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալ),

- առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված փաստաթղթերի առկայությունը և պատշաճ ձևակերպումը,

- առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ պարունակվող պայմանագրի նախագծի պայմանների հետ գնման մասնակցի համաձայնության առկայությունը,

- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի ապահովման առկայությունը, եթե առաջարկների ներկայացման հարցման մասին փաստաթղթերի մեջ սահմանված է այդպիսի պահանջ,

- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտում պարունակվող պայմանագրի (գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) գնի առաջարկի չգերազանցումը Պատվիրատուի, Կազմակերպչի կողմից սահմանված առաջարկների հարցման առարկայի (պայմանագրի) նախնական (առավելագույն) գնից:

9.8.3. Կազմակերպչի կողմից անց է կացվում առաջարկների հարցման մասնակիցների մասին տեղեկատվության ստուգում, այդ թվում՝ իրականացվում է մասնակցի իրավունակության, վճարունակության և գործարար հեղինակության գնահատում՝ ներգրավելով կորպորատիվ պաշտպանության ծառայությանը:

9.8.4. Կազմակերպիչն իրավունք ունի առաջարկների հարցման մասնակիցներին հարցում անելու նրանց կողմից ներկայացված՝ առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի դրույթների պարզաբանումներ տրամադրելու մասին:

9.8.5. Առաջարկների հարցման մասնակցի գրավոր համաձայնությամբ Կազմակերպիչն կարող է ուղղել մասնակցի հայտում առկա ակնհայտ թվաբանական և քերականական սխալները:

9.8.6. Բառերով և թվերով արտահայտված գումարների միջև անհամապատասխանությունների առկայության դեպքում նախապատվությունը տրվում է բառերով արտահայտված գումարին:

Միավոր գնի և քանակությամբ միավոր գնի բազմապատկման արդյունքում ստացված ընդհանուր գումարի միջև անհամապատասխանությունների առկայության դեպքում առավելություն ունի միավոր գինը, բացառությամբ այն դեպքերի, երբ, Կազմակերպչի կարծիքով, միանգամայն ակնհայտորեն տեղի է ունեցել կոպիտ սխալ

միավոր գնի մեջ տասնորդական կոտորակի նշանի դրման մեջ: Նման դեպքերում առավելություն ունի ընդհանուր գումարը, իսկ միավոր գինը պետք է ուղղվի:

9.8.7. Կազմակերպիչն իրավունք ունի ուշադրություն չդարձնել մանր թերությունների անհամապատասխանությունների և վրիպակների վրա, որոնք էական ազդեցություն չեն թողնում առաջարկների հարցման մասնակցի կողմից առաջադրվող պայմանների և առաջարկների հարցման մասնակցի՝ պայմանագրով պարտավորությունների կատարման հետ կապված հնարավորությունների վրա:

9.8.8. Հայտերի վերլուծության և առաջարկների հարցման մասնակիցների մասին տեղեկատվության ստուգման արդյունքներով Կազմակերպիչը Հանձնաժողովին ներկայացնում է տեղեկատվություն որոշումներ ընդունելու համար, այդ թվում՝ առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի մերժման առաջարկներ առաջարկների հարցման մասնակցի՝ Կարգի 1.5.1 կետին համապատասխան առաջարկների հարցման մասին փաստաթղթերում սահմանված պարտադիր պահանջներին չհամապատասխանելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, եթե մասնակցի կողմից առաջարկված պայմանագրի (գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) գինը գերազանցում է առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցման կամ առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ նշված առաջարկների հարցման առարկայի (պայմանագրի) նախնական (առավելագույն) գինը, ինչպես նաև Կարգի 9.8.9. կետում նշված այլ հիմքերով:

9.8.9. Կազմակերպչի կողմից անցկացված՝ հայտերի վերլուծության և առաջարկների հարցման մասնակիցների մասին տեղեկատվության ստուգման արդյունքներով Հանձնաժողովն իրավունք ունի մերժելու առաջարկների մասնակցության հայտը հետևյալ դեպքերում.

9.8.9.1. առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ նշված գնման առարկային առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի առարկայի անհամապատասխանությունը, այդ թվում՝ քանակական ցուցանիշներով (մատակարարվող ապրանքի քանակի, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալի անհամապատասխանությունը),

9.8.9.2. առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված փաստաթղթերի բացակայությունը կամ տվյալ փաստաթղթերում առաջարկների հարցման մասնակցի մասին կամ գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մասին անհավաստի տեղեկությունների առկայությունը,

9.8.9.3. առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի ապահովման բացակայությունը, եթե առաջարկների ներկայացման հարցման մասին փաստաթղթերի մեջ սահմանված է տվյալ պահանջը,

9.8.9.4. առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ պարունակվող պայմանագրի նախագծի պայմանների հետ առաջարկների հարցման մասնակցի անհամաձայնությունը,

9.8.9.5. **պայմանագրի** (լոտի) նախնական (առավելագույն) սահմանված գինը գերազանցող առաջարկների առկայությունը պայմանագրի գնի (լոտի գնի) (գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների) վերաբերյալ,

9.8.9.6. Կազմակերպչի գրավոր հարցմանը առաջարկների հարցման մասնակցի կողմից Կազմակերպչին իր կողմից ներկայացված առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի դրույթների գրավոր պարզաբանումներ չներկայացնելը, այդ թվում՝ ակնհայտ թվաբանական սխալների, բառերով և թվերով արտահայտված գումարների միջև անհամապատասխանությունների, միավոր գնի և քանակությամբ միավոր գնի բազմապատկման արդյունքում ստացված ընդհանուր գումարի միջև անհամապատասխանությունները ուղղելու հետ անհամաձայնությունը,

9.8.9.7. առաջարկների հարցման մասնակցի մասին անբարեխիղճ մատակարարների գրանցամատյանում տեղեկությունների առկայությունը, եթե առաջարկների հարցման մասին փաստաթղթերում սույն Կարգի 1.5.2.2 կետով սահմանվել է այդպիսի պահանջ՝ մատնանշելով անբարեխիղճ մատակարարների համապատասխան գրանցամատյանը,

9.8.9.8. գնման մասնակցի կողմից ներկայացված մրցակցային գնմանը մասնակցելու հայտի մեջ անհավաստի տեղեկություններ հայտնաբերելու, գնման մասնակցի անհամապատասխանության դեպքում, ինչպես նաև նրա կողմից գնման մասին փաստաթղթերով սահմանված պայմանագրի կատարման համար ներգրավված համակատարողների (ենթակապալառուների) անհամապատասխանությունը գնումների մասնակիցներին, համակատարողներին (ենթակապալառուներին) առաջադրվող պահանջներին, մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների անհամապատասխանությունը գնման մասին փաստաթղթերով սահմանված՝ գնման առարկա հանդիսացող ապրանքներին, աշխատանքներին, ծառայություններին առաջադրվող պահանջներին,

9.8.9.9. Առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ կարող են սահմանվել սույն Կարգին չհակասող՝ մասնակիցների հայտերի մերժման լրացուցիչ հիմքեր:

9.8.10. Այն դեպքում, եթե առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի վերլուծության և առաջարկների հարցման մասնակիցների մասին տեղեկատվության ստուգման արդյունքներով Հանձնաժողովի կողմից մերժվում են առաջարկների հարցմանը մասնակցելու բոլոր հայտերը, Հանձնաժողովը որոշում է ընդունում առաջարկների նման հարցումը չկայացած ճանաչելու մասին:

9.8.11. Այն դեպքում, եթե առաջարկների մասին փաստաթղթերով նախատեսված է երկու և ավելի լոտ, առաջարկների հարցումը ճանաչվում է չկայացած միայն այն լոտի մասով, որով ընդունվել է որոշում այդ լոտի վերաբերյալ առաջարկների հարցմանը մասնակցելու բոլոր հայտերի մերժման մասին:

9.8.12. Այն դեպքում, եթե առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի վերլուծության արդյունքներով առաջարկների հարցմանը մասնակցելու միայն մեկ հայտ չի մերժվել, ապա առաջարկների հարցմանը մասնակցելու նման հայտը դիտարկվում և գնահատվում է առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված կարգով:

9.8.13. Պայմանագրի կատարման լավագույն պայմանների երևան հանելու նպատակով անցկացվում է առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի

դիտարկում և գնահատում: Այն դեպքում, եթե որոշում է ընդունվել առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերը մերժելու մասին, ապա դիտարկվում և գնահատվում են միայն առաջարկների հարցմանը մասնակցելու այն հայտերը, որոնք չեն մերժվել:

9.8.14. Կազմակերպիչն (Մրցակցային գնումների նախապատրաստման և անցկացման դեպարտամենտը, ստորաբաժանումը) իրավունք ունի առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի դիտարկման, գնահատման և համադրման համար ներգրավելու փորձագետների՝ Կազմակերպչի (համապատասխանաբար «Գազպրոմ» ՉԲԸ-ի, Գազպրոմ Խմբի ընկերությունների) մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների, Պատվիրատուի գնման առարկայից հատուկ գիտելիքների տիրապետող կողմնակի անձանց:

9.9. Առաջարկների հարցման արդյունքների ամփոփումը

9.9.1. Առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի դիտարկման, գնահատման և համադրման արդյունքների հիման վրա Հանձնաժողովի կողմից կարող են ընդունվել հետևյալ որոշումները.

- առաջարկների հարցմանը մասնակցելու լավագույն հայտը ընտրելու մասին,
- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի գների սակարկություն անցկացնելու մասին,
- առաջարկների հարցմանը մասնակցելու բոլոր հայտերը մերժելու և առաջարկների հարցումը չկայացած ճանաչելու մասին,
- առաջարկների հարցում անցկացնելուց հրաժարվելու մասին,
- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի լրացուցիչ գնահատում անցկացնելու մասին:

9.9.2. Հանձնաժողովի որոշումը ձևակերպվում է արձանագրությամբ, որում գնման մասին ընդհանուր տեղեկություններից բացի (գնման առարկայի և միջոցի, Պատվիրատուի, Կազմակերպչի անվանումը, գնման անցկացման մասին ծանուցման համարները և ամսաթվերը) պետք է պարունակվեն հետևյալ տեղեկությունները.

- առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացման ընթացակարգի անցկացման վայրի, օրվա, ժամի մասին, առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի բացման ընթացակարգին առաջարկների հարցմանը մասնակցելու հայտեր ներկայացրած մասնակիցների մասին,
- ընդունված որոշման մասին,
- լավագույն հայտը ընտրելու մասին որոշումն ընդունելու դեպքում նշվում են առաջարկների հարցմանը մասնակցելու լավագույն ճանաչված հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (իրավաբանական անձանց համար), անունը, ազգանունը, հայրանունը (ֆիզիկական անձի համար), գտնվելու վայրի հասցեն և առաջարկի գինը:

9.9.3. Առաջարկների հարցում անցկացնելու ընթացքում կազմված արձանագրությունները Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղադրվում են գնումների տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան նման արձանագրությունների ստորագրման օրվանից երեք օր հետո:

9.9.4. Առաջարկների հարցման Կազմակերպիչը գրավոր ձևով ծանուցում է առաջարկների հարցմանը մասնակցելու լավագույն ճանաչված հայտը ներկայացրած մասնակցին առաջարկների հարցման արդյունքների մասին:

9.10. Առաջարկների հարցման արդյունքներով պայմանագրի կնքումը և կատարումը

9.10.1. Պայմանագիրը կնքվում է առաջարկների հարցման արդյունքների ամփոփման արձանագրության հիման վրա՝ առաջարկների հարցման մասին փաստաթղթերում և առաջարկների հարցման մասնակցի (որի հետ կնքվում է պայմանագիր) կողմից ներկայացված հայտում նշված պայմաններով: Առաջարկների հարցման արդյունքներով կնքվող պայմանագրի գինը չի կարող գերազանցել առաջարկների հարցումն անցկացնելիս Կազմակերպչի (Պատվիրատուի) կողմից սահմանված պայմանագրի նախնական (առավելագույն) գինը (լոտի գինը), մասնակցի, որի հետ կնքվում է պայմանագիր, հայտում նշված պայմանագրի գինը և կարող է նվազեցվել կողմերի համաձայնությամբ:

9.10.2. Առաջարկների հարցմանը մասնակցելու լավագույն ճանաչված հայտը ներկայացրած մասնակիցը առաջարկների հարցման մասին փաստաթղթերով սահմանված ժամկետում և/կամ առաջարկների հարցման արդյունքների մասին ծանուցման մեջ պետք է Պատվիրատուին ներկայացնի իր կողմից ստորագրված պայմանագրի տեքստը առաջարկների հարցման մասին փաստաթղթերի և առաջարկների հարցմանը մասնակցելու՝ իր կողմից ներկայացված հայտի մեջ պարունակվող պայմաններով:

9.10.3. Այն դեպքում, եթե առաջարկների հարցմանը մասնակցելու լավագույն ճանաչված հայտը ներկայացրած մասնակիցը սահմանված ժամկետում չի ներկայացրել Պատվիրատուին իր կողմից ստորագրված պայմանագրի նախագիծը՝ պատրաստված Կարգի 9.10.1. կետին համապատասխան, նման մասնակիցը համարվում է պայմանագրի կնքումից խուսափող:

9.10.4. Առաջարկների հարցմանը մասնակցելու լավագույն ճանաչված հայտը ներկայացրած մասնակիցը պայմանագրով սահմանված ժամկետում պետք է Պատվիրատուին ներկայացնի պայմանագրի կատարման ապահովում այն դեպքում, եթե առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ սահմանվել է նման պահանջ: Պայմանագրի կատարման ապահովումը տրամադրվում է առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ նախատեսված չափով և ձևով:

9.10.5. Այն դեպքում, եթե առաջարկների հարցմանը մասնակցելու լավագույն ճանաչված հայտը ներկայացրած մասնակիցը խուսափել է պայմանագրի կնքումից կամ չի տրամադրել պայմանագրի կատարման ապահովումը, եթե առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ սահմանվել է նման պահանջ, Պատվիրատուն անհապաղ ծանուցում է Կազմակերպչին այդ փաստերի մասին: Կազմակերպիչը պետք է մասնակցից պահանջի ներկայացնել առաջարկների հարցմանը մասնակցելու հայտի ապահովումը, եթե դա նախատեսված է առաջարկների հարցման փաստաթղթերով: Հանձնաժողովն իրավունք ունի վերանայել առաջարկների հարցման արդյունքները և

որոշել այլ լավագույն հայտ կամ Կազմակերպիչը հայտարարում է առաջարկների նոր հարցում:

9.10.6. Եթե մի քանի լուտերով լավագույնն են ճանաչվել առաջարկների հարցմանը մասնակցող միևնույն մասնակցի հայտերը, ապա այդպիսի մասնակցի հետ պետք է կնքվի յուրաքանչյուր լուտով առանձին պայմանագիր:

9.10.7. Պայմանագրի կատարումն իրականացվում է դրա պայմաններին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և այլ նորմատիվային իրավական ակտերին համապատասխան:

10. ԳՆՈՒՄՆԵՐ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՓԱԿ ՀԱՐՑՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ

10.1. Պատվիրատուն իրավունք ունի անցկացնելու առաջարկների փակ հարցում սույն Կարգի 4.6. կետով սահմանված դեպքերում:

10.2. Առաջարկների փակ հարցում անցկացնելիս կիրառվում են առաջարկների բաց հարցումներ անցկացնելու համար սույն Կարգով սահմանված նորմերը և կանոնները՝ հաշվի առնելով սույն բաժնի պահանջները:

10.3. Առաջարկների փակ հարցում անցկացնելու և արդյունքների մասին տեղեկատվությունը, ինչպես նաև առաջարկների փակ հարցումներ անցկացնելիս ձևակերպվող փաստաթղթերը, առաջարկների փակ հարցում անցկացնելու ընթացքում ստացված տեղեկատվությունը ենթակա չեն հրապարակման զանգվածային լրատվության միջոցներում և համացանցում բաց մուտքով տեղադրման:

10.4. Առաջարկների փակ հարցում անցկացնելիս ապրանքների, աշխատանքների, ծառայությունների գնման դեպքում, որոնց մասին տեղեկությունները վերաբերում են պետական, ծառայողական, բանկային գաղտնիքին, առաջարկների հարցմանը մասնակցելու են հրավիրվում միայն այն մասնակիցները, որոնք ունեն պետական, ծառայողական, բանկային գաղտնիք կազմող տեղեկություններից տիրապետելու համապատասխան թույլտվություններ:

10.5. Առաջարկների փակ հարցում անցկացնելիս առաջարկների հարցման մասին փաստաթղթերը տրամադրվում են միայն առաջարկների փակ հարցմանը մասնակցելու հրավիրված անձանց:

10.6. Առաջարկների փակ հարցմանը մասնակցելու հայտերն ընդունվում են միայն առաջարկների փակ հարցմանը մասնակցելուն հրավիրված անձանցից, որոնց տրամադրվել է առաջարկների հարցման մասին փաստաթղթեր Կազմակերպչի կողմից:

10.7. Առաջարկների փակ հարցումը կարող է անցկացվել սակարկության կիրառմամբ, որի մասին առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ պետք է լինի համապատասխան նշում: Սակարկման մասին որոշումն ընդունում է Կազմակերպիչը կամ Հանձնաժողովը:

10.8. Պատվիրատուն, Կազմակերպիչն իրավունք ունի հրաժարվելու առաջարկների փակ հարցում անցկացնելուց, ինչպես նաև դրա արդյունքներով ցանկացած ժամանակ ավարտելու առաջարկների հարցումը առանց պայմանագիր կնքելու, ընդ որում՝ Պատվիրատուն, Կազմակերպիչը առաջարկների հարցման

մասնակցին չի փոխհատուցում առաջարկների հարցման ընթացակարգերին մասնակցելու հետ կապված նրա կողմից կրած ծախսերը:

10.9. Առաջարկների փակ հարցում անցկացնելուց հրաժարվելու մասին ծանուցումները Կազմակերպչի կողմից ուղարկվում են Կազմակերպչի կողմից առաջարկների փակ հարցմանը մասնակցելուն հրավիրված՝ գնման ընացակարգերի բոլոր մասնակիցներին:

10.10. Առաջարկների փակ հարցում անցկացնելուց հրաժարվելու մասին մասնակիցներին ծանուցելուց հետո Կազմակերպիչն առաջարկների հարցման մասնակցի գրավոր հարցմամբ վերադարձնում է առաջարկների հարցմանը մասնակցելու՝ նրա կողմից ներկայացված հայտը, այդ թվում՝ առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ապահովումը, եթե այն տրամադրվել է մասնակցի կողմից, առաջարկների ներկայացման հարցման մասին փաստաթղթերով նախատեսված կարգով:

10.11. Առաջարկների փակ հարցում անցկացնելիս չի թույլատրվում իրականացնել ձայնագրություն և տեսագրություն:

11. ՆԱԽՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

11.1. Առաջարկների հարցում անցկացնելիս Կազմակերպիչն իրավունք ունի անցկացնելու գնման ընթացակարգերի մասնակիցների նախնական ընտրություն Պատվիրատուի (գնման Նախաձեռնողի) կողմից սահմանված՝ մասնակիցներին առաջադրվող պահանջներին դրանց համապատասխանությունը երևան հանելու նպատակով:

11.2. Նախնական ընտրությամբ առաջարկների հարցում անցկացնելիս կիրառվում են սույն Կարգով սահմանված նորմեր և կանոններ առաջարկների ներկայացման բաց հարցման համար՝ հաշվի առնելով սույն բաժնի պահանջները, ընդ որում՝ նախնական ընտրությամբ առաջարկների ներկայացման հարցմանը մասնակցելուն թույլատրվում են նախնական ընտրություն անցած գնման ընթացակարգերի մասնակիցները:

11.3. Պատվիրատուն (Կազմակերպիչը) գնումների տեղեկատվական համակարգում տեղադրում է նախնական ընտրությամբ առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցում, նախնական ընտրության մասին փաստաթղթերը, առաջարկների հարցման մասին փաստաթղթերը:

11.4. Նախնական ընտրությամբ առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցումը գնումների տեղեկատվական համակարգում տեղադրվում է նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի ներկայացման ավարտից ոչ ուշ, քան հինգ օր առաջ և առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի ներկայացման ավարտից ոչ ուշ, քան 10 օր առաջ և պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

11.4.1. Սույն Կարգի 9.2. կետում թվարկված տեղեկությունները,

11.4.2. նախնական ընտրության մասին փաստաթղթերի տրամադրման ժամկետը, վայրը և կարգը, գնումների տեղեկատվական համակարգի կայքը, որում տեղադրված է նախնական ընտրության մասին փաստաթղթերը, նախնական ընտրության մասին փաստաթղթերի պատճենը տպագիր տեսքով տրամադրելու համար գանձվող վճարի վճարման կարգը և ժամկետները, եթե նման վճար սահմանված է, բացառությամբ էլեկտրոնային փաստաթղթի ձևով փաստաթղթերի տրամադրման դեպքերի,

11.4.3. նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի ներկայացման կարգը, վայրը և ժամկետը, նախնական ընտրությանը մասնակցելու հայտերի դիտարկման և նախնական ընտրության արդյունքների ամփոփման վայրը և ժամկետը:

11.5. Նախնական ընտրության մասին փաստաթղթերը Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից տեղադրվում են գնումների տեղեկատվական համակարգում նախնական ընտրությամբ առաջարկների հարցման մասին ծանուցման հետ միաժամանակ և պետք է պարունակեն հետևյալ տեղեկատվությունը.

11.5.1. սույն Կարգի 1.5. կետին համապատասխան սահմանված՝ առաջարկների հարցման պոտենցիալ մասնակիցներին առաջադրվող պահանջները,

11.5.2. փաստաթղթերի ցանկը, որոնք պետք է ներկայացվեն նախնական ընտրության մասնակիցների կողմից՝ ի հաստատումն սահմանված պահանջներին իրենց համապատասխանության,

11.5.3. նախնական ընտրությանը մասնակցելու հայտի բովանդակության, ձևի, ձևակերպման և կազմի, դրա պատրաստման հրահանգի նկատմամբ պահանջները,

11.5.4. գնման ընթացակարգերի մասնակիցներին նախնական ընտրության մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումների տրամադրման ձևերը, կարգը, ժամկետի սկիզբը և ավարտը:

11.6. Նախնական ընտրությամբ առաջարկների հարցում անցկացնելիս առաջարկների հարցման մասին փաստաթղթերը տեղադրվում են գնումների տեղեկատվական համակարգում՝ նախնական ընտրությամբ առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցման և նախնական ընտրության մասին փաստաթղթերի հետ միաժամանակ, և պետք է պարունակեն սույն Կարգի 9.3. կետում շարադրված տեղեկատվությունը:

11.7. Նախնական ընտրության մասին փաստաթղթերում սահմանված ժամկետներում Կազմակերպիչն անցկացնում է նախնական ընտրություն՝ գնման ընթացակարգերի մասնակիցներ բացահայտելու համար, որոնք համապատասխանում են նախնական ընտրության մասին փաստաթղթերում սահմանված՝ առաջարկների հարցման պոտենցիալ մասնակիցներին ուղղված պահանջներին:

11.8. կազմակերպիչը նախնական ընտրությամբ առաջարկների հարցմանը մասնակցելու հրավերներ է ուղարկում նախնական ընտրությունն անցած մասնակիցներին:

11.9. Այն դեպքում, եթե նախնական ընտրության արդյունքներով նախնական ընտրության մասին փաստաթղթերում առաջարկների հարցման պոտենցիալ մասնակիցների համար սահմանված պահանջներին համապատասխանող գնման ընթացակարգերի մասնակիցների քանակը երկուսից պակաս է, ապա Կազմակերպիչն իրավունք ունի նախնական ընտրությունը և նախնական ընտրությամբ առաջարկների հարցումը ճանաչել չկայացած:

12. ԵՐԿՈՒ ՓՈՒԼՈՎ ԲԱՑ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՀԱՐՑՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

12.1. Երկու փուլով բաց առաջարկների հարցում է այն մրցակցային գնումը, որը ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-465 հոդվածների համաձայն չի հանդիսանում սակարկություն (մրցույթ, աճուրդ) կամ իրապարակային մրցույթ՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1043-1047 հոդվածների համաձայն, որի անցկացման արդյունքներով կարող է որոշվել առաջարկների հարցմանը մասնակցելու վերջնական լավագույն հայտը, որը պարունակում է ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման լավագույն պայմանները, որը ներկայացվում է առաջարկների հարցման երկրորդ փուլ այն մասնակցի կողմից, որը մասնակցել է առաջարկների հարցում անցկացնելու երկու փուլերին, առավել լիակատար է համապատասխանում առաջարկների հարցման մասին փաստաթղթերի պահանջներին և որ կնքվել է պայմանագիր:

12.2. Երկու փուլով բաց առաջարկների հարցում անցկացնելիս կիրառվում են բաց առաջարկների հարցման համար սույն Կարգով սահմանված նորմերը և կանոնները՝ հաշվի առնելով սույն բաժնի պահանջները: Երկու փուլով բաց առաջարկների հարցում անցկացնելու մասին ծանուցման և առաջարկների հարցման մասին փաստաթղթերի տեղադրումն իրականացվում է սույն Կարգի 9-րդ բաժնում սահմանված կարգով և ժամկետներում:

12.3. Երկու փուլով բաց առաջարկների հարցում անցկացնելիս գնման ընթացակարգերի մասնակիցներն առաջին փուլում պարտավոր են ներկայացնել գնման օբյեկտի վերաբերյալ առաջարկներ պարունակող նախնական հայտեր՝ առանց պայմանագրի գնի մասին առաջարկ նշելու: Առաջարկների հարցման մասին փաստաթղթերը կարող են նախատեսել երկու փուլով բաց առաջարկների հարցման մասնակիցների պարտականությունը՝ առաջարկների նախնական հայտերի կազմում ներկայացնելու գնումների առարկայի տեխնիկական, որակական կամ այլ բնութագրերի մասին, մատակարարման պայմանների մասին, ինչպես նաև առաջարկների երկու փուլով հարցման մասնակիցների մասնագիտական և տեխնիկական որակավորման մասին առաջարկներ:

12.4. Առաջին փուլում Պատվիրատուն, Կազմակերպիչն իրավունք ունի անցկացնելու մասնակիցների նախնական հայտերում պարունակվող՝ գնման առարկայի

վերաբերյալ ցանկացած առաջարկի վերաբերյալ քննարկումներ նախնական հայտերը ներկայացրած մասնակիցների հետ:

12.5. Առաջին փուլի արդյունքներով Պատվիրատուն, Կազմակերպիչն իրավունք ունի ճշտելու գնման պայմանները և կատարելու փոփոխություններ առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ, այդ թվում.

- ճշտելու առաջարկների հարցման մասին փաստաթղթերում սկզբնապես նշված ցանկացած պահանջ՝ ուղղված գնումների առարկայի որակին, անվտանգությանը, տեխնիկական, ֆունկցիոնալ բնութագրերին, աշխատանքների (ծառայությունների) արդյունքներին, այլ պահանջներին՝ կապված Պատվիրատուի պահանջումներին մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքի, մատուցվող ծառայության համապատասխանության որոշման հետ, ինչպես նաև լրացնելու գնման առարկայի բնութագրերին և առաջարկների հարցման մասնակիցների կողմից դրա բնութագրմանն ուղղված ցանկացած նոր պահանջով,

- ճշտելու առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ սկզբնապես նշված առաջարկների հարցմանը մասնակցելու հայտերի գնահատման ցանկացած չափանիշ և լրացնելու սույն Կարգի պահանջները բավարարող ցանկացած նոր չափանիշով:

12.6. Սույն Կարգի 12.5. կետին համապատասխան կատարված ցանկացած բացառության, փոփոխության կամ լրացման մասին հաղորդվում է առաջարկների հարցման մասնակիցներին առաջարկների հարցմանը մասնակցելու վերջնական հայտեր ներկայացնելու հրավերներում: Ընդ որում, նման փոփոխություններն արտացոլվում են գնումների տեղեկատվական համակարգում տեղադրված՝ առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ նշված հրավերներն ուղարկելու օրը:

12.7. Երկու փուլով բաց առաջարկների հարցման երկրորդ փուլում Կազմակերպիչն առաջին փուլում նախնական հայտեր ներկայացրած՝ երկու փուլով բաց առաջարկների հարցման բոլոր մասնակիցներին առաջարկում է ներկայացնել առաջարկների հարցմանը մասնակցելու վերջնական հայտեր՝ նշելով երկու փուլով բաց առաջարկների հարցման մասնակցի կողմից առաջարկված պայմանագրի գինը՝ հաշվի առնելով առաջին փուլից հետո վերանայված գնման պայմանները:

12.8. Առաջարկների հարցմանը մասնակցելու վերջնական հայտ ներկայացնել չցանկացող՝ երկու փուլով բաց առաջարկների հարցման մասնակիցն իրավունք ունի հրաժարվել հետագա մասնակցությունից երկու փուլով բաց առաջարկների հարցմանը, ընդ որում, այն դեպքում, եթե առաջարկների հարցման մասին փաստաթղթերի մեջ սահմանված է հայտերի ապահովման մասին պահանջ, երկու փուլով բաց առաջարկների հարցման մասնակցին վերադարձվում է առաջարկների հարցման մասին փաստաթղթերով նախատեսված կարգով հայտի ապահովումը:

12.9. Առաջարկների հարցմանը մասնակցելու վերջնական հայտերը դիտարկվում և գնահատվում են սույն Կարգի 9-րդ բաժնի դրույթներին համապատասխան:

13. ԱՃՈՒՐԴ

13.1. Ընդհանուր դրույթներ

13.1.1. Աճուրդը կարող է լինել բաց կամ փակ:

13.1.2. Աճուրդների անցկացման միջոցով ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնման դեպքում կարող են առանձնացվել լոտերը, որոնց վերաբերյալ աճուրդի անցկացման մասին ծանուցման և աճուրդի մասին փաստաթղթերի մեջ առանձին կերպով նշվում են ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման կամ ծառայությունների մատուցման առարկան, սկզբնական (առավելագույն) գինը, ժամկետները և այլ պայմաններ: Որպես կանոն ըստ յուրաքանչյուր լոտի կնքվում է առանձին պայմանագիր: Այն դեպքում, երբ մի քանի լոտերով հաղթող է ճանաչվում աճուրդին մասնակցող միևնույն մասնակիցը, ապա այդպիսի մասնակցի հետ կարող է կնքվել մի պայմանագիր մի քանի լոտերով:

13.1.3. Գնման ընթացակարգերի մասնակիցներից չի թույլատրվում գանձել աճուրդին մասնակցելու վճար, բացառությամբ տպագիր տեսքով աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար վճարի:

13.1.4. Կազմակերպիչը կարող է սահմանել աճուրդին մասնակցելու հայտերի ապահովման պահանջ, որի չափը, ձևը և տրամադրման կարգը նշվում են աճուրդի մասին փաստաթղթերում:

13.1.5. Աճուրդը կարող է անցկացվել էլեկտրոնային ձևով՝ համացանցի էլեկտրոնային առևտրային հարթակում, սույն Կարգի 15-րդ բաժնին համապատասխան, էլեկտրոնային առևտրային հարթակի կանոններին և կանոնակարգին համապատասխան: Ընդ որում՝ փաստաթղթաշրջանառությունն իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթերի ձևով, էլեկտրոնային ստորագրության կիրառմամբ:

13.1.6. Բաց աճուրդ անցկացնելու մասին ծանուցումը Պատվիրատուի (Կազմակերպիչի) կողմից տեղադրվում է գնումների տեղեկատվական համակարգում աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան քսան օր առաջ:

13.1.7. Պատվիրատուն, Կազմակերպիչը բաց աճուրդ անցկացնելու մասին ծանուցումը գնումների տեղեկատվական համակարգում տեղադրելուց հետո իրավունք ունի աճուրդի պոտենցիալ մասնակիցներին ուղարկելու բաց աճուրդին մասնակցելու հրավերներ:

13.1.8. Բաց աճուրդին մասնակցելու հրավերների ուղարկումը և աճուրդի մասին փաստաթղթերի տրամադրումը չի թույլատրվում մինչև գնումների տեղեկատվական համակարգում բաց աճուրդ անցկացնելու մասին ծանուցման տեղադրումը:

13.1.9. Պատվիրատուն (Կազմակերպիչը) ապահովում է գնումների տեղեկատվական համակարգում աճուրդի մասին փաստաթղթերի տեղադրումը՝ աճուրդ անցկացնելու մասին ծանուցման տեղադրման հետ միաժամանակ: Աճուրդի վերաբերյալ փաստաթղթերը պետք է հասանելի լինեն գնումների տեղեկատվական համակարգում ծանոթանալու համար՝ առանց վճարի գանձման:

13.1.10. Գնման ընթացակարգերի մասնակիցները, որոնք գնումների տեղեկատվական համակարգից ստացել են աճուրդի վերաբերյալ փաստաթղթերը, պետք է ինքնուրույն հետևեն աճուրդի մասին ծանուցման և փաստաթղթերի փոփոխություններին: Պատվիրատուն, Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում ընթացակարգերի մասնակցի կողմից գնումների տեղեկատվական համակարգից գնման ոչ ժամանակին տեղեկատվություն ստանալու համար:

13.1.11. Գնումների տեղեկատվական համակարգում աճուրդ անցկացնելու մասին ծանուցման տեղադրման օրվանից Կազմակերպիչը, ցանկացած շահագրգիռ անձի ներկայացրած գրավոր դիմումի հիման վրա, դիմումի ստացման օրվանից երկու աշխատանքային օրվա ընթացքում այդ անձին ծանուցման մեջ նշված կարգով տրամադրում է աճուրդի վերաբերյալ փաստաթղթեր աճուրդի անցկացման մասին: Ընդ որում՝ աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի պատճենը տպագիր տեսքով տրամադրվում է գնման ընթացակարգի մասնակցի կողմից աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի պատճենի տրամադրման համար վճարը վճարելուց հետո, եթե այդպիսի վճար սահմանված է և դրա մասին ցուցումը ընդգրկված է աճուրդի անցկացման մասին ծանուցման մեջ: Նշված վճարի չափը չպետք է գերազանցի աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի պատճենի պատրաստման և այն նշված հայտը ներկայացրած անձին փոստային կապով առաքելու հետ կապված ծախսերը, եթե նման առաքման հնարավորության իրականացումը նախատեսված է աճուրդի անցկացման մասին ծանուցմամբ: Աճուրդի մասին փաստաթղթերի տրամադրումը էլեկտրոնային փաստաթղթի ձևով իրականացվում է առանց վճարի գանձման:

Մինչև գնումների տեղեկատվական համակարգում աճուրդի անցկացման մասին ծանուցման տեղադրումը աճուրդի մասին փաստաթղթերի տրամադրում չի թույլատրվում:

Գնումների տեղեկատվական համակարգում տեղադրված աճուրդի մասին փաստաթղթերը պետք է համապատասխանեն սույն կետով սահմանված կարգով տրամադրվող աճուրդի մասին փաստաթղթերին:

13.1.12. Պատվիրատուն, Կազմակերպիչն իր սեփական նախաձեռնությամբ կան գնման ընթացակարգերի մասնակցի հարցմանը համապատասխան իրավունք ունի որոշում ընդունելու աճուրդ անցկացնելու մասին ծանուցման և/կամ աճուրդի մասին փաստաթղթերի մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ ցանկացած ժամանակ, մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը: Աճուրդի առարկայի փոփոխություն չի թույլատրվում:

Նշված որոշման ընդունման օրվանից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետը, այդպիսի փոփոխությունները Պատվիրատուի (Կազմակերպիչի) կողմից տեղադրվում են գնումների տեղեկատվական համակարգում:

Այն դեպքում, երբ աճուրդի անցկացման մասին ծանուցման և/կամ աճուրդի մասին փաստաթղթերի մեջ փոփոխությունները կատարվել են ավելի ուշ, քան աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետից տասնհինգ օր առաջ, ապա աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը պետք է երկարաձգվի այնպես, որպեսզի աճուրդի անցկացման մասին ծանուցման և/կամ աճուրդի մասին

փաստաթղթերում կատարված փոփոխությունները գնումների տեղեկատվական համակարգում տեղադրելու օրվանից մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետը նման ժամկետը կազմի տասնհինգ օրից ոչ պակաս:

13.1.13. Գնման ընթացակարգերի ցանկացած մասնակից իրավունք ունի գրավոր ձևով, այդ թվում՝ էլեկտրոնային փաստաթղթի ձևով, Կազմակերպչին ուղարկելու աճուրդի մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանման մասին հարցում ոչ ուշ, քան աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետից հինգ օր առաջ:

13.1.14. Կազմակերպիչը դիտարկում է աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան հինգ օր առաջ ստացված պարզաբանումների տրամադրման մասին հարցումները: Աճուրդի մասին փաստաթղթերի դրույթների պարզաբանումների տրամադրման օրվանից սկսած երեք աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատու (Կազմակերպիչը) նշված պարզաբանումները տեղադրում է գնումների տեղեկատվական համակարգում:

13.2. Բաց աճուրդ անցկացնելու մասին ծանուցումը

13.2.1. Բաց աճուրդ անցկացնելու մասին ծանուցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

13.2.1.1. գնման եղանակը,

13.2.1.2. Պատվիրատուի, Կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը, փոստային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը,

13.2.1.3. պայմանագրի առարկան՝ մատակարարվող ապրանքի քանակի, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալի նշմամբ,

13.2.1.4. ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը,

13.2.1.5. պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (լոտի գինը),

13.2.1.6. աճուրդի մասին փաստաթղթերի տրամադրման ժամկետը, վայրը և կարգը, տպագիր տեսքով աճուրդի մասին փաստաթղթերի պատճենի տրամադրման համար գանձվող վճարի վճարման չափը, կարգը և ժամկետները, եթե նման վճար սահմանված է,

13.2.1.7. աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման վայրը, ժամկետի սկիզբը և ավարտը,

13.2.1.8. աճուրդի անցկացման վայրը, ամսաթիվն ու ժամը կամ տեղեկատվություն այն մասին, թե որ փաստաթղթում է նշված այդպիսի տեղեկությունները.

13.2.1.9. տեղեկություններ Պատվիրատուի, Կազմակերպչի՝ աճուրդ անցկացնելու մասին ծանուցման մեջ ցանկացած ժամանակ՝ մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը փոփոխություններ կատարելու, ինչպես նաև աճուրդն անցկացնելուց հրաժարվելու իրավունքի մասին ցանկացած ժամանակ, բայց ոչ ուշ, քան մինչև աճուրդն անցկացնելուց երեք օր առաջ:

13.3. Աճուրդ անցկացնելուց հրաժարվելը

13.3.1. Պատվիրատուն, Կազմակերպիչը իրավունք ունի ցանկացած ժամանակ հրաժարվելու աճուրդն անցկացնելուց, բայց ոչ ուշ, քան դրա անցկացման օրից երեք օր առաջ:

13.3.2. Աճուրդն անցկացնելուց հրաժարվելու մասին ծանուցումը տեղադրվում է Պատվիրատուի (Կազմակերպչի) կողմից գնումների տեղեկատվական համակարգում աճուրդ անցկացնելուց հրաժարվելու մասին որոշումն ընդունելու օրից երկու աշխատանքային օրվա ընթացքում:

13.3.3. Աճուրդ անցկացնելուց հրաժարվելու մասին ծանուցումը տեղադրելուց հետո գնման ընթացակարգերի մասնակցի գրավոր հարցմամբ Կազմակերպիչը վերադարձնում է նրա ներկայացրած աճուրդի մասնակցության հայտը, այդ թվում՝ աճուրդին մասնակցելու հայտի ապահովումը, եթե այն մասնակցի կողմից տրամադրվել է աճուրդի մասին փաստաթղթերով նախատեսված կարգով:

13.4. Աճուրդի վերաբերյալ փաստաթղթերը

13.4.1. Աճուրդի վերաբերյալ փաստաթղթերը պետք է պարունակեն՝

13.4.1.1. Պատվիրատուի, Կազմակերպչի անվանումը, գտնվելու վայրը, փոստային հասցեն, էլեկտրոնային փոստի հասցեն, կոնտակտային հեռախոսահամարը,

13.4.1.2. Պայմանագրի առարկան՝ մատակարարվող ապրանքի քանակի, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների ծավալի նշմամբ.

13.4.1.3. էլեկտրոնային առևտրային հարթակի անվանումը, որտեղ էլեկտրոնային ձևով անցկացվելու է աճուրդը, հղում էլեկտրոնային առևտրային հարթակում աճուրդի անցկացման կանոններին (էլեկտրոնային ձևով աճուրդի անցկացման դեպքում),

13.4.1.4. Պատվիրատուի կողմից սահմանված պահանջներ՝ ուղղված.

- ապրանքի, աշխատանքների, ծառայությունների որակին, տեխնիկական բնութագրերին, անվտանգությանը,

- ապրանքի ֆունկցիոնալ բնութագրերին (սպառողական հատկություններին),

- ապրանքի չափերին, փաթեթավորմանը, բեռնմանը,

- աշխատանքների, ծառայությունների արդյունքներին,

- այլ պահանջներ և ցուցանիշներ՝ կապված Պատվիրատուի պահանջմունքներին մատակարարվող ապրանքի, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների համապատասխանության որոշման հետ,

13.4.1.5. պահանջներ՝ ուղղված աճուրդին մասնակցելու հայտերի բովանդակությանը, կազմին, ձևակերպմանը և ձևին, դրա լրացման կարգին,

13.4.1.6. Աճուրդի մասնակիցներին առաջադրվող պահանջներ,

13.4.1.7. Գնման ընթացակարգերի մասնակիցներին առաջադրվող պահանջներ՝

- աճուրդի առարկա հանդիսացող՝ մատակարարվող ապրանքը,

- դրա ֆունկցիոնալ բնութագրերը (սպառողական հատկությունները), ինչպես նաև դրա քանակական և որակական բնութագրերը,

- աճուրդի առարկա հանդիսացող՝ կատարվող աշխատանքները, մատուցվող ծառայությունները, դրանց քանակական և որակական բնութագրերը,

13.4.1.8. պահանջեր՝ ուղղված ապրանքի, աշխատանքների, ծառայությունների որակի երաշխիքների տրամադրման ժամկետին և/կամ ծավալին, ապրանքի սպասարկմանը, ապրանքի շահագործման ծախսերին (անհրաժեշտության դեպքում),

13.4.1.9. ապրանքի մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման վայրը, պայմանները և ժամկետները (ժամանակահատվածները),

13.4.1.10. պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (լոտի գինը),

13.4.1.11. պայմանագրի սկզբնական գնի նվազեցման/բարձրացման չափը («աճուրդի քայլը»),

13.4.1.12. ապրանքի, աշխատանքների, ծառայությունների վճարման ձևը, ժամկետները և կարգը,

13.4.1.13. պայմանագրի գնի (լոտի գնի) ձևավորման կարգը (հաշվի առնելով կամ առանց հաշվի առնելու փոխադրման, ապահովագրման, մաքսային տուրքերի, հարկերի և այլ պարտադիր մուծումների վճարման հետ կապված ծախսերը),

13.4.1.14. գնման ընթացակարգերի մասնակիցներին աճուրդին մասնակցելու հայտերի դրույթների պարզաբանումների տրամադրման ձևերը, կարգը, ժամկետի սկիզբը և ավարտը,

13.4.1.15. աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման կարգը, վայրը, ժամկետի սկիզբը և ավարտը,

13.4.1.16. աճուրդին մասնակցելու հայտերի դիտարկման վայրն ու սկիզբը,

13.4.1.17. աճուրդին մասնակցելու հայտերում փոփոխություններ կատարելու և աճուրդին մասնակցելու հայտերի հետ կանչման կարգն ու ժամկետը,

13.4.1.18. տեղեկություններ Պատվիրատուի, Կազմակերպչի, (Աճուրդային հանձնաժողովի)՝ աճուրդին մասնակցելու հայտի մերժման իրավունքի մասին՝ նշելով նման մերժման համար թույլատրելի հիմնավորումների ցանկը,

13.4.1.19. տեղեկություններ Պատվիրատուի, Կազմակերպչի՝ ցանկացած ժամանակ աճուրդի անցկացումից հրաժարվելու իրավունքի մասին, բայց ոչ ուշ, քան դրա անցկացման ամսաթվից երեք օր առաջ,

13.4.1.20. աճուրդի անցկացման վայրը, ամսաթիվն ու ժամանակը կամ տեղեկատվություն այն մասին, որ այդպիսի տեղեկությունները նշվելու են աճուրդին մասնակցելու հայտերի դիտարկման արդյունքների մասին ծանուցման մեջ,

13.4.1.21. աճուրդին մասնակցելու հայտի ապահովման չափը, ձևը և գործողության ժամկետը, դրա տրամադրման ժամկետն ու կարգն այն դեպքում, եթե Կազմակերպչի կողմից սահմանված է աճուրդին մասնակցելու հայտի ապահովման պահանջ,

13.4.1.22. պայմանագրի կատարման ապահովման չափը, ձևը և գործողության ժամկետը, դրա տրամադրման ժամկետն ու կարգն այն դեպքում, եթե Պատվիրատուի կողմից սահմանված է պայմանագրի կատարման ապահովման պահանջ,

13.4.1.23. պայմանագրի նախագիծը (մի քանի լոտերով աճուրդի անցկացման դեպքում՝ պայմանագրի նախագիծ յուրաքանչյուր լոտի վերաբերյալ), որը հանդիսանում է աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի անբաժանելի մասը,

13.4.1.24. անհրաժեշտության դեպքում աճուրդի վերաբերյալ փաստաթղթերը կարող են պարունակել մատակարարվող ապրանքների՝ ապրանքի նմուշին և մակետին կամ գնման առարկա հանդիսացող՝ եռաչափ չափանշմամբ ապրանքի պատկերին համապատասխանելու պահանջ, ընդ որում աճուրդի վերաբերյալ փաստաթղթերը համապատասխանաբար պետք է ներառեն՝

- գնման առարկա հանդիսացող ապրանքի պատկերը՝ եռաչափ չափանշմամբ,
- նման առարկա հանդիսացող ապրանքի նմուշը կամ մակետը, որը հանդիսանում է աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի անբաժանելի մասը,
- եթե այդպիսի նմուշ կամ մակետ չի կարող կցվել աճուրդի մասին փաստաթղթերին, ապա ապրանքի պատկերը կցվում է եռաչափ չափանշմամբ, ինչպես նաև գնման ընթացակարգերի մասնակիցների կողմից գնման առարկա հանդիսացող ապրանքի նմուշի կամ մակետի գնման վայրը, ժամկետի սկիզբը և ավարտը, կարգն ու ժամանակացույցը:

13.4.2. Աճուրդի մասին փաստաթղթերում պարունակվող տեղեկությունները պետք է համապատասխանեն բաց աճուրդի անցկացման մասին ծանուցման մեջ նշված տեղեկություններին:

13.5. Աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման կարգը

13.5.1. Աճուրդին մասնակցելու համար գնման ընթացակարգերի մասնակիցը ներկայացնում է աճուրդին մասնակցելու հայտ՝ աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված ժամկետում և ձևով:

Այն դեպքում, եթե աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված է երկու և ավելի լոտ, գնման ընթացակարգերի մասնակիցը աճուրդին մասնակցելու հայտ է ներկայացնում որոշակի լոտի վերաբերյալ:

13.5.2. Աճուրդին մասնակցելու հայտը պետք է պարունակի.

13.5.2.1. գնման ընթացակարգերի մասնակցի համաձայնությունը աճուրդի վերաբերյալ փաստաթղթերում պարունակվող՝ աճուրդի անցկացման պայմանների և պայմանագրի պայմանների հետ,

13.5.2.2. աճուրդի մասին փաստաթղթերի պահանջներին համապատասխանող տեղեկություններ և փաստաթղթեր՝ նման հայտ ներկայացրած՝ գնման ընթացակարգերի մասնակցի վերաբերյալ,

13.5.2.3. գնման ընթացակարգերի մասնակցի անունից գործողություններ իրականացնելու համար անձի լիազորությունները հաստատող փաստաթուղթ,

13.5.2.4. տեղեկություններ աճուրդի առարկա հանդիսացող մատակարարվող ապրանքի մասին, դրա տեխնիկական, ֆունկցիոնալ բնութագրերի (սպառողական հատկությունների), քանակական և որակական բնութագրերի, անվտանգության և աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված այլ ցուցանիշներին համապատասխանության մասին:

Աճուրդի առարկա հանդիսացող՝ կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների նկարագրությունը, տեղեկություններ դրանց քանակական և որակական բնութագրերի, աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով սահմանված այլ ցուցանիշների մասին,

13.5.2.5. աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված դեպքերում՝ գնման առարկայի նկատմամբ աճուրդի վերաբերյալ փաստաթղթերում սահմանված պահանջներին ապրանքի, աշխատանքների, ծառայությունների համապատասխանությունը հաստատող փաստաթղթերի պատճենները,

13.5.2.6. աճուրդի վերաբերյալ փաստաթղթերում սահմանված պահանջներին և աճուրդին մասնակցելու թույլտվության պայմաններին գնման ընթացակարգերի մասնակցի համապատասխանությունը հաստատող փաստաթղթեր:

13.5.3. Գնման ընթացակարգերի մասնակիցը աճուրդին մասնակցելու հայտը ներկայացնում է գրավոր:

13.5.4. Գնման ընթացակարգերի մասնակիցն իրավունք ունի աճուրդի յուրաքանչյուր առարկայի (լոտի) վերաբերյալ ներկայացնելու միայն մեկ հայտ:

13.5.5. Աճուրդին մասնակցելու հայտերի ընդունումը դադարեցվում է աճուրդին մասնակցելու հայտերի դիտարկումն սկսվելու օրը և ժամին, որի մասին պետք է նշված լինի բաց աճուրդ անցկացնելու մասին ծանուցման կամ հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգման մասին ծանուցման մեջ, եթե նման ժամկետը երկարաձգվել է Կազմակերպչի կողմից:

13.5.6. Աճուրդին մասնակցելու յուրաքանչյուր հայտ, որն ընդունվել է բաց աճուրդ անցկացնելու մասին ծանուցման կամ հայտերի ներկայացման ժամկետի երկարաձգման մասին ծանուցման մեջ սահմանված ժամկետում, եթե նման ժամկետը երկարաձգվել է, գրանցվում է Կազմակերպչի կողմից:

13.5.7. Աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո ստացված աճուրդին մասնակցելու հայտերը չեն դիտարկվում և վերադարձվում են նման հայտեր ներկայացրած գնման ընթացակարգերի մասնակիցներին: Այն դեպքում, եթե սահմանված է եղել աճուրդին մասնակցելու հայտերի ապահովման պահանջ, ապա Կազմակերպիչը պարտավոր է գնման ընթացակարգերի նշված մասնակիցներին վերադարձնել աճուրդին մասնակցելու հայտի ապահովումը:

13.5.8. Գնման ընթացակարգերի մասնակիցը, որը ներկայացրել է աճուրդին մասնակցելու հայտ, իրավունք ունի փոխելու կամ հետ կանչելու նման հայտը ցանկացած ժամանակ՝ մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը, պայմանով, որ նման ծանուցումը Կազմակերպչի կողմից ստացվել է մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը: Ընդ որում՝ աճուրդին մասնակցելու հայտը հետ կանչելու վերաբերյալ ծանուցումն ստանալուց հետո, եթե սահմանված է եղել աճուրդին մասնակցելու հայտի ապահովում, Կազմակերպիչը պարտավոր է գնման ընթացակարգերի նշված մասնակցին վերադարձնել աճուրդին մասնակցելու հայտի ապահովումը:

13.6. Աճուրդին մասնակցելու թույլտվության պայմանները

13.6.1. Աճուրդին մասնակցելու հայտերի դիտարկման արդյունքներով գնման ընթացակարգերի մասնակցին Կազմակերպչի (Աճուրդային հանձնաժողովի) կողմից չի թույլատրվում մասնակցել աճուրդին հետևյալ դեպքերում.

13.6.1.1. աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված փաստաթղթերը չներկայացնելու կամ նման փաստաթղթերում գնման գործընթացի մասնակցի կամ գնման առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների մասին ոչ հավաստի տեղեկությունների առկայության դեպքում,

13.6.1.2. Սույն Կարգի 1.5.1. կետով սահմանված պահանջներին, ինչպես նաև սույն Կարգի 1.5 բաժնին համապատասխան աճուրդի վերաբերյալ փաստաթղթերում սահմանված այլ պահանջներին գնման ընթացակարգերի մասնակցի անհամապատասխանության դեպքում,

13.6.1.3. աճուրդին մասնակցելու հայտի ապահովում չներկայացնելու կամ աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի պահանջներին հայտի չհամապատասխանելու դեպքում, եթե նման հայտերի ապահովման պահանջը նշված է աճուրդի վերաբերյալ փաստաթղթերում,

13.6.1.4. Աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի պահանջներին աճուրդի մասնակցության հայտի անհամապատասխանության դեպքում.

13.6.1.5. Աճուրդի վերաբերյալ փաստաթղթերում կարող են սահմանվել աճուրդին մասնակցելու մասնակցին չթույլատրող և սույն Կարգին չհակասող այլ հիմքեր:

13.7. Աճուրդին մասնակցելու հայտերի դիտարկման կարգը

13.7.1. Կազմակերպիչն ապահովում է աճուրդին մասնակցելու հայտերի դիտարկումը՝ կապված աճուրդի վերաբերյալ փաստաթղթերում սահմանված պահանջներին համապատասխանության և աճուրդի վերաբերյալ փաստաթղթերում սահմանված՝ մասնակիցներին առաջադրվող պահանջներին գնման ընթացակարգերի մասնակիցների համապատասխանության հետ: Հայտերի դիտարկման համար Կազմակերպիչն իրավունք ունի ներգրավելու Պատվիրատուին, փորձագետների:

13.7.2. Միևնույն աճուրդի (լոտի) հետ կապված աճուրդին մասնակցելու համար գնման ընթացակարգերի մեկ մասնակցի կողմից երկու և ավելի հայտ ներկայացնելու փաստ հայտնաբերելու դեպքում, պայմանով, որ նման մասնակցի կողմից ավելի վաղ ներկայացրած հայտերը հետ չեն կանչվել, տվյալ աճուրդի (լոտի) հետ կապված գնման ընթացակարգերի նման մասնակցի՝ աճուրդին մասնակցելու բոլոր հայտերը չեն դիտարկվում և վերադարձվում են այդ մասնակցին:

13.7.3. Աճուրդին մասնակցելու հայտերի դիտարկման արդյունքների հիման վրա Կազմակերպիչը (Աճուրդային հանձնաժողովը) ընդունում է որոշում գնման ընթացակարգերի մասնակցին աճուրդին մասնակցելու թույլտվություն տալու և աճուրդին մասնակցելու հայտ ներկայացրած գնման գործընթացի մասնակցին աճուրդի մասնակից ճանաչելու մասին կամ գնման գործընթացի նման մասնակցին՝ աճուրդին մասնակցելու թույլտվությունը մերժելու մասին աճուրդի վերաբերյալ՝ փաստաթղթերով նախատեսված կարգով և հիմքերով, ինչը գրանցվում է աճուրդին մասնակցելու հայտերի դիտարկման արձանագրության մեջ: Աճուրդին մասնակցելու հայտերի դիտարկման արձանագրությունը տեղադրվում է գնումների տեղեկատվական համակարգում՝ նրա ստորագրման ամսաթվից ոչ ուշ, քան երեք օր հետո:

13.7.4. Այն դեպքում, եթե մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը ներկայացվել է աճուրդին մասնակցելու ընդամենը մեկ հայտ կամ աճուրդին մասնակցելու ոչ մի հայտ չի ներկայացվել, այդպիսի աճուրդը ճանաչվում է չկայացած, և դրա մասին տեղեկատվությունը ներառվում է համապատասխան արձանագրության մեջ:

13.7.5. Այն դեպքում, եթե Կազմակերպիչը (Աճուրդային հանձնաժողովը) որոշում է ընդունում ներժել գնման ընթացակարգերի բոլոր մասնակիցների աճուրդին մասնակցելու թույլտվությունը կամ ճանաչել գնման ընթացակարգերի մասնակիցներից միայն մեկին որպես աճուրդի մասնակից, աճուրդը ճանաչվում է չկայացած: Աճուրդը չկայացած ճանաչելու դեպքում Կազմակերպիչն իրավունք ունի հայտարարելու գնման նոր ընթացակարգ կամ պայմանագիր կնքելու աճուրդի միակ մասնակցի հետ:

13.7.6. Այն դեպքում, եթե աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված է երկու կամ ավելի լոտ, աճուրդը ճանաչվում է չկայացած միայն այն լոտերով, որոնցով տեղի են ունեցել սույն բաժնի 13.7.4. և 13.7.5 ենթակետերում նշված պատճառները:

13.8. Աճուրդի անցկացման կարգը

13.8.1. Աճուրդին կարող են մասնակցել միայն աճուրդի մասնակիցներ ճանաչված գնման ընթացակարգերի մասնակիցները: Կազմակերպիչը պարտավոր է աճուրդի մասնակիցներին հնարավորություն տալ անմիջականորեն կամ իրենց ներկայացուցիչների միջոցով մասնակցել աճուրդին:

13.8.2. Աճուրդն անցկացվում է Կազմակերպչի կողմից՝ Աճուրդային հանձնաժողովի անդամների, աճուրդի մասնակիցների կամ նրանց ներկայացուցիչների ներկայությամբ:

13.8.3. Աճուրդն անցկացնելու համար Աճուրդային հանձնաժողովի անդամների բաց քվեարկության ճանապարհով՝ ձայների մեծամասնությամբ Հանձնաժողովի անդամների թվից ընտրվում է աճուրդավար:

13.8.4. Աճուրդն անցկացվում է պայմանագրի սկզբնական (առավելագույն) գնի (լոտի գնի) իջեցման ճանապարհով, որը բաց աճուրդի անցկացման մասին ծանուցման մեջ նշված է որպես «աճուրդի քայլ»:

13.8.5. Աճուրդն անցկացվում է հետևյալ կարգով.

13.8.5.1. Կազմակերպիչն անմիջապես աճուրդի անցկացման սկզբից առաջ գրանցում է աճուրդին ներկայացած մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին,

13.8.5.2. Մի քանի լոտով աճուրդ անցկացնելու դեպքում Կազմակերպիչը յուրաքանչյուր լոտի սկզբից առաջ գրանցում է այդ լոտի համար հայտ ներկայացրած և աճուրդին ներկայացած մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին,

13.8.5.3 Գրանցման ժամանակ աճուրդի մասնակիցներին կամ նրանց ներկայացուցիչներին տրվում են համարակալված քարտեր (այսուհետ՝ քարտեր),

13.8.5.4. Աճուրդը սկսվում է աճուրդավարի կողմից.

- աճուրդի (լոտի) անցկացման մեկնարկի,

- լոտի համարի (եթե աճուրդն անցկացվում է մի քանի լոտերով),
- պայմանագրի առարկայի,
- պայմանագրի (լոտի) սկզբնական (առավելագույն) գնի,
- «աճուրդի քայլի»,
- աճուրդին չներկայացած աճուրդի մասնակիցների անունների հայտարարմամբ,

13.8.5.5. Աճուրդավարը աճուրդի մասնակիցներին առաջարկում է հայտարարել պայմանագրի գնի մասին իրենց առաջարկները,

13.8.5.6. Աճուրդավարի կողմից պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (լոտի գինը) և «աճուրդի քայլին» համապատասխան նվազեցված պայմանագրի գինը հայտարարելուց հետո աճուրդի մասնակիցը բարձրացնում է քարտը այն դեպքում, եթե նա համաձայն է հայտարարված գնով պայմանագիր կնքել:

13.8.5.7. Աճուրդավարը հայտարարում է աճուրդի այն մասնակցի քարտի համարը, որն առաջինն է քարտը բարձրացրել աճուրդավարի կողմից պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (լոտի գինը) և «աճուրդի քայլին» համապատասխան իջեցված պայմանագրի գինը հայտարարելուց հետո, ինչպես նաև՝ աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով սահմանված կարգով «աճուրդի քայլին» համապատասխան նվազեցված պայմանագրի նոր գինը, որին համապատասխան նվազեցվում է գինը,

13.8.5.8. Աճուրդը համարվում է ավարտված, եթե աճուրդավարի կողմից պայմանագրի գնի՝ երեք անգամ հայտարարելուց հետո աճուրդի ոչ մի մասնակից չի բարձրացրել քարտը,

13.8.5.9. Այս դեպքում աճուրդավարը հայտարարում է աճուրդի (լոտի) անցկացման ավարտի մասին, պայմանագրի գնի վերաբերյալ վերջին և նախավերջին առաջարկները, աճուրդի հաղթողի և պայմանագրի գնի վերաբերյալ նախավերջին առաջարկն արած աճուրդի մասնակցի քարտի համարը և անունը:

13.8.6. Բաց աճուրդ անցկացնելիս Կազմակերպիչը պարտադիր կարգով իրականացնում է տեսագրություն և ձայնագրություն և վարում է աճուրդի արձանագրությունը, որում պետք է պարունակվեն տեղեկություններ.

- աճուրդի անցկացման վայրի, ամսաթվի և ժամանակի մասին,
- աճուրդի մասնակիցների մասին,
- պայմանագրի սկզբնական (առավելագույն) գնի (լոտի գնի) մասին,
- պայմանագրի գնի վերաբերյալ վերջին և նախավերջին առաջարկների մասին,
- աճուրդի մասնակիցների մասին, որոնք կատարել են պայմանագրի գնի վերաբերյալ վերջին և նախավերջին առաջարկները, անվանունը և գտնվելու վայրը (իրավաբանական անձի համար), անունը, ազգանունը, հայրանունը, բնակության վայրը (ֆիզիկական անձի համար):

13.8.7. Աճուրդի արձանագրությունը կազմվում է երկու օրինակից, ստորագրվում է Աճուրդային հանձնաժողովի բոլոր ներկա անդամների կողմից:

13.8.8. Պատվիրատուն (Կազմակերպիչը) ապահովում է աճուրդի արձանագրության տեղադրումը գնումների տեղեկատվական համակարգում ոչ ուշ, քան դրա ստորագրումից երեք աշխատանքային օր հետո:

13.9. Աճուրդի արդյունքներով պայմանագրի կնքումը և կատարումը

13.9.1. Պայմանագիրը կնքվում է բաց աճուրդի անցկացման վերաբերյալ ծանուցման և աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի մեջ նշված պայմաններով՝ աճուրդի հաղթողի կողմից առաջարկած գնով կամ պայմանագրի գնի վերաբերյալ նախավերջին առաջարկն արած աճուրդի մասնակցի հետ պայմանագիր կնքելու դեպքում՝ այդ մասնակցի կողմից առաջարկված գնով:

13.9.2. Այն դեպքում, եթե աճուրդի վերաբերյալ փաստաթղթերում սահմանվել է պայմանագրի կատարման ապահովման պահանջ, մասնակիցը պայմանագրով սահմանված ժամկետում պետք է Պատվիրատուին ներկայացնի պայմանագրի կատարման ապահովումը: Պայմանագրի կատարման ապահովումը տրամադրվում է աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված չափով և ձևով:

13.9.3. Այն դեպքում, եթե աճուրդի հաղթողը կամ պայմանագրի գնի վերաբերյալ նախավերջին առաջարկ կատարած աճուրդի մասնակիցը աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված ժամկետում Պատվիրատուին չի ներկայացնում ստորագրված պայմանագիրը, աճուրդի հաղթողը կամ պայմանագրի գնի վերաբերյալ նախավերջին առաջարկ կատարած աճուրդի մասնակիցը ճանաչվում է որպես պայմանագրի կնքումից խուսափող:

Աճուրդի հաղթողը կամ պայմանագրի գնի վերաբերյալ նախավերջին առաջարկ կատարած աճուրդի մասնակիցը ճանաչվում է որպես պայմանագրի կնքումից խուսափող նաև այն դեպքում, եթե աճուրդն անցկացնելիս պայմանագրի գինը նվազեցվել է մինչև զրոյի, և աճուրդն անցկացվել է պայմանագրի կնքման իրավունքով, և աճուրդի հաղթողը կամ նշված մասնակիցը սահմանված ժամկետում չի վճարել պայմանագրի կնքման իրավունքի գինը:

13.9.4. Այն դեպքում, եթե աճուրդի հաղթողը ճանաչվում է որպես պայմանագրի կնքումից խուսափող, Պատվիրատուն իրավունք ունի պայմանագիր կնքելու պայմանագրի գնի վերաբերյալ նախավերջին առաջարկն արած աճուրդի մասնակցի հետ:

13.9.5. Աճուրդին մասնակցելու հայտերի ապահովումը չի վերադարձվում այն դեպքում, եթե աճուրդի մասնակիցը, որի հետ կնքվում է պայմանագիրը, հրաժարվում է պայմանագիրը կնքելուց, ինչպես նաև պայմանագրի կատարման ապահովումը չներկայացնելու դեպքում, եթե սահմանվել է պայմանագրի կատարման ապահովման պահանջ:

13.9.6. Այն դեպքում, եթե պայմանագրի գնի վերաբերյալ նախավերջին առաջարկը կատարած մասնակիցը հրաժարվում է կնքել պայմանագիրը, Պատվիրատուն, Կազմակերպիչն իրավունք ունի որոշում ընդունել աճուրդը չկայացած ճանաչելու մասին:

13.9.7. Պայմանագրի կատարումն իրականացվում է դրա պայմաններին, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան:

13.10. Աճուրդը չկայացած ճանաչելը

13.10.1. Այն դեպքում, եթե մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը ներկայացվել է աճուրդին մասնակցելու միայն մեկ հայտ կամ աճուրդին մասնակցելու ոչ մի հայտ չի ներկայացվել, Կազմակերպիչն աճուրդը ճանաչում է չկայացած:

Այն դեպքում, եթե աճուրդի մասին փաստաթղթերով նախատեսված է երկու և ավելի լոտ, աճուրդը ճանաչվում է չկայացած միայն այն լոտերով, որոնց համար ներկայացվել է աճուրդի մասնակցության ընդամենը մեկ հայտ կամ աճուրդին մասնակցելու ոչ մի հայտ չի ներկայացվել:

Այն դեպքում, եթե մինչև աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետի ավարտը ներկայացվել է աճուրդին մասնակցելու ընդամենը մեկ հայտ, և աճուրդը ճանաչվել է չկայացած, ընդ որում՝ դիտարկման արդյունքներով նշված հայտը և այդ հայտը ներկայացրած մասնակիցը ճանաչվել են համապատասխանող աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված բոլոր պահանջներին և պայմաններին, Պատվիրատուն իրավունք ունի հայտարարելու նոր գնում կամ կնքելու պայմանագիր աճուրդի միակ մասնակցի հետ այն պայմաններով, որոնք նախատեսված են աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով, պայմանագրի այն գնով, որը համաձայնեցված է նշված՝ գնման ընթացակարգերի մասնակցի կողմից ներկայացված հայտի հետ և չի գերազանցում բաց աճուրդի անցկացման վերաբերյալ ծանուցման մեջ նշված պայմանագրի սկզբնական (առավելագույն) գինը (լոտի գինը):

Նշված հայտը ներկայացրած գնման ընթացակարգերի մասնակիցն իրավունք չունի հրաժարվելու պայմանագիրը կնքելուց: Աճուրդին մասնակցելու հայտերի ապահովումը վերադարձվում է գնման ընթացակարգերի այդ մասնակցին պայմանագիրը ստորագրելուց և պայմանագրի կատարման ապահովումը տրամադրելուց հետո, եթե Պատվիրատուն այդպիսի ապահովման պահանջ է սահմանել:

Եթե աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված ժամկետում գնման ընթացակարգերի այդպիսի մասնակցի կողմից Պատվիրատուին չներկայացվի ստորագրված պայմանագիր, գնման ընթացակարգի այդպիսի մասնակիցը ճանաչվում է որպես պայմանագիրը կնքելուց խուսափող, ընդ որում՝ աճուրդի մասնակցության հայտի ապահովումը չի վերադարձվում:

13.10.2. Այն դեպքում, եթե աճուրդին մասնակցել է աճուրդի մեկ մասնակից կամ աճուրդն անցկացնելիս աճուրդի ոչ մի մասնակից ներկա չի եղել կամ այն դեպքում, եթե պայմանագրի սկզբնական (առավելագույն) գնից (լոտի գնից) պայմանագրի առավել ցածր գին նախատեսող՝ պայմանագրի գնի վերաբերյալ առաջարկների բացակայության հետ կապված «աճուրդի քայլը» նվազեցվել է նվազագույն չափի և երեք անգամ պայմանագրի սկզբնական (առավելագույն) գնի (լոտի գնի) վերաբերյալ առաջարկը հայտարարելուց հետո չի ստացվել ոչ մի առաջարկ պայմանագրի գնի վերաբերյալ, որը կնախատեսեր պայմանագրի ավելի ցածր գին, աճուրդը ճանաչվում է չկայացած:

Այն դեպքում, եթե աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված է երկու և ավելի լոտ, աճուրդը չկայացած ճանաչելու մասին որոշումը ընդունվում է յուրաքանչյուր լոտի համար առանձին:

13.11. Փակ աճուրդի անցկացման առանձնահատկությունները

13.11.1. Փակ աճուրդն անց է կացվում Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի որոշմամբ՝ սույն Կարգով սահմանված դեպքերում:

13.11.2. Փակ աճուրդ անցկացնելիս կիրառվում են բաց աճուրդի անցկացման վերաբերյալ սույն Կարգի դրույթները՝ հաշվի առնելով սույն բաժնի դրույթները:

13.11.3. Փակ աճուրդ անցկացնելիս դրա անցկացման վերաբերյալ ծանուցում չի պահանջվում:

13.11.4. Աճուրդի վերաբերյալ փաստաթղթերը, դրանց մեջ կատարված փոփոխությունները, ինչպես նաև աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի պարզաբանումները ենթակա չեն տեղադրման համացանցում բաց մուտքի հնարավորությամբ կամ հրապարակման զանգվածային լրատվամիջոցներում:

13.11.5 Կազմակերպիչն աճուրդին մասնակցելու համար հայտերի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան քսան օր առաջ փակ աճուրդին մասնակցելու գրավոր հրավեր է ուղարկում այն անձանց, ովքեր բավարարում են սույն Կարգով նախատեսված գնումների մասնակիցների պարտադիր պահանջները և ընդունակ են իրականացնել աճուրդի առարկան հանդիսացող ապրանքների մատակարարումները, աշխատանքների կատարումը, ծառայությունների մատուցումը: Նշված հրավերները պետք է պարունակեն սույն Կարգի 13.2.1. կետով նախատեսված տեղեկությունները:

13.11.6. Աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի դրույթների պարզաբանումները պետք է Կազմակերպիչի կողմից գրավոր ձևով հաղորդվեն գնման ընթացակարգի բոլոր մասնակիցներին, որոնց տրամադրված են աճուրդի վերաբերյալ փաստաթղթերը՝ հարցման առարկայի նշմամբ, սակայն առանց գնման ընթացակարգի այն մասնակցի նշման, ումից ստացվել է հարցումը:

13.11.7. Աճուրդին մասնակցելու հայտերի ներկայացման ժամկետը կարող է կրճատվել, և աճուրդը կարող է աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով սահմանված ժամկետից ավելի շուտ կայանալ բոլոր այն անձանց գրավոր համաձայնության առկայության դեպքում, որոնց ուղարկվել են փակ աճուրդին մասնակցելու հրավերներ:

13.11.8. Փակ աճուրդի անցկացման ընթացքում կազմված արձանագրությունները, ինչպես նաև փակ աճուրդի անցկացման ընթացքում ստացված տեղեկատվությունը ենթակա չեն տեղադրման համացանցում բաց մուտքի հնարավորությամբ կամ հրապարակման զանգվածային լրատվամիջոցներում:

13.11.9. Փակ աճուրդ անցկացնելիս չի թույլատրվում իրականացնել տեսագրություն և ձայնագրություն:

14. ՆԱԽԱՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ՝ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՊՈՏԵՆՑԻԱԼ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ

14.1. Գազպրոմ Խմբի մրցակցային գնումներ անցկացնելիս մրցակցության անհրաժեշտ մակարդակ ապահովելու նպատակով Գազպրոմ Խմբի Դեպարտամենտի (Նախատրակավորման Կազմակերպչի) կողմից անց է կացվում բաց նախատրակավորում:

14.2. Նախատրակավորումը չի հանդիսանում սակարկություն (մրցույթ, աճուրդ) կամ հրապարակային մրցույթ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 463-465 և 1043-1047 հոդվածներին համապատասխան և պարտավորություններ չի առաջացնում Նախատրակավորման Կազմակերպչի համար՝ սահմանված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի նշված հոդվածներով: Նախատրակավորումը չի հանդիսանում նաև առաջարկների հարցում:

14.3. Նախատրակավորման խնդիրն է Գազպրոմ Խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանի կազմումը, ովքեր ընդունակ են կատարելու աշխատանքների որոշակի տեսակներ, մատուցելու ծառայությունների որոշակի տեսակներ, իրականացնելու որոշակի ապրանքների մատակարարում՝ ուղղված ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արդյունքների արտադրական գործընթացներին, որակին և անվտանգությանը՝ սահմանված պահանջներին համապատասխան, պոտենցիալ մասնակիցներին Գազպրոմ Խմբի կողմից հայտարարվող մրցակցային գնումներին մասնակցելու հետագա հրավերի համար, որոնց որակավորումը համապատասխանում է գնման համապատասխան առարկայով պահանջվող մակարդակին:

14.4. Նախատրակավորումը հիմնվում է հետևյալ հիմնական սկզբունքների վրա.

- ազատություն /բացություն/, թափանցիկություն, հանրամատչելիություն, երբ նախատրակավորման անցկացման մասին տեղեկատվությունը, դրա անցկացման կարգն ու պայմանները հաղորդվում են անձանց անսահմանափակ շրջանակի՝ համացանցում, «Գազպրոմ» ՀԲԸ կայքում տեղադրելու ճանապարհով, Նախատրակավորումն անցկացվում է նրա մասնակիցների համար անհատույց (անվճար) հիմունքներով,
- իրավաբանական և ֆիզիկական անձանց մասնակցության կամավորություն,
- Գազպրոմ Խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում չներառելու մասին խտրականության և կողմնապահ, չհիմնավորված որոշումների ընդունման անթույլատրելիություն:

14.5. Նախատրակավորման անցկացման կարգը և պայմանները, իրավաբանական և ֆիզիկական անձանց՝ Գազպրոմ Խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում ներառելու որակավորման պահանջները և չափանիշները, Նախատրակավորմանը մասնակցելու համար ներկայացված հայտերի ծավալին, բովանդակությանն ու ձևակերպմանն ուղղված պահանջները նշվում են Նախատրակավորման վերաբերյալ փաստաթղթերում, որոնք տեղադրվում են «Գազպրոմ» ՀԲԸ-ի համացանցային կայքում:

14.6. Նախաորակավորման անցկացման ընդհանուր կարգը.

- Կազմակերպչի կողմից Նախաորակավորում անցկացնելու մասին ծանուցման և Նախաորակավորման մասին փաստաթղթերի տեղադրում «Գազպրոմ» ՋԲԸ-ի համացանցային կայքում,
- Նախաորակավորման պոտենցիալ մասնակցի կողմից Կազմակերպչին ծանուցման ուղարկում՝ Նախաորակավորման վերաբերյալ փաստաթղթերով սահմանված ձևով Նախաորակավորմանը մասնակցելու մտադրության մասին,
- Նախաորակավորման պոտենցիալ մասնակցի կողմից Նախաորակավորմանը մասնակցելու հայտի պատրաստում և ներկայացում,
- Նախաորակավորման մասնակցի՝ Նախաորակավորմանը մասնակցելու հայտի ընդունում և գրանցում,
- Կազմակերպչի կողմից Նախաորակավորմանը մասնակցելու հայտերի կազմում մասնակցի կողմից ներկայացրած տեղեկատվության ամբողջականության քննում և գնահատում,
- Նախաորակավորման մասնակցի իրավունակության, վճարունակության (ֆինանսական դիրքի) և գործարար հեղինակության գնահատում, որն անցկացվում է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Կորպորատիվ պաշտպանության ծառայության կողմից,
- Նախաորակավորման վերաբերյալ փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխան Նախաորակավորմանը մասնակցելու հայտերի փորձագիտական գնահատում, այդ թվում (անհրաժեշտության դեպքում⁴) նաև այլ աղբյուրներից տեղեկատվության հավաքում Նախաորակավորման մասնակցի կողմից մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների որակի մասին սույն բաժնի 14.10 և 14.11 ենթակետերին համապատասխան Նախաորակավորման մասնակցի տեխնիկական ստուգման անցկացում,
- Կազմակերպչի կողմից Նախաորակավորման մասնակցին Գազպրոմ Խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանի մեջ ընդգրկելու կամ չընդգրկելու մասին որոշման ընդունում՝ ըստ մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների որոշակի տեսակների,
- մասնակցին Նախաորակավորման Կազմակերպչի կողմից ընդունված որոշման մասին ծանուցում,
- Գազպրոմ Խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում ներգրավված Նախաորակավորման մասնակցի կողմից նախկինում ներկայացրած փաստաթղթերի և դրանց փոփոխության դեպքում տեղեկությունների արդիականացում,
- Գազպրոմ Խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում ներգրավված Նախաորակավորման մասնակիցների Նախաորակավորման վերաբերյալ փաստաթղթերով սահմանված պահանջներին համապատասխանության մոնիթորինգ, որն անցկացվում է Նախաորակավորման Կազմակերպչի կողմից:

⁴ Որոշվում է Նախաորակավորման Կազմակերպչի կողմից

14.7. Գազպրոմ Խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում ներառելու համար Նախաորակավորում անցկացնելիս Նախաորակավորման մասնակիցների համար սահմանվում են հետևյալ հիմնական պահանջները.

- գնման մասնակիցներին առաջադրվող սույն Կարգի 1.5.1 կետին համապատասխան սահմանված պարտադիր պահանջներին համապատասխանություն,
- վճարունակություն,
- պատշաճ որակի ապրանքների որոշակի տեսակների արտադրության (մատակարարման), աշխատանքների որոշակի տեսակների կատարման, ծառայությունների որոշակի տեսակների մատուցման համար փորձի, որակավորման, արտադրական հզորությունների և որակավորման աշխատանքային ռեսուրսների առկայություն;
- բացասական գործարար հեղինակության բացակայություն:

14.8. Նախաորակավորման պաշտոնական լեզուն ռուսերենն է: Նախաորակավորմանը մասնակցելու համար ներկայացված բոլոր փաստաթղթերը պետք է ձևակերպված լինեն ռուսերենով:

14.9. Նախաորակավորման մասնակիցների՝ Նախաորակավորմանը մասնակցելու հայտերի դիտարկման և գնահատման գործընթացում Նախաորակավորման Կազմակերպիչն իրավունք ունի պահանջել մասնակցի կողմից ներկայացված տեղեկությունների և փաստաթղթերի պարզաբանումներ:

14.10. Նախաորակավորման Կազմակերպիչն իրավունք ունի Նախաորակավորման մասնակցի համաձայնությամբ անցկացնելու փաստացի տվյալներին մասնակցի կողմից Նախաորակավորման մասնակցության հայտում նշված տեղեկությունների համապատասխանության ստուգում՝ այցելելով Նախաորակավորման մասնակցի արտադրական գործունեության վայր (տեխնիկական ստուգում):

14.11. Նախաորակավորման մասնակցի տեխնիկական ստուգումն անցկացնելու նպատակով Նախաորակավորման Կազմակերպիչը ստեղծում է հանձնաժողով կամ աշխատանքային խումբ, մշակում է տեխնիկական ստուգման անցկացման պլան, որը համաձայնեցնում է Նախաորակավորման ստուգվող մասնակցի հետ:

Նախաորակավորման մասնակցի աշխատողները պետք է աջակցեն Նախաորակավորման Կազմակերպչի հանձնաժողովին (աշխատանքային խմբին) տեխնիկական ստուգում անցկացնելիս, այդ թվում.

- տրամադրել հավաստի և օպերատիվ տեղեկատվություն՝ իրականացվող տեխնիկական ստուգման հարցերով,
- ապահովել տեխնիկական ստուգման օբյեկտների նկատմամբ մուտքի հնարավորություն, այդ թվում՝ մուտքի հնարավորություն տեխնիկական ստուգման տարածք, շենքեր, շինություններ և այլ օբյեկտներ,

անհրաժեշտության դեպքում՝ հանձնաժողովի (աշխատանքային խմբի) աշխատանքի համար տրամադրել տարածքներ, կապի միջոցներ, կազմտեխնիկա, տրանսպորտ և այլն:

Տեխնիկական ստուգման արդյունքներով հանձնաժողովի (աշխատանքային խմբի) կողմից կարող է ձևակերպվել տեխնիկական ստուգման անցկացման արձանագրություն:

14.12. Նախաորակավորմանը մասնակցելու հայտերի դիտարկման և գնահատման, Նախաորակավորման մասնակցի գնահատման և տեխնիկական ստուգման անցկացման համար (անհրաժեշտության դեպքում) Նախաորակավորման Կազմակերպիչը կարող է սահմանված կարգով աշխատանքի մեջ ներգրավել խորհրդատվական, գիտահետազոտական և այլ կազմակերպությունների, ինչպես նաև առանձին մասնագետների և փորձագետների, ստեղծել աշխատանքային խմբեր և հանձնաժողովներ:

14.13. Նախաորակավորմանը մասնակցելու հայտերի դիտարկման և գնահատման և Նախաորակավորման մասնակցի անցկացված տեխնիկական ստուգման (դրա անցկացման դեպքում) արդյունքներով Նախաորակավորման Կազմակերպիչը որոշում է ընդունում Նախաորակավորման մասնակցին Գազպրոմ խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում ներգրավելու կամ չներգրավելու մասին՝ ըստ մատակարարվող ապրանքների, կատարվող աշխատանքների, մատուցվող ծառայությունների որոշակի տեսակների:

14.14. Այն դեպքերում, եթե Նախաորակավորման Կազմակերպիչը հայտնաբերում է Գազպրոմ խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում ներառված Նախաորակավորման մասնակցի կողմից ներկայացված ոչ հավաստի տեղեկություններ, կամ եթե ստանում է տվյալներ, որոնք վկայում են Գազպրոմ խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում ներառված Նախաորակավորման մասնակցի բացասական գործարար հեղինակության մասին կամ իրավունակության փոփոխության մասին, Նախաորակավորման Կազմակերպիչն իրավունք ունի հանել այդպիսի մասնակցին նշված գրանցամատյանից:

14.15. Նախաորակավորման Կազմակերպիչը Նախաորակավորման մասնակիցների հանդեպ հետագա գնումների անցկացման համար պարտավորություններ չի կրում և իրավունք ունի ցանկացած փուլում հրաժարվելու Նախաորակավորում անցկացնելուց՝ մասնակիցների հանդեպ առանց նյութական պարտավորություններ կրելու:

14.16. Նախաորակավորման մասնակիցն ինքնուրույն է հոգում Նախաորակավորմանը մասնակցելու հետ կապված բոլոր ծախսերը՝ այդ թվում և Նախաորակավորմանը մասնակցելու հայտի պատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերը, իսկ Նախաորակավորման Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում այդ ծախսերի համար և չունի պարտավորություններ՝ անկախ Նախաորակավորման ընթացքից և արդյունքներից:

14.17. Գազպրոմ Խմբի գնումների ընթացակարգի պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում գնման ընթացակարգերի մասնակցի բացակայությունը (այդ թվում՝ նաև նրա հանունը գրանցամատյանից) հիմք չի հանդիսանում նրա մրցակցային գնման հայտը մերժելու համար, որը ներկայացվել է այդպիսի մասնակցի կողմից՝ գնման վերաբերյալ փաստաթղթերով սահմանված կարգով:

14.18. Առաջարկների հարցում անցկացնելիս առաջարկների հարցման Կազմակերպիչը (Դեպարտամենտը) կարող է գնումներ անցկացնելու վերաբերյալ ծանուցման և փաստաթղթերի մեջ իրավունք սահմանել Գազպրոմ Խմբի գնումների պոտենցիալ մասնակիցների գրանցամատյանում ներառված անձանց համար՝ չներկայացնելու առանձին փաստաթղթեր⁵, որոնք ավելի վաղ ներկայացվել էին նրանց կողմից Նախարարակալորում անցնելու համար, բացառությամբ այն փաստաթղթերի, որոնց մեջ փոփոխություններ են մտցվել և այն փաստաթղթերի, որոնք առաջարկների ներկայացման հարցման մասնակցության հայտի ներկայացման պահին կորցրել են ուժը:

15. ԳՆՈՒՄՆԵՐ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ:

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՌԵԿՏՐԱՅԻՆ ՀԱՐԹԱԿՆԵՐ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

15.1. Սույն Կարգով նախատեսված ցանկացած եղանակով գնումներ անցկացնելիս գնման ցանկացած փուլ կամ առանձին ընթացակարգ Կազմակերպիչի որոշմամբ կարող է անցկացվել էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության, էլեկտրոնային առևտրային հարթակների, **ԷԳԱՂ** և էլեկտրոնային այլ միջոցների օգտագործմամբ):

15.2. Գնման վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված դեպքերում թույլատրվում է էլեկտրոնային ձևով գնումների ընթացակարգերին մասնակցելու հայտերի ներկայացում, այդ թվում էլեկտրոնային փոստի տեղեկատվության էլեկտրոնային թվային կրիչի միջոցով: Ընդ որում՝ այդպիսի հայտերը պետք է ստորագրված լինեն էլեկտրոնային որակավորված ստորագրությամբ: Գնումների անցկացման գործընթացում ներկայացվող էլեկտրոնային փաստաթղթերը (այդ թվում՝ փաստաթղթերի բնօրինակների սկանավորված օրինակները կամ նոտարական վավերացմամբ պատճենները) պետք է ստորագրված լինեն գնումների ընթացակարգի մասնակցի կամ գնումների մասնակցի (գնումների գործընթացի կամ գնումների մասնակցի անունից գործելու իրավունք ունեցող անձիք) որակավորված էլեկտրոնային ստորագրությամբ:

⁵Փաստաթղթերի ցանկը սահմանվում է Դեպարտամենտի կողմից և տեղադրվում «Գազպրոմ» ՀԲԸ-ի համացանցային կայքում

15.3. Որակավորված էլեկտրոնային ստորագրությունները, որակավորված էլեկտրոնային ստորագրությունների միջոցները և որակավորված հավաստագրերը պետք է տրված լինեն հավատարմագրված հավաստագրման կենտրոնների կողմից՝ «Էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

15.4. Էլեկտրոնային առևտրային հարթակները, որոնք օգտագործվում են էլեկտրոնային ձևով գնումներ անցկացնելիս, պետք է հաստատված լինեն Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից:

15.5. Էլեկտրոնային առևտրային հարթակներում գնումներ անցկացնելիս թույլատրվում են գնման ընթացակարգերի անցկացման կարգի և կազմի առանձին շեղումներ, որոնք նախատեսված են սույն Կարգով, պայմանավորված են էլեկտրոնային առևտրային հարթակների տեխնիկական առանձնահատկություններով, տվյալ հարթակներում գործող կանոններով և կանոնակարգերով, ընդ որում՝ պետք է ապահովված լինի Հայաստանի Հանրապետության օրենսդրության նորմերի պահպանումը:

15.6. Էլեկտրոնային առևտրային հարթակներում գնումների անցկացման առանձնահատկությունները.

15.6.1. Էլեկտրոնային առևտրային հարթակներում գնումների անցկացման ժամանակ գնումների մասին տեղեկության տեղադրումը այդ հարթակում պետք է իրականացնել Պատվիրատուի կողմից գնումների տեղեկատվական համակարգում (ԳՏՀ) գնման մասին տեղեկության տեղադրումից ոչ ուշ, քան մեկ աշխատանքային օրում՝ պարտադիր հղում կատարելով գնումների տեղեկատվական համակարգի (ԳՏՀ) հասցեին:

15.6.2. Էլեկտրոնային առևտրային հարթակում անցկացվող գնմանը մասնակցելու համար գնման գործընթացի մասնակցին անհրաժեշտ է գնման մասին փաստաթղթերի համաձայն գրանցվել (հավատարմագրվել) էլեկտրոնային առևտրային հարթակում՝ նրա համար գործող կանոններին և կանոնակարգերին համապատասխան:

15.6.3. Գնման ընթացակարգի մասնակցին, գնման մասնակցին, Պատվիրատուին, Կազմակերպչին էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորի կողմից էլեկտրոնային փաստաթղթերի ձևով ուղարկվող կամ նրա կողմից այդ հարթակում տեղադրվող փաստաթղթերը և տեղեկությունները պետք է ստորագրված լինեն որակավորված էլեկտրոնային ստորագրություն ունեցող անձի կողմից, որը իրավունք ունի գործելու էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորի անունից կամ պետք է այդ հարթակի ծրագրային և տեխնիկական միջոցների օգնությամբ վավերացված լինեն էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորի կողմից:

15.6.4. Էլեկտրոնային առևտրային հարթակը պետք է բավարարի հետևյալ ընդհանուր պահանջներին.

- ամբողջությամբ իրականացնել գնումների անցկացման գործընթացը՝ սույն Կարգին համապատասխան,

- ապահովել տեղեկատվության պահպանումը, զգուշացնել և կանխել նրանց ոչնչացման փորձերը, չարտոնված փոփոխություններն ու պատճենահանումը/արտատպումը/, ինչպես նաև տեղեկությունների մշակման բնականոն ռեժիմի խախտումները, այդ թվում՝ տեխնոլոգիական փոխհարաբերությունը տեղեկատվական այլ համակարգերի հետ,

- կիրառել հակավիրուսային պաշտպանության ապարատային կամ ծրագրային միջոցներ,

- սահմանափակել տեխնիկական միջոցներից օգտվելու մուտքը, որոնց վրա գտնվում են ծրագրային և տեխնիկական ապահովման միջոցները,

- ապահովել տեղեկատվության ամենօրյա պատճենահանումը /արտատպումը/ պահուստային կրիչի վրա, որը կապահովի նրա վերականգնման հնարավորությունը,

- ապահովել էլեկտրոնային ստորագրության միջոցների կիրառումը,

- գնման Կազմակերպչի, գնումների ընթացակարգի մասնակցի, գնումների մասնակցի կողմից պաշտպանված կապի միջոցով ապահովել փաստաթղթերի և տեղեկությունների տրամադրումը,

- արգելափակել գնման մասնակցության հայտերից օգտվելու մուտքը մինչև այդ հայտերի մուտքի թույլտվության բացման սահմանված ժամկետը:

15.6.5. Էլեկտրոնային առևտրային հարթակի աշխատանքի ծրագրային ապահովումը և տեխնոլոգիական միջոցների ապահովումը պետք է ապահովեն մուտքը էլեկտրոնային առևտրային հարթակ և աշխատանքը նրա հետ՝ տարածված վեբ-բրաուզերների հիման վրա, առանց հատուկ ծրագրային կամ տեխնոլոգիական միջոցների տեղակայման:

15.6.6. Էլեկտրոնային առևտրային հարթակում գնում անցկացնելու ժամանակ գնման ընթացակարգի մասնակցի կամ գնման մասնակցի (նրա անունից գործելու իրավունք ունեցող անձի) որակավորված էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված՝ գնման ընթացակարգի մասնակիցների հայտեր պարունակող ֆայլերի ընդունումը կատարվում է էլեկտրոնային առևտրային հարթակի ծրագրային և տեխնիկական միջոցների օգտագործմամբ: Էլեկտրոնային առևտրային հարթակի ծրագրային և տեխնիկական միջոցների օգտագործմամբ՝ որակավորված էլեկտրոնային ստորագրությամբ ստորագրված էլեկտրոնային փաստաթղթերի և տեղեկությունների ավտոմատ ուղարկումը նշանակում է, որ էլեկտրոնային փաստաթղթերի ձևով տրված այդ փաստաթղթերն ու տեղեկությունները բնագիր են և ուղարկված են գնման ընթացակարգի մասնակցի կամ գնման մասնակցի անունից:

15.6.7. Էլեկտրոնային առևտրային հարթակում գնում անցկացնելու ժամանակ ծրարների բացման ընթացակարգի փոխարեն կատարվում է մուտքի թույլտվության բացման ընթացակարգ՝ էլեկտրոնային եղանակով գնման մասնակցության համար տրված հայտերին:

15.6.8. Էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորը գնման մասին ծանուցման մեջ և փաստաթղթերում սահմանված ժամկետում ապահովում է գնման Կազմակերպչի մուտքի թույլտվության միաժամանակյա բացումը բոլոր հայտերին և այնտեղ պարունակվող փաստաթղթերին և տեղեկություններին:

15.6.9. Հայտերի մուտքի բացման արձանագրության նախապատրաստումը, ձևակերպումն ու ստորագրումը կարող է իրականացվել Կազմակերպչի կողմից՝ օգտագործելով էլեկտրոնային առևտրային հարթակի տեխնոլոգիական և ֆունկցիոնալ հնարավորությունները:

16. ԳՆՈՒՄ ՄԻԱԿ ՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՑ (ԿԱՊԱԼԱՌՈՒՑ, ԿԱՏԱՐՈՂՈՒՑ)

16.1. Պատվիրատուն իրավունք ունի իրականացնելու ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնում միակ մատակարարից (կապալառուից, կատարողից) հետևյալ դեպքերում.

16.1.1. գնման ենթակա ապրանքները, աշխատանքները և ծառայությունները վերաբերում են բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության ոլորտին, և մատակարարի (կապալառու, կատարող) այլընտրանքը բացակայում է,

16.1.2. կնքվում է էլեկտրաէներգիայի մատակարարման կամ էլեկտրաէներգիայի առուվաճառքի պայմանագիր երաշխավորող մատակարարի հետ,

16.1.3. աշխատանքները կամ ծառայությունները կատարվում են (մատուցվում են) բացառապես գործադիր իշխանության մարմինների կողմից՝ դրանց լիազորություններին համապատասխան կամ նրանց ենթակա պետական կազմակերպությունների, պետական ունիտար /միացյալ/ ձեռնարկությունների կողմից, որոնց համապատասխան լիազորությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերով,

16.1.4. կետը հանված է,

16.1.5. իրականացվում է ջրամատակարարման, ջրահեռացման, կոյուղու, ջերմամատակարարման, գազամատակարարման (բացի հեղուկացված գազի իրացման ծառայություններից) ծառայությունների մատուցում, ինժեներատեխնիկական ապահովման ցանցերին միացում (միանալը) Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան կանոնավորվող գներով (սակագներով),

16.1.6. Անհաղթահարելի ուժի ազդեցության (տվյալ հանգամանքների պայմաններում արտակարգ և անկանխելի) հետևանքով առաջացել է որոշակի ապրանքների, աշխատանքների, ծառայությունների պահանջարկ, վթարային իրավիճակների, այդ թվում վտանգի կանխման, ինչպես նաև դրանց առաջացման սպառնալիքի կանխման, որի հետ կապված ժամանակի ծախս պարունակող գնման այլ

միջոցի կիրառումը նպատակահարմար չէ: Պատվիրատուն իրավունք ունի սույն կետի համաձայն ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագիր կնքել այն քանակով, ծավալով, որոնք անհրաժեշտ են անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքների կամ վթարային իրավիճակների առաջացման սպառնալիքի վերացման կամ շտապ բժշկական օգնություն տրամադրելու համար,

16.1.7. իրականացվում է որոշակի հեղինակների տպագիր կամ էլեկտրոնային հրատարակությունների գնում, նման տպագիր և էլեկտրոնային հրատարակությունների հրատարակիչներից էլեկտրոնային հրատարակություններ մուտք ունենալու համար ծառայությունների մատուցում՝ կրթական հիմնարկությունների, գրադարանների, գիտական կազմակերպությունների գործունեության ապահովման համար,

16.1.8. կնքվում է կենդանաբանական այգի, թատրոն, կինոթատրոն, կրկես, թանգարան, ցուցահանդես, սպորտային միջոցառում այցելության պայմանագիր,

16.1.9. իրականացվում է ծառայությունների գնում՝ կապված աշխատողին ծառայողական գործուղման (ուղևորություն դեպի ծառայողական գործուղման վայրը և վերադարձ, բնակելի տարածքի վարձակալություն, տրանսպորտային սպասարկում, սննդի ապահովում), հերթափոխի (բնակության ապահովում, դեպի հերթափոխի վայր և վերադարձ) ուղարկելու հետ:

16.1.10. մրցույթը կամ աճուրդը ճանաչվում են չկայացած, և մրցույթին (աճուրդին) գնման ընթացակարգերի միայն մեկ մասնակցի մասնակցության հայտ է ճանաչված համապատասխան գնման մասին փաստաթղթերի պահանջներին, գնման ընթացակարգերի միայն մեկ մասնակից է ճանաչվում աճուրդի մասնակից, և պայմանագիրը կնքվում է նման մասնակցի հետ,

16.1.11. մրցակցային գնմանը մասնակցելու համար ոչ մի հայտ չի ներկայացվել կամ մրցակցային գնման համար ոչ մի հայտ չի թույլատրվել, և մրցակցային գնումը ճանաչված է չկայացած, ընդ որում՝ պայմանագիրը կարող է կնքվել Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի հետ համաձայնեցմամբ և միայն այն պայմաններով, որոնք սահմանված են պայմանագրի նախագծով, ներառված են գնման մասին փաստաթղթերի կազմում՝ այն գումարով, որը չի գերազանցում մրցակցային գնումն անցկացնելիս պայմանագրի սահմանված նախնական (առավելագույն) գինը,

16.1.12. պայմանագրի գինը (պայմանագրով նախատեսված ապրանքների, աշխատանքների, ծառայությունների արժեքը) չի գերազանցում առավելագույն գումարը, որը սահմանված է «Գազպրոմ» ՉԲԸ-ի հրամանով՝ «Գազպրոմ» ՉԲԸ-ի կամ Գազպրոմ Խմբի Ընկերության կողմից կնքվող պայմանագրերի համար, առանց մրցակցային գնումների անցկացման,

16.1.13. «Գազպրոմ» ՉԲԸ Վարչության նախագահի կողմից որոշում է ընդունվել միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու մասին: Այս դեպքում՝ մինչև պայմանագրի կնքումը, Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմինը առաջարկ է ներկայացնում «Գազպրոմ» ՉԲԸ-ի Վարչության նախագահին տվյալ պայմանագրով գնվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնի վերաբերյալ, որից հետո «Գազպրոմ» ՉԲԸ-ի

Վարչության նախագահը վերջնականապես հաստատում է այդ պայմանագրի գինը: «Գազպրոմ» ՉԲԸ-ի Վարչության նախագահի պարտականությունների ժամանակավոր պաշտոնակատարին չի թույլատրվում որոշում ընդունել միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ ապրանքների մատակարարման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու մասին,

16.1.14. Գազպրոմը կնքի ընկերությունների կողմից իրականացվում է ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) գնում «Գազպրոմ» ՉԲԸ-ից,

16.1.15. կնքվում է ծառայությունների մատուցման պայմանագիր՝ կապված արտագնա միջոցառումների ապահովման հետ, որոնք անցկացվում են «Գազպրոմ» ՉԲԸ-ի Տնօրենների խորհրդի նախագահի, «Գազպրոմ» ԲԲԸ-ի Վարչության նախագահի մասնակցությամբ (հյուրանոցային, տրանսպորտային սպասարկում, համակարգչային սարքավորումների շահագործում, սննդի ապահովում),

16.1.16. մատակարարը (արտադրողը) կամ նրա միակ գործարքառուն /դիլերը/ (տարածորդը /դիստրիբյուտորը/, ներկայացուցիչը), մատակարարման պայմանագրում սահմանված պահանջներին համապատասխան իրականացնում է Պատվիրատուին մատակարարված սարքավորումների հավաքակցման-վերահսկողություն և մատակարարված ապրանքների երաշխիքային և ընթացիկ սպասարկումը,

16.1.17. կնքվում է քաղաքացիաիրավական պայմանագիր անհատ ձեռներեց չհանդիսացող ֆիզիկական անձի հետ,

16.1.18. կնքվում է գազի, գազի կոնդենսատի /խտուցքի/, նավթի առուվաճառքի պայմանագիր

16.1.19. կնքվում է պայմանագիր Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գազի տարանցման և սեղմման ծառայությունների մատուցման նպատակով,

16.1.20. կնքվում է գազի արդյունահանման, փոխադրման, պահման, վերամշակման ծառայությունների մատուցման պայմանագիր «Գազպրոմ» ՉԲԸ այն դուստր ընկերությունների հետ, որոնց կանոնադրական կապիտալի 100%-ը պատկանում է «Գազպրոմ» ՉԲԸ-ին կամ «Գազպրոմ» ՉԲԸ դուստր ընկերությունների դուստր ընկերությունների հետ, եթե «Գազպրոմ» ՉԲԸ դուստր ընկերությունների այդ դուստր ընկերությունների կանոնադրական կապիտալի 100%-ը պատկանում է «Գազպրոմ» ՉԲԸ-ի դուստր ընկերություններին և որոնք «Գազպրոմ» ՉԲԸ-ի հետ միասին իրականացնում են գազի արդյունահանման, փոխադրման, պահման, վերամշակման աշխատանքներ, որոնց արտադրական օբյեկտները մտնում են գազամատակարարման միասնական համակարգի մեջ և նրանց են պատկանում սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքերով,

16.1.21. կնքվում է հեղուկ ածխաջրածինների արդյունահանման, փոխադրման, պահման, վերամշակման ծառայությունների մատուցման պայմանագիր «Գազպրոմ» ՉԲԸ այն դուստր ընկերությունների հետ, որոնց կանոնադրական կապիտալի 100%-ը պատկանում է «Գազպրոմ» ՉԲԸ-ին կամ «Գազպրոմ» ՉԲԸ դուստր ընկերությունների դուստր ընկերությունների հետ, եթե «Գազպրոմ» ՉԲԸ դուստր ընկերությունների այդ դուստր ընկերությունների կանոնադրական կապիտալի 100%-ը պատկանում է «Գազպրոմ» ՉԲԸ-ի դուստր ընկերություններին և որոնք «Գազպրոմ» ՉԲԸ-ի հետ միասին իրականացնում են հեղուկ ածխաջրածինների արդյունահանման, փոխադրման,

պահման, վերանշակման աշխատանքներ, որոնց արտադրական օբյեկտները մտնում են գազամատակարարման միասնական համակարգի մեջ և նրանց են պատկանում սեփականության իրավունքով կամ այլ օրինական հիմքերով,

16.1.22. կնքվում է ներդրումային պայմանագիր, որով որպես ներդրող հանդես է գալիս «Գազպրոմ» ՉԲԸ-ն,

16.1.23. Իրականացվում է համապատասխան հեղինակների կողմից կապիտալ շինարարության օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման, շինարարության, վերակառուցման, կապիտալ վերանորոգման նկատմամբ հեղինակային հսկողության ծառայությունների գնում,

16.1.24. կնքվում է անշարժ գույքի վարձակալության կամ առուվաճառքի պայմանագիր, բացառությամբ օդային և ծովային նավերի, ներքին նավարկության նավերի, տիեզերական օբյեկտների վարձակալության կամ վաճառքի,

16.1.25. կնքվում է շարժական գույքի առուվաճառքի, վարձակալության պայմանագիր կամ անշարժ և/կամ շարժական գույքի կոնսերվացման, ապակոնսերվացման, լիկվիդացման ծառայությունների մատուցման պայմանագիր «Գազպրոմ» ՉԲԸ-ի, Գազպրոմ Խմբի ընկերությունների միջև,

16.1.26. կնքվում է հովանավորչական գովազդի տարածման ծառայության մատուցում նախատեսող պայմանագիր, որով որպես հովանավորիչ հանդես է գալիս «Գազպրոմ» ՉԲԸ-ն և/կամ Գազպրոմ Խմբի ընկերությունները,

16.1.27. կնքվում է պայմանագիր էլեկտրոնային առևտրային հարթակի օպերատորի հետ,

16.1.28. Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի կողմից գնումը ճանաչվում է ոչ մրցակցային, և/կամ Գազպրոմ Խմբի Գնումների կառավարման կենտրոնական մարմնի հետ համաձայնեցմամբ կնքվում է պայմանագիր միակ մատակարարի (կապալառուի, կատարողի) հետ այն դեպքում, երբ ապրանքները (աշխատանքները, ծառայությունները) կարող են մատակարարվել (կատարվել, մատուցվել) միայն տվյալ մատակարարի (կապալառուի, կատարողի) կողմից, և այլընտրանքային մատակարարը (կապալառու, կատարողը) բացակայում է,

16.1.29. Գազպրոմ Խմբի Ընկերության կողմից, որի հետ մրցակցային գնման արդյունքներով ստորագրվել է պայմանագիր, կնքվում է պայմանագիր Գազպրոմ Խմբի նման Ընկերության կողմից մրցակցային գնման մասնակցության հայտում նշված ենթամատակարարի (ենթակապալառուի, ենթակատարողի) հետ, որոնք սեփական ուժերով իրականացնում են պայմանագրի առարկա հանդիսացող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) մատակարարումը,

16.1.30. կնքվում է պայմանագիր մատակարարի (մտավոր գործունեության արդյունքի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կամ համապատասխան իրավահաստատող փաստաթղթով (արտոնագիր /պատենտ/, վկայական) հաստատված անհատականացման միջոցի նկատմամբ բացառիկ իրավունք ունեցող կապալառուի, կատարողի) հետ մտավոր գործունեության արդյունքների գնման վերաբերյալ,

16.1.31. վարկային կազմակերպության հետ կնքվում է բանկային երաշխիքի պայմանագիր՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ պարտավորությունների ապահովման նպատակով,

16.1.32. կնքվում է բանկային հաշվի բացման, էլեկտրոնային հաշվարկների («Բանկ-հաճախորդ») մեխանիզմի օգտագործման, դրամարկղային-հաշվարկային սպասարկման, ներառյալ ինկասսացիայի, բանկային կորպորատիվ քարտերի թողարկման և սպասարկման պայմանագիր,

16.1.33. «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ և նրա դուստր ընկերությունների պարտավորությունների աջակցման և սպասարկման ծառայությունների մատուցման գնման նպատակով կնքվում է պայմանագիր,

16.1.34. պայմանագիր է կնքվում «Գազպրոմ» ՋԲԸ այն դուստր ընկերությունների հետ, որի կանոնադրական կապիտալի 100%-ը պատկանում է «Գազպրոմ» ՋԲԸ-ին կամ «Գազպրոմ» ՋԲԸ դուստր ընկերությունների դուստր ընկերությունների հետ, պայմանով, որ «Գազպրոմ» ՋԲԸ դուստր ընկերության այդ դուստր ընկերության կանոնադրական կապիտալի 100%-ը պատկանում է «Գազպրոմ» ՋԲԸ-ին, «Գազպրոմ» ՋԲԸ-ի հետ համատեղ հետևյալ տեսակի աշխատանքների (ծառայությունների) գնման նպատակով.

16.1.31.1. կապի ծառայությունների`

- տեղական և ներտարածքային հեռախոսային կապի,
- կապի տելեմատիկ ծառայությունների, այդ թվում` համացանցում,
- արբանյակային ցանցի,
- միջքաղաքային և միջազգային կապի ծառայությունների մուտքի տրամադրման, «Գազպրոմ» ՋԲԸ կապի ցանցի ռեսուրսներին, կապի ցանցի ռեսուրսներին մուտքի կետերի ստեղծման և սպասարկման,
- տվյալների փոխադրման ցանցում կապի ծառայությունների, այդ թվում ձայնային տեղեկատվության (IP- հեռախոսակապ) փոխադրման նպատակով,
- կապուղիների տրամադրման,
- Գազպրոմ խմբի ընկերությունների էլեկտրակապերի ցանցերի միացման,
- ռադիոհեռախոսային շարժունակ (բջջային) կապի ծառայությունների տրամադրում:

16.1.34.2. Կապի սարքավորումների վերանորոգման և սպասարկման աշխատանքների (ծառայությունների) կատարում կապալառուների (կատարողների) սեփական տեխնիկական կենտրոնների հիմքի վրա:

16.1.34.3. Տեղեկատվական-տեխնիկական ապահովման ծառայություններ.

-«Գազպրոմ» ՋԲԸ ծրագրային ապահովման օգտագործման իրավունքի վերաբերյալ կորպորատիվ հավատարմագրված համաձայնագրերի շրջանակներում գործակալի ծառայությունների մատուցում,

-ծայրամասային սարքավորումների և օգտագործողների աշխատատեղերի հաշվողական տեխնիկայի միջոցների համակարգային-տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցում և ժամանակավոր օգտագործման տրամադրում,

-ծրագրային ապահովման տեխնիկական աջակցության և օգտագործման իրավունքի տրամադրում,

-տվյալների վերամշակման կենտրոնների, կենտրոնական հաշվողական համալիրի, տեղեկատվական-հաշվողական համակարգերի, «Գազպրոմ» ՋԲԸ հավաստագրող կենտրոնների ցանցերի և տեղեկատվության պաշտպանության համակարգի համակարգային-տեխնիկական սպասարկում,

-«Գազպրոմ» ՉԲԸ և Գազպրոմ Խմբի ընկերությունների և տվյալների փոխադրման ոլորտային համալիրների տեղեկատվական-կառավարչական համակարգերի շահագործում, աջակցություն և ուղեկցում:

16.1.34.4. Կետը հանվել է:

16.1.34.5. «Գազպրոմ» ՉԲԸ շինարարական օբյեկտների նկատմամբ տեխնիկական վերահսկողության կազմակերպման ծառայությունների մատուցում:

16.1.34.6. «Գազպրոմ» ՉԲԸ հրամանին համապատասխան Գազպրոմ Խմբի ընկերությունների կարիքների համար կենտրոնացված մատակարարումների մեջ մտնող նյութատեխնիկական ռեսուրսների մատակարարման կազմակերպման ծառայությունների մատուցում:

16.1.34.7. «Գազպրոմ» ԲԲԸ հրամանին համապատասխան Գազպրոմ Խմբի ընկերությունների և նրա դուստր ընկերությունների օբյեկտներում վերանորոգման և տեխնիկական սպասարկման կազմակերպման ծառայությունների մատուցում:

16.1.34.8. «Գազպրոմ» ԲԲԸ հրամանին համապատասխան Գազպրոմ Խմբի ընկերությունների օբյեկտների ախտորոշման հետազոտությունների աշխատանքների կազմակերպման ծառայությունների մատուցում:

16.1.34.9. «Գազպրոմ» ՉԲԸ օբյեկտներում գազի, հրդեհի, արդյունաբերական անվտանգության և աշխատանքի պահպանության, վթարների առաջացման կանխարգելմանն ու վերացմանն ուղղված հատուկ աշխատանքների (ծառայությունների), գազավտանգ և վերանորոգման վերականգնողական պլանային աշխատանքների ապահովում:

16.1.34.10. Էլեկտրաէներգիայի առևտրային հաշվառման ավտոմատացված մեխանիզմի (ԷԱՅԱՍ) և դրա տեղեկատվական սպասարկման շահագործման ծառայությունների, սեփական ցանցերում կորուստների փոխհատուցման նպատակով Էլեկտրաէներգիայի գնման ծառայությունների մատուցում:

16.1.34.11. Տրանսպորտային ծառայությունների մատուցում՝ երկաթուղային տրանսպորտի միջոցով, սեփական լոկոմոտիվային հավաքակալանով վագոնների տրամադրմամբ-հավաքմամբ:

16.1.34.12. Չափազիտական ապահովման ծառայությունների մատուցում:

16.1.34.13. Ածխաջրածնային հումքի և նրա վերանշակման արադրանքների արտադրման իրացման համար միջնորդական ծառայությունների մատուցում:

16.1.35. «Գազպրոմ» ՉԲԸ Վարչության նախագահի կողմից որոշում է ընդունվել կնքելու ֆինանսական ծառայությունների մատուցման պայմանագիր Յայաստանի Հանրապետության սահմանների դուրս գրանցված միջազգային վարկային կազմակերպության (բանկի) հետ՝ «Գազպրոմ» ՉԲԸ, Գազպրոմ Խմբի ընկերություններին ֆինանսավորում (վարկ) տրամադրելու նպատակով:

16.1.36. Կետը հանվել է:

16.2. Գնումների կառավարման կենտրոնական մարմինն իրավունք ունի իրականացնել «Գազպրոմ» ՉԲԸ և Գազպրոմ Խմբի ընկերությունների կողմից միակ

մատակարարի (կապալառու, կատարող) հետ կնքվող պայմանագրերի գների ձևավորման կարգի և հիմնավորվածության վերլուծություն:

16.3. Գազպրոմ Խմբի ընկերությունների կողմից հաշվետու ժամանակաշրջանի արդյունքերով միակ մատակարարից (կապալառու, կատարող) իրականացվող գնումների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը ներկայացվում է Դեպարտամենտ: Տեղեկատվության ներկայացման բովանդակությունը, ձևը և կարգը սահմանվում են Դեպարտամենտի կողմից:

16.4. Գնումների տեղեկատվական համակարգում միակ մատակարարից (կապալառու, կատարող) իրականացվող գնումների վերաբերյալ տեղեկատվության տեղադրումը իրականացվում է Պատվիրատուի կողմից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին համապատասխան: Միակ մատակարարից (կապալառու, կատարող) իրականացվող գնումների իրականացման դեպքում չի պահանջվում արձանագրությունների ձևակերպում:

17. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՓՈՓՈԽՈՒՄՆԵՐԻ, ԼՐԱՑՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԼՈՒԾՄԱՆ ԱՌԱՆՁՆԱԶՍԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

17.1. Պայմանագրի կողմերը իրավունք ունեն գնման արդյունքներով կնքված պայմանագրում կատարել փոփոխություններ և (կամ) լրացումներ (այսուհետ՝ Պայմանագրի փոփոխություններ և լրացումներ), ինչպես նաև օրենսդրությամբ և գնման արդյունքներով կնքված պայմանագրով սահմանված կարգով և հիմքերով լուծել այդ պայմանագիրը:

17.2. Պայմանագրով գնվող ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ծավալի, գնի փոփոխությունները և պարտավորությունների կատարման ժամկետը, պայմանները, որոնք ազդում են կամ կարող են ազդել պայմանագրի նշված դրույթների վրա, ինչպես նաև պայմանագրի լուծումը ենթակա են Գազպրոմ Խմբի գնումների կառավարման կենտրոնական մարմնի հետ նախնական պարտադիր համաձայնեցման:

18. ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

18.1. Յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու Պատվիրատուի, Հանձնաժողովի, Կազմակերպչի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

18.2. Պատվիրատուի, Հանձնաժողովի, Կազմակերպչի գործողությունների (անգործության) և որոշումների բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ բաժնով սահմանված կարգով: